



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

(2004 թ. - 2005 թ. I կիսամյակ)

Ք. ԵՐԵՎԱՆ, 2006 Թ.

... Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացման հաջողությունը մեծապես կախված կլինի այն հանգամանքից, թե ինչպիսի հասարակական ընկալում կձևավորվի կառավարության կողմից իրականացվելիք ծրագրի նպատակների, ինչպես նաև այդ նպատակներին հասնելու համար ընտրված միջոցառումների վերաբերյալ: Մենք մտադիր ենք ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում աջակցել բոլոր նրանց, ովքեր իրենց սեփական նախաձեռնություններով կնպաստեն գործընթացին: Հատկապես ակնկալում ենք, որ կխորացվեն գործընկերային հարաբերությունները ոչ կառավարական հատվածի՝ հասարակական կազմակերպությունների, մասնավոր հատվածի ներկայացուցիչների, ինչպես նաև միջազգային աջակցող կազմակերպությունների հետ:

Վերջին տարիներին մենք զգալի հաջողություններ ունենք տնտեսական կյանքում: Հայաստանի տնտեսությունը դառնում է միջազգայնորեն մրցունակ, և մենք կարող ենք ակնկալել, որ այդ ձեռքբերումներն ու հաջողությունները երկարաժամկետ հատվածում ուղղակի դրական ազդեցություն են թողնելու մեր քաղաքացիների բարեկեցության բարձրացման վրա:

Միաժամանակ, դեռևս մեծ է այն մարդկանց թիվը, ովքեր առայժմ ներգրավված չեն նշված տնտեսական զարգացումների արդյունքներից օգտվողների թվում և ունեն պետության սոցիալական աջակցության կարիքը, ինչը հաստատում է պետության կողմից իրականացվող սոցիալական և տնտեսական ծրագրերի հասցեականությունը և նպատակայնությունը մեծացնելու անհրաժեշտությունը:

Նշված հիմնախնդիրը լուծելու ուղղությամբ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը նախատեսում է իրականացնել տնտեսական, սոցիալական և կառավարման ոլորտի համապարփակ ծրագրեր: Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի նպատակներին հասնելու ճանապարհին կառավարության համար հավասարապես կարևոր են լինելու ինչպես առկա ներքին ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը, այնպես էլ միջազգային օժանդակության ներգրավումը:

Մենք պատրաստ ենք լինելու լսել բոլոր կարծիքները նաև ծրագրի իրականացման ընթացքում և համապատասխանաբար ճշգրտել մեր գործողությունները այն պահին, երբ դրա կարիքը կառաջանա:

**ԱՀՌԾ շնորհանդեսի կապակցությամբ
◀◀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի խոսքից**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան.....	9
Աղքատության և անհավասարության կրճատման ԱՅՈՒՆ նպատակները և 2001-2004 թվականների հիմնական զարգացումները.....	13
Աղքատության և անհավասարության ընդհանուր պատկերը.....	13
Աղքատությունը քաղաքային և գյուղական բնակավայրերում և մարզային կտրվածքով.....	15
Խոցելի սոցիալական խմբերի աղքատության բնութագրերը 2003-2004 թթ.....	18
Աղքատության հաղթահարման ռազմավարություն.....	20
Տնտեսական աճի ապահովում և ինստիտուցիոնալ բարեփոխումներ.....	20
Մակրոտնտեսական հիմնական զարգացումները 2004 թ. և զարգացման միտումները 2005 թ. առաջին կիսամյակում.....	20
Գործարար միջավայր.....	25
Հանրային կառավարման համակարգ.....	28
Հարկային և մաքսային վարչարարություն.....	29
Աղքատության հաղթահարմանն ուղղված քաղաքականությունն առանձին ոլորտներում.....	30
Սոցիալական պաշտպանության համակարգ.....	30
Առողջապահություն.....	40
Կրթություն.....	45
Ենթակառուցվածքներ.....	51
Գյուղատնտեսություն.....	56
Բնապահպանություն.....	64
Բյուջետային շրջանակը և պետական ծախսերի քաղաքականությունը.....	68
2004 թ. հարկաբյուջետային զարգացումները և 2005 թ. բյուջետային ծրագիրը.....	68
Աղքատության հաղթահարման ռազմավարությունը և պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման գործընթացը.....	71
ԱՅՈՒՆ իրականացման գործընթացում մասնակցության ապահովման ուղղությամբ իրականացված քայլերը.....	75
ԱՅՈՒՆ և երկրին դոնորների օժանդակության ծրագրերի համաձայնեցումը.....	80

**ԱՅՈՒՑ մոնիտորինգի և գնահատման համակարգի մշակման
և ներդրման ընթացքը.....82**

ԱՅՈՒՑ ցուցանիշների հնարավոր փոփոխություններ և ճշգրտումներ.....86

Աղյուսակներ

Աղյուսակ 1. Աղքատության հիմնական ցուցանիշները ԱՅՈՒՑ
նպատակային ցուցանիշների համեմատ 1999-2004 թթ..... 13

Աղյուսակ 2. Տնային տնտեսությունների դրամական
եկամուտների կառուցվածքը 1999-2004 թթ..... 14

Աղյուսակ 3. Քաղաքային և գյուղական աղքատությունը
1999-2004 թվականներին..... 16

Աղյուսակ 4. Աղքատությունը մարզային կտրվածքով 2004 թվականին..... 17

Աղյուսակ 5. Բնակչության խոցելի սոցիալական խմբերի
աղքատության մակարդակը 2003-2004 թվականներին..... 18

Աղյուսակ 6. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ՝
փաստացի արդյունքները ծրագրային համեմատ..... 21

Աղյուսակ 8. Համախմբված բյուջեի ծախսերը սոցիալական
ապահովության և սոցիալական ապահովագրության
բնագավառում 2003-2005 թթ..... 31

Աղյուսակ 9. Ընտանեկան նպաստների գծով ծախսերը 2003-2005 թթ..... 32

Աղյուսակ 10. Աղքատության մակարդակի փոփոխությունը սոցիալական
աջակցության և սոցիալական տրանսֆերտների
չվճարման դեպքում..... 33

Աղյուսակ 11. Կենսաթոշակների գծով համախմբված բյուջեի
ծախսերը 2003-2005 թթ..... 34

Աղյուսակ 12. Պետական բյուջեի ծախսերը առողջապահության
բնագավառում 2003-2005 թթ..... 41

Աղյուսակ 13. Համախմբված բյուջեի ծախսերը կրթության
բնագավառում 2003-2005 թթ..... 46

Աղյուսակ 14. Խմելու ջրի մատչելիությունը..... 52

Աղյուսակ 15. Գյուղատնտեսության համախառն արտադրանքի
շարժը 2001-2004 թթ..... 56

Աղյուսակ 16. Համախմբված բյուջեի շրջանակը 2002-2005 թթ.
(հաշվեգրման սկզբունքով)..... 68

Աղյուսակ 17. Պետական բյուջեի շրջանակը 2005-2008 թթ.՝
ԱՅՈՒՑ և 2006-2008 թթ. ՄԺԾԾ կանխատեսումներ..... 72

Աղյուսակ 18. Պետական բյուջեի սոցիալական ծախսերը՝
ԱՅՈՒՑ և 2006-2008 թթ. ՄԺԾԾ կանխատեսումներ..... 74

Աղյուսակ 19. ԱՅՈՒՆ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի ամփոփ
վիճակագրություն.....83

Աղյուսակ 20. ԱՅՈՒՆ իրականացման 2004 թ. առաջընթացի գնահատականը
ըստ ԱՅՈՒՆ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի
հայեցակարգով նախատեսված մեթոդաբանության.....84

Աղյուսակ 21. ԱՅՈՒՆ միջոցառումների իրականացման վերաբերյալ
տեղեկատվության ներկայացման ձևաչափ.....85

Գծանկարներ

Գծանկար 1. Աղքատության կրճատման առաջընթացը 2004 թ.....10

Գծանկար 2. ՀՆԱ կառուցվածքն՝ ըստ հիմնական ճյուղերի (տոկոս).....22

Գծանկար 3. Աղքատության մակարդակի վերանայված
կանխատեսում 2004-2015 թթ.....88

Հավելվածներ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Աղքատության հաղթահարման առաջընթացը. ամփոփ
ցուցանիշներ.....90

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Համախառն ներքին արդյունքն՝ ըստ հիմնական ճյուղերի.....91

ՀԱՎԵԼՎԱԾ 3. Համախառն ներքին արդյունքի օգտագործումը.....92

ՀԱՎԵԼՎԱԾ 4. Համախմբված բյուջեի գործառնությունները
(հաշվեգրման սկզբունքով).....93

ՀԱՎԵԼՎԱԾ 5. Համախմբված բյուջեի գործառնություններ. արտաքին
ֆինանսավորման պահանջը.....94

ՀԱՎԵԼՎԱԾ 6. Համախմբված բյուջեի ծախսերը՝ ըստ գործառական
դասակարգման հիմնական խմբերի (հաշվեգրման սկզբունքով).....95

ՀԱՎԵԼՎԱԾ 7. Համախմբված բյուջեի սոցիալական ծախսեր
(հաշվեգրման սկզբունքով).....96

ՀԱՎԵԼՎԱԾ 8. Վճարային հաշվեկշիռ.....97

ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԱՅՈՒՆ մոնիտորինգի համակարգում ընդգրկված
ցուցանիշների 2001-2004թթ. փաստացի տվյալները.....98

ՀԱՎԵԼՎԱԾ 10. Աղքատության հաղթահարման ռազմավարական
ծրագրի վերանայման վերաբերյալ ԱՅՈՒՆ աշխատանքային
խմբում ընդգրկված ոչ կառավարական հատվածից
ստացված առաջարկությունները.....106

ՀԱՎԵԼՎԱԾ 11. ՀՀ ԱՎԾ-ի կողմից կիրառված աղքատության
մակարդակի գնահատման նոր մեթոդաբանության
առանձնահատկությունները.....111

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱՀ	ավելացված արժեքի հարկ
ԱԿՏԱ	Աղքատության կրճատման և տնտեսական աճի ծրագիր
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՀՈԾ	Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ԱՊՀ	Անկախ Պետությունների Համագործակցություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԶԼՄ	զանգվածային լրատվության միջոցներ
ԿԿաԼ	Կիլոկալորիա
Կմ	Կիլոմետր
հազ.	հազար
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԶՆ	Հազարամյակի զարգացման նպատակներ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԱԺ	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով
ՀՀ ԱՍՀՆ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՀՀ ԱԿԾ	Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն
ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
ՀՀ ՍԱՊՀ	Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ
ՀՆԱ	համախառն ներքին արդյունք
ՁԻԱՀ	ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՄԱԾԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԶԸ	Միջազգային զարգացման ընկերակցություն
ՄԹ ՄԶՆ	Միացյալ Թագավորության միջազգային զարգացման նախարարություն
ՄԺԾԾ	միջին ժամկետ ծախսերի ծրագիր
ՄԻՎՎ	մարդու իմունային անբավարարության վիրուս
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ
ՍԳԻ	սպառողական զների ինդեքս
ՓԲԸ	փակ բաժնետիրական ընկերություն

Առաջաբան


1. 2003 թ. օգոստոսին ՀՀ կառավարությունը հաստատել է «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը» և ձեռնամուխ եղել դրա իրականացմանը: Ծրագիրը հաստատելուց հետո, 2004 թ. հունվարին, կառավարությունը հաստատել է նաև ԱՀՌԾ կատարումն ապահովող 2004-2006 թթ. միջոցառումների ցանկը՝ միաժամանակ, սահմանելով նաև այդ միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ ըստ եռամսյակների պետական կառավարման մարմինների կողմից տեղեկատվության ներկայացման մեխանիզմը: Ծրագրի մշակումն ընթացել է բոլոր շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավմամբ (պետական կառավարման մարմիններ, մասնավոր հատված, քաղաքացիական հասարակություն, դոնոր համայնք) և կառավարությունն այժմ ջանքեր է գործադրում ծրագրի իրականացման գործընթացին ևս լայն շրջանակների ներգրավում ապահովելու ուղղությամբ:
2. Սույն հաշվետվությունը ներկայացնում է ԱՀՌԾ իրականացման ուղղությամբ 2004 թ. և 2005 թ. առաջին կեսում¹ կառավարության կատարած աշխատանքներն ու դրանց արդյունքների վերլուծությունը:
3. Հաշվետվության առաջին մասում ներկայացվում է աղքատության և անհավասարության ԱՀՌԾ նպատակների և փաստացի արդյունքների համեմատական վերլուծությունը՝ հատուկ առանձնացնելով տարածքային կտրվածքով և խոցելի սոցիալական խմբերում առկա խնդիրները:
4. Հաշվետվության երկրորդ հատվածն անդրադառնում է մակրոտնտեսական շրջանակին և ինստիտուցիոնալ բարեփոխումներին, ինչպես նաև առանձին ոլորտներում իրականացված քաղաքականություններին՝ ներկայացնելով ձեռքբերումներն ու բացահայտելով այդ բնագավառներում առկա խնդիրները: Մասնավորապես, ներկայացված է կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ենթակառուցվածքների, ինչպես նաև գյուղատնտեսության բնագավառներում իրականացվող պետական քաղաքականության ուղղվածության և միջոցառումների, ինչպես նաև զարգացումների ընթացքի և ձեռք բերված արդյունքների վերլուծություն:
5. Հաշվետվությունը հատուկ կենտրոնանում է նաև պետական ֆինանսներին վերաբերող հարցերին՝ մասնավորապես անդրադառնալով միջնաժամկետ հատվածում կառավարության ռազմավարությանը:
6. «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» իրականացման հաջող ընթացքը մեծապես պայմանավորված է ինչպես քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի, այնպես էլ դոնոր համայնքի գործընթացի ներգրավմամբ և ակտիվ մասնակցությամբ: Այս հարցերի ուղղությամբ առաջընթացը ներկայացվում է հաշվետվության հաջորդ երկու բաժիններում:
7. Ծրագրի արդյունքների գնահատման և հետագայում ծրագրի վերանայումն առավել արդյունավետ դարձնելու համատեքստում առանցքային դերակատարում ունի

¹ 2005 թ. իրականացված աշխատանքները ներկայացված են հիմնականում պետական ծախսային քաղաքականության կտրվածքով:

ծրագրի մոնիտորինգի համակարգի մշակումն ու ներդրումը: Անցած մեկ տարվա ընթացքում կառավարության կողմից այս ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք քայլեր և սույն հաշվետվությամբ ներկայացվում են նաև դրանց արդյունքները:

8. Ծրագրի իրականացման առաջին տարիների արդյունքներն արդեն վկայում են ծրագրով առանձնացված գերակա ուղղություններով նպատակասլաց քաղաքականություն վարելու կառավարության պատրաստակամության և ձեռքբերումների մասին՝ միաժամանակ, բացահայտելով որոշ հիմնախնդիրներ, որոնց լուծումը պահանջելու է ջանքերի էլ ավելի կենտրոնացում:

Գծանկար 1. Աղքատության կրճատման առաջընթացը 2004 թ.



9. 2003 և 2004 թթ. զարգացումները բավականին հուսադրող են և դրանց արդյունքում ձևավորված իրավիճակն, ընդհանուր առմամբ, ավելի բարենպաստ է, քան նախատեսվում էր ԱՅՈԾ զարգացման սցենարով: Արդյունքում, 2004 թ. երկրում աղքատությունն ու անհավասարությունը կրճատվել են ավելի արագ տեմպերով, քան ծրագրվում էր (տե՛ս Գծանկար 1):
10. Այդուհանդերձ, 2003 և 2004 թթ. աղքատության և անհավասարության կրճատման դրական միտումներին զուգահեռ, բացահայտվել են որոշ խնդիրներ և կառավարությունը մտադիր է իր առաջիկա ծրագրերում կատարել համապատասխան ճշգրտումներ՝ միտված այդ խնդիրների լուծմանը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է տարածքային կտրվածքով զարգացման անհամասնություններին, ինչպես նաև խոցելի սոցիալական խմբերի բարեկեցության հարցերին:

11. Հաշվետվությունը առաջ է քաշում նաև ԱՅՈՒՄ շրջանակներում իրականացվող առանձին ոլորտային քաղաքականությունների վերանայման խնդիրներ, մասնավորապես.
12. Չնայած նրան, որ ԱՅՈՒՄ իրականացման առաջին տարիների ընթացքում **սոցիալական ոլորտում պետական բյուջեի ծախսերը** անվանական արտահայտությամբ առաջանցիկ տեսչերով են աճել և նույնիսկ գերազանցել են ԱՅՈՒՄ-ով սահմանված ցուցանիշները, այնուամենայնիվ հնարավոր չի եղել ապահովել ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերակցության տեսքով ծրագրային ցուցանիշի մակարդակը՝ 2004 թ. սոցիալական ծախսեր - ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 8.35 տոկոս՝ ծրագրված 9.3 տոկոսի փոխարեն: Ելնելով նշվածից, կառավարությունը առաջիկայում անհրաժեշտ քայլեր պետք է ձեռնարկի նշված խզման վերացման ուղղությամբ:
13. Պետական ֆինանսական հնարավորությունների ընդլայնման տեսանկյունից հատկապես կարևորվում են **հարկային վարչարարությանն** առնչվող խնդիրները և այս առումով, ԱՅՈՒՄ իրականացման առաջին տարիների ընթացքում առաջացած ՀՆԱ-ի նկատմամբ համախմբված բյուջեի հարկային եկամուտների հարաբերակցության փաստացի և ծրագրային ցուցանիշների միջև խզումը վերացնելու նպատակով հարկ կլիմի էլ ավելի կենտրոնացնել կառավարության ջանքերն այս ուղղությամբ:
14. Չնայած նրան, որ **խմելու ջրի մատակարարման ոլորտում** 2004 թ.-ի ընթացքում որոշակի առաջընթաց է արձանագրվել բերովի ջրից օգտվող տնային տնտեսությունների տեսակարար կշռի նվազեցման ուղղությամբ, այնուամենայնիվ այդ խնդիրը շարունակում է մնալ հրատապ լուծում պահանջող խնդիրների շարքում և այդ առումով հարկ կլիմի շարունակել վերջինիս լուծմանը միտված աշխատանքները, անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ կատարելով ԱՅՈՒՄ-ում:
15. 2004թ.-ին իրականացված տնային տնտեսությունների հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ քաղաքային բնակավայրերի տնային տնտեսությունների շուրջ 5.5 տոկոսը ձմռանը կացարանը չի ջեռուցել: Խնդիրը սրվում է նաև այն իրողությունից ելնելով, համաձայն որի ձմռանը չջեռուցած կացարաններում բնակվող տնային տնտեսությունների անդամների հիվանդանալու հաճախականությունը շուրջ երկու անգամ բարձր է հանրապետության միջին մակարդակից: Ընդ որում աղքատ տնային տնտեսությունների մոտ կացարանը չջեռուցածների տեսակարար կշիռը շուրջ երկու անգամ ավելի բարձր է², ինչը վկայում է այն մասին, որ կացարանի չջեռուցման հիմնական դրդապատճառը վերջինիս ոչ մատչելի լինելն է աղքատ ընտանիքների համար: Ելնելով նշված իրողությունից հարկ կլիմի ԱՅՈՒՄ առաջիկա վերանայման ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել **ջեռուցման խնդիրներին՝ հատկապես քաղաքային բնակավայրերում:**
16. **Գյուղատնտեսության ոլորտում** շարունակում է չլուծված մնալ գյուղատնտեսության ապահովագրման և գյուղացիական տնտեսությունների համար վարկային ռեսուրսների ոչ բավարար մատչելիության խնդիրը, ինչի լուծմանը հարկ կլիմի ուղղել կառավարության ջանքերը ԱՅՈՒՄ առաջիկա վերանայման ժամանակ: Միա-

² ՄԱԿ-ի զարգացման ծրագրի «Մարդկային աղքատությունն ու աղքատանետ քաղաքականությունը Հայաստանում» գեկույց:

ժամանակ, հարկ կլինի անդրադառնալ նաև աղքատության վրա հողերի խոշորացման հնարավոր բացասական հետևանքների խնդրին:

17. **ԱՅՌԾ մոնիտորինգի ցուցանիշների** կտրվածով ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված 2001-2004թթ. տեղեկատվության ամփոփման ընթացքում առաջ են եկել որոշակի խնդիրներ, ինչը հնարավորություն չի տվել ամբողջությամբ հավաքագրել ԱՅՌԾ մոնիտորինգի ցուցանիշների 2001-2004 թթ. վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև բոլոր ցուցանիշների գծով սահմանել առաջիկա տարիների համար նպատակային արժեքները: Այդ նպատակով ԱՅՌԾ առաջիկա վերանայումից հետո հարկավոր կլինի ճշգրտումներ կատարել նաև ԱՅՌԾ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի հայեցակարգում, որոնք կբխեն ԱՅՌԾ վերանայման արդյունքում առաջ եկած նոր պահանջներից, ինչպես նաև ցուցանիշների ամփոփման ընթացքում ծագած խնդիրներից:
18. ԱՅՌԾ առաջիկա վերանայման ժամանակ կառավարությունը չի սահմանափակվելու միայն վերը նշված խնդիրների ուղղությամբ ճշգրտումներ կատարելով: Անդրադարձ է կատարվելու ինչպես սույն հաշվետվությամբ բարձրացված, այնպես էլ ոչ կառավարական հատվածի կողմից առաջադրած խնդիրներին:
19. Միաժամանակ Ծրագրի վերանայման ժամանակ կքննարկվի նաև աղքատության գնահատման համար հիմք ծառայող աղքատության բացարձակ և պարենային գծերի փոփոխման հարցը, ելնելով Ազգային վիճակագրական ծառայության կողմից 2004թ. տնային տնտեսությունների հետազոտության ժամանակ կիրառված աղքատության գնահատման նոր մեթոդաբանությունից:

Աղքատության և անհավասարության կրճատման ԱՅՈՒՆ նպատակները և 2001-2004 թվականների հիմնական զարգացումները

Աղքատության և անհավասարության ընդհանուր պատկերը

20. ԱՅՈՒՆ գործունեության առաջին տարիների արդյունքներն ակնհայտորեն արձանագրեցին ինչպես աղքատ բնակչության, այնպես էլ շատ աղքատ բնակչության թվաքանակի էական կրճատում (տե՛ս Աղյուսակ 1):

**Աղյուսակ 1. Աղքատության հիմնական ցուցանիշները ԱՅՈՒՆ նպատակային
ցուցանիշների համեմատ 1999-2004 թթ.**

	1999	2001	2002	2003			2004		
	Փաստացի			փաստ.	ԱՅՈՒՆ	Փաստ. / ԱՅՈՒՆ, %	փաստ.	ԱՅՈՒՆ	Փաստ. / ԱՅՈՒՆ, %
ՀՆԱ՝ 1 շնչի հաշվով, հազար դրամ	305.8	365.8	424.2	505.9	489.0	103.4	590.1	533.0	110.7
ՀՆԱ՝ 1 շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	571.4	659.1	739.9	874.1	780.0	112.1	1106.1	904	122.4
Աղքատների թվաքանակը, տոկոս՝ բնակչության թվաքանակի նկատմամբ	55.1	50.9	49.7	42.9	46.2	92.8	39.0	43.7	89.2
այդ թվում՝ շատ աղքատների թվաքանակը, տոկոս՝ բնակչության թվաքանակի նկատմամբ	22.9	16.0	13.1	7.4	15.2	48.6	7.2	14.7	49.0
Եկամուտների համակենտրոնացման Ջինիի գործակիցը	0.570	0.528	0.449	0.434	0.51	85.1	0.387	0.498	77.7
20 % ամենաաղքատ բնակչության եկամուտների հարաբերակցությունը, 20 % ամենահարուստների եկամուտների նկատմամբ, տոկոս	3.6	5.8	6.8	7.5	6.9	108.7	9.4	7.4	127.0
Հուշագրային հոդված									
Մշտական բնակչության թվաքանակը (տարեկերջին), հազար մարդ	3 215.3	3 212.9	3 210.3	3212.2	3215.8		

Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, ԱՅՈՒՆ կանխատեսումներ:

21. 2001-2004թթ. ընթացքում աղքատության և անհավասարության մնան տեմպերով կրճատումը, ինչպես կանխատեսում էր ԱՅՈՒՆ-ն, հիմնականում պայմանավորված է եղել աղքատ բնակչության աշխատանքային եկամուտների և սոցիալական տրանսֆերտների առաջանցիկ աճով: 2004թ. ընթացքում արձանագրված արդյունքները վկայում են, որ այդ ընթացքում հաջողվել է էականորեն գերազանցել գրեթե բոլոր հիմնական ցուցանիշների գծով 2004 թ. համար ԱՅՈՒՆ-ով ամրագրված նպատակադրումները: Հարկ է նշել, որ աղքատության և անհավասարության կրճատման այն արդյունքները, որոնց հաջողվել է հասնել 2004 թ., համապատասխանում են ԱՅՈՒՆ ավելի հեռավոր ժամանակահատվածի նպատակադրումներին: Մասնավորապես՝

1. ՀՆԱ մեկ շնչի հաշվով 2004 թ. փաստացի ցուցանիշը համապատասխանում է ԱՅԴԹ 2007 թ. կանխատեսումներին:
 2. Աղքատ բնակչության 39 տոկոս ցուցանիշին նախատեսվում էր հասնել 2006 թ. ընթացքում:
 3. Շատ աղքատ բնակչության 7.2 տոկոս ցուցանիշին նախատեսվում էր հասնել միայն 2013 թ.: Այսպիսով, ԱՅԴԹ իրականացման առաջին տարիների ընթացքում տեղի է ունեցել շատ աղքատ բնակչության քանակի աննախադեպ կրճատում:
 4. Ընդհանուր եկամուտների, ինչպես նաև սպառման ագրեգատի համակենտրոնացման Ձիմիի գործակցի 2004 թ. մեծությունները (համապատասխանաբար 0.387 և 0.352) վկայում են անհավասարության աննախադեպ կրճատման մասին: 2004 թ. տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքում ստացված ծախսերի համակենտրոնացման Ձիմիի գործակցի մեծությունը համապատասխանում է Խորհրդային Միության վերջին տարիների համապատասխան ցուցանիշի մակարդակին, ինչպես նաև զարգացած եվրոպական այն երկրներին, որոնք բնութագրվում են անհավասարության ցածր մակարդակներով: Ինչ վերաբերում է ընթացիկ եկամուտների համակենտրոնացման Ձիմիի գործակցին, ապա 2004 թ. գրանցված արդյունքը գերազանցում է անգամ ԱՅԴԹ-ով 2015 թ. համար սահմանված նպատակադրումը:
22. Սույն հաշվետվության մեջ օգտագործվել են աղքատության գնահատման հին մեթոդաբանությամբ հաշվարկված ցուցանիշները, ինչը պայմանավորված է եղել ԱՅԴԹ նպատակադրումների հետ աղքատության ցուցանիշների համադրելիությունն ապահովելու անհրաժեշտությամբ: 2006 թ. փետրվարին ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված 2004 թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքները ներկայացվել են աղքատության գնահատման նոր մեթոդաբանությամբ (տես՝ Հավելված 11), ինչը հիմք է ծառայելու ԱՅԴԹ առաջիկա վերանայման ժամանակ աղքատության ցուցանիշների գծով նպատակադրումների սահմանման համար:

Աղյուսակ 2. Տնային տնտեսությունների դրամական եկամուտների կառուցվածքը 1999-2004 թթ.

Ցուցանիշներ	1999	2001	2002	2003	2004
<i>Տոկոսներով ընդհանուր դրամական եկմուտների նկատմամբ</i>	100	100	100	100	100
Աշխատանքային եկամուտներ	35.19	42.33	53.21	55.2	56.5
Սոցիալական տրանսֆերտներ	9.33	9.61	11.53	9.91	13.58
Գյուղմթերքի վաճառքից ստացված եկամուտներ	32.11	15.64	6.4	12.69	11.09
Տրանսֆերտներ	19.32	18.55	18.7	15.86	12.57
Այլ, այդ թվում՝ սեփականությունից, եկամուտներ	4.05	13.87	10.16	6.34	6.26

Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն:

23. Աղյուսակ 2-ից երևում է, որ 2003-2004 թթ. աղքատության կրճատման հիմնական գործոն են շարունակել մնալ տնտեսական աճով պայմանավորված աղքատ բնակչության աշխատանքային եկամուտների առաջանցիկ աճը, ինչպես նաև սոցիալա-

կան տրանսֆերտների աճը, որոնք պայմանավորված են ԱՅՈՒՆ-ով նախատեսված աղքատամետ սոցիալական քաղաքականությամբ: Այսպես, 2002 թ. համեմատ 2004 թ. աշխատանքային եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր դրամական եկամուտների կառուցվածքում ավելացել է մոտ 3.3 տոկոսային կետով, իսկ սոցիալական տրանսֆերտները՝ շուրջ 2 տոկոսային կետով: Այսպիսով կարելի է եզրակացնել, որ 2003-2004 թթ. պահպանվել է տնտեսական աճի աղքատամետ բնույթը, ինչն արտահայտվել է ինչպես եկամուտների առաջնային բաշխման ժամանակ, այնպես էլ եկամուտների վերաբաշխման ժամանակ:

24. 2005 թ. առաջին կիսամյակի արդյունքները (10.2 տոկոս տնտեսական աճը, բնակչության եկամուտների առաջանցիկ աճը, զբաղվածության հետագա կայունացումը և այլն) թույլ են տալիս ենթադրել, որ 2005 թ. կպահպանվեն վերջին տարիների ընթացքում արձանագրված աղքատության և անհավասարության կրճատման միտումները: Այդ առումով, հարկ է նշել, որ ելնելով վերջին տարիների ընթացքում արձանագրված աղքատության և անհավասարության առաջանցիկ տեմպերով կրճատման իրողությունից, ԱՅՈՒՆ առաջիկա վերանայման ընթացքում անհրաժեշտ կլինի էականորեն վերանայել ԱՅՈՒՆ-ով սահմանված նպատակադրումները:

Աղքատությունը քաղաքային և գյուղական բնակավայրերում և մարզային կտրվածքով

25. 2004 թ. աղքատության կրճատում տեղի է ունեցել թե՛ քաղաքային, և թե՛ գյուղական բնակավայրերում: Քաղաքային բնակավայրերում 2004թ. աղքատության մակարդակը կրճատվել է 4.3 տոկոսով, կամ 1.7 տոկոսային կետով և կազմել է 38 տոկոս: Ի տարբերություն 2003 թ., 2004 թ. քաղաքային բնակավայրերում աղքատության կրճատում տեղի է ունեցել ոչ ի հաշիվ Երևան քաղաքի՝ Երևան քաղաքում 2004 թ. աղքատության մակարդակը փոփոխություն գրեթե չի կրել և կազմել է 29.4 տոկոսով՝ 2003 թ. 29.6 տոկոսի դիմաց: Քաղաքային աղքատության կրճատումը տեղի է ունեցել ի հաշիվ այլ քաղաքներում աղքատության մակարդակի 3 տոկոսային կետով կրճատման: Վերջինիս արդյունքում նվազել է աղքատության մակարդակների խզումը³ Երևանի և այլ քաղաքների միջև: Եթե 2003 թ. այն կազմում էր 40.7 տոկոս, ապա 2004 թ.՝ արդեն 37.3 տոկոս: Չնայած նրան, որ 2004 թ. աղքատության մակարդակների խզումը Երևանի և այլ քաղաքների միջև, որոշակի չափով մեղմվել է, այն դեռևս շարունակում է բավականին մեծ մնալ և այդ առումով կառավարությունը ԱՅՈՒՆ առաջիկա վերանայման ժամանակ տարածքային քաղաքականության համապատասխան միջոցառումներ կնախատեսի ծրագրում:
26. Ինչ վերաբերում է գյուղական աղքատությանը, ապա, չնայած 2001-2003 թթ. արձանագրված գյուղական աղքատության կրճատման տեմպերի դանդաղեցմանը (նշված ժամանակահատվածում աղքատությունը կրճատվել է 2.5 տոկոսով կամ

³ Այսինքն՝ քանի տոկոսով է աղքատության մակարդակը Երևանում ցածր հանրապետության այլ քաղաքներում աղքատության մակարդակի համեմատ:

1.2 տոկոսային կետով), որի արդյունքում 2003 թ., առաջին անգամ Հայաստանի ընտրանքային հետազոտությունների պատմության ընթացքում, գյուղական աղքատությունը գերազանցել էր քաղաքային աղքատության մակարդակը, իսկ խզվածությունը կազմել էր 19.6 տոկոս, ապա 2004 թ. էական առաջընթաց է գրանցվել գյուղական աղքատության հաղթահարման ուղղությամբ: Այսպես, 2004 թ. տնային տնտեսությունների հետազոտության արդյունքներով գյուղական աղքատությունը նախորդ տարվա համեմատ նվազել է շուրջ 14.3 տոկոսով, կամ 6.8 տոկոսային կետով և կազմել է 40.7 տոկոս: Արդյունքում 2004 թ. գյուղական և քաղաքային աղքատության մակարդակները գրեթե հավասարվել են, իսկ վերջիններիս միջև խզվածությունը կազմել է ընդամենը 7 տոկոս: 2004 թ. գյուղական աղքատության նման տեմպերով կրճատումը հիմնականում պայմանավորված է եղել ինչպես գյուղական բնակչության եկամուտների ավելացմամբ, այնպես էլ եկամուտների բաշխման անհավասարության մեղմացմամբ (գյուղական բնակավայրերում Ջինի գործակիցը ըստ եկամուտների 2004 թ. նվազել է 1.3 տոկոսային կետով):

Աղյուսակ 3. Քաղաքային և գյուղական աղքատությունը 1999-2004 թթ.-ին*

	1999	2001	2002	2003	2004	2004/ 2001, %
Աղքատների գումարային թիվը (աղքատ և շատ աղքատ), տոկոս	55.1	50.9	49.7	42.9	39.0	76.6
այդ թվում՝ քաղաքային բնակավայրեր	58.3	51.9	52.6	39.7	38.0	73.2
այդ թվում՝ երևան	55.2	46.7	43.8	29.6	29.4	63.0
այլ քաղաքներ	61.7	56.7	61.9	49.9	46.9	82.7
գյուղական բնակավայրեր	50.8	48.7	45.3	47.5	40.7	83.6
այդ թվում՝ շատ աղքատ բնակչության թիվը, տոկոս	22.9	16.0	13.1	7.4	7.2	45.0
այդ թվում՝ քաղաքային բնակավայրեր	23.2	18.3	15.0	7.9	8.6	47.0
գյուղական բնակավայրեր	22.6	11.3	10.2	6.8	5.0	44.2
Բնակչության միջին ամսական դրամական եկամուտները գյուղական բնակավայրերում, դրամ	8636	11843	7027	9960	11057	93.4
Բնակչության միջին ամսական դրամական եկամուտները քաղաքային բնակավայրերում, դրամ	7397	10913	11656	15647	16495	151.2
Գյուղական բնակչության միջին եկամուտներ, քաղաքային բնակչության եկամուտների նկատմամբ՝ տոկոս	116.8	108.5	60.3	63.7	67.0	
Աղքատության ընդհանուր գիծը, դրամ/ամիս	11735	12019	12261	12629	14595	121.4
Աղքատության պարենային գիծը, դրամ/ամիս	7194	7368	7516	7742	8954	121.5
Աղքատության խորություն, տոկոս	19.0	15.1	13.5	8.9	9.9	65.6
Աղքատության սրություն, տոկոս	9.0	6.1	5.2	2.8	3.5	57.4

* Հաշվարկները կատարված են բնակչության մեկ շնչի հաշվով: Աղբյուրը՝ 1998/99, 2001, 2002, 2003 և 2004 թթ. տնային տնտեսությունների հետազոտություններ:

27. Գյուղական և քաղաքային բնակավայրերի բնակչության դրամական եկամուտների միջև խզումը շարունակում է դեռևս բավականին մեծ մնալ՝ 2004 թ. այն կազմել է 33 տոկոս: Սակայն ամբողջական եկամուտների կտրվածքով գյուղական և քաղաքային բնակավայրերի բնակչության միջև խզումը 2004 թ. կազմել է ընդամենը 13 տոկոս, ինչը պայմանավորված է քաղաքային բնակչության համեմատ գյուղական բնակչության եկամուտների կառուցվածքում բավականին մեծ կշիռ կազմող (ամ-

բողջական եկամուտների շուրջ 27 տոկոսը) «սննդամթերքի սպառումը սեփական տնտեսությունից» եկամուտի հոդվածի առկայությամբ:

28. 2004 թ., ինչպես և նախորդ տարիներին, բնակչությունն ամենաաղքատն էր այն մարզերում, որտեղ գերակշռում էր գյուղական բնակչությունը և գյուղատնտեսության համար պայմաններն առավել անբարենպաստ էին: Առանձին քննարկման առարկա է շարունակում մնալ Շիրակի մարզում աղքատության համեմատաբար բարձր մակարդակը, այն դեռևս գրեթե կիսով չափ բարձր է հանրապետության միջին ցուցանիշից:
29. Չնայած ԱՅՈՒՆ-ում տարածքային կտրվածքով աղքատության նպատակային ցուցանիշներ նախատեսված չեն, այդուհանդերձ, ԱՅՈՒՆ վերանայման ժամանակ կառավարությունը կնախատեսի տարածքային քաղաքականության համապատասխան միջոցառումներ, որոնք նպատակաուղղված կլինեն հատկապես ամենաաղքատ մարզերի տնտեսական զարգացման արագացմանը և աղքատության առաջանցիկ կրճատմանը:

Աղյուսակ 4. Աղքատությունը մարզային կտրվածքով 2004 թ.-ին*

<i>Մարզեր</i>	<i>աղքատների տեսակարար կշիռը 2004 թ.</i>	<i>տեղը՝ ըստ աղքատության աստիճանի</i>
Շիրակ	58.0	1
Գեղարքունիք	51.6	2
Արագածոտն	47.8	3
Կոտայք	47.4	4
Արմավիր	46.8	5
Վայոց ձոր	38.3	6
Արարատ	36.7	7
Սյունիք	34.5	8
Լոռի	33	9
Տավուշ	26.7	11
ք. Երևան	29.4	10

* Մարզերը դասավորված են՝ ըստ աղքատության նվազման աստիճանի:
Աղբյուրը՝ 2004 թ. տնային տնտեսությունների հետազոտություններ:

խոցելի սոցիալական խմբերի աղքատության բնութագրերը 2003-2004 թթ.

30. Չնայած 2003-2004 թթ. աղքատության և անհավասարության կրճատմանը՝ աղքատությունը Հայաստանում շարունակում է մեծ տեսակարար կշիռ կազմել՝ երկրի բնակչության զրեթե 40 տոկոսը դեռևս աղքատ է: Աղքատության երևույթը առանձնահատուկ է դրսևորվում նաև խոցելի սոցիալական խմբերի առումով (տե՛ս Աղյուսակ 5):
31. Ինչպես երևում է Աղյուսակ 5-ից, բոլոր նշված խոցելի սոցիալական խմբերի համար, 2004 թ. տեղի է ունեցել աղքատության մակարդակի կրճատում: Ամենամեծ կրճատումը գրանցվել է միայնակ կենսաթոշակառուների խմբի համար, որոնց աղքատության մակարդակը 2004 թ. 2003-ի համեմատ կրճատվել է մոտ 23 տոկոսով: Ընդհանրապես նշված խմբերից միայնակ թոշակառուները միակ խումբն են, որոնց մոտ աղքատության մակարդակը զգալիորեն ցածր է աղքատության միջին հանրապետական մակարդակից՝ մոտ 2.7 անգամ: Միայնակ թոշակառուների աղքատության աստիճանի այդչափ կրճատումը հիմնականում պայմանավորված է ԱՅՈՒԹ-ով ամրագրված կենսաթոշակների առաջանցիկ աճի քաղաքականությամբ: 2004 թ. միջին ամսական կենսաթոշակի չափը կազմել է 8841 դրամ, որը մոտ 12 տոկոսով ավելի բարձր է ԱՅՈՒԹ-ով 2004 թ. համար սահմանված նպատակային ցուցանիշից:

Աղյուսակ 5. Բնակչության խոցելի սոցիալական խմբերի աղքատության մակարդակը 2003-2004 թթ.-ին*

	2003		2004		2004 / 2003, %
	տոկոս	շեղումը միջինից	տոկոս	շեղումը միջինից	
Գործազուրկի գլխավորությամբ տնային տնտեսություններ	48.9	114.0	48.1	123.3	98.4
Բազմանդամ (6 և ավելի) տնային տնտեսություններ	57.0	132.9	53.8	137.9	94.4
Կենսաթոշակառուներով տնային տնտեսություններ	46.8	109.1	41.9	107.4	89.5
Միայնակ կենսաթոշակառուներ	18.7	43.6	14.4	36.9	77.0
3 և ավելի (0-14 տարեկան) երեխաներ ունեցող տնային տնտեսություններ	66.1	154.1	61.0	156.4	92.3
Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններ	43.3	100.9	40.3	103.3	93.1
5 տարեկան և ցածր երեխաներ ունեցող տնային տնտեսություններ	53.9	125.6	52.7	135.1	97.8
<i>Հանրապետական միջինը</i>	42.9	100.0	39.0	100.0	90.9

* Հաշվարկները կատարված են բնակչության մեկ շնչի հաշվով:
 Աղբյուրը՝ 2003 և 2004 թթ. տնային տնտեսությունների հետազոտություններ:

32. Աղյուսակ 5-ից երևում է, որ թեև 2004թ. մնացած 6 խմբերում ևս աղքատության մակարդակը նվազել է, այնուամենայնիվ այդ խմբերում աղքատության մակարդակը շարունակում է բարձր մնալ աղքատության միջին հանրապետական մակարդակից, ընդ որում նշված զրեթե բոլոր խմբերում 2004 թ. աղքատության մակարդակի

շեղումը միջին մակարդակից մեծացել է, ինչը վկայում է այն մասին, որ այդ խմբերում խոցելիության, կամ աղքատության բացարձակ և հարաբերական ռիսկը 2004 թ. ավելացել է:

33. Նշված խմբերից 2004 թ. և շարունակել են ամենախոցելի մնալ՝ 3 և ավելի (0-14 տարեկան) երեխաներ ունեցող տնային տնտեսությունները, որոնց մոտ աղքատությունը միջին հանրապետական մակարդակից բարձր է 56 տոկոսով, բազմամդամ (6 և ավելի) տնային տնտեսություններ՝ միջին հանրապետական մակարդակից բարձր է 38 տոկոսով և 5 տարեկան և ցածր երեխաներ ունեցող տնային տնտեսություններ՝ միջին հանրապետական մակարդակից բարձր է 35 տոկոսով: Ըստ էության նշված երեք խմբերի խոցելիության աստիճանի վրա վճռական ազդեցություն է ունեցել տվյալ տնային տնտեսություններում երեխաների առկայության գործոնը:
34. Ելնելով վերոնշյալից՝ առաջիկայում անհրաժեշտ կլինի շարունակել աղքատության ընտանեկան նպաստները դեպի երեխաներն ուղղորդելու քաղաքականությունը, իսկ նպաստների ֆինանսավորման ծավալների աճից ստացված միջոցները առավելապես ուղղորդել մեկ երեխային հասանելիք հավելավճարի ավելացմանը:

Աղքատության հաղթահարման ռազմավարություն

Տնտեսական աճի ապահովում և ինստիտուցիոնալ բարեփոխումներ

Մակրոտնտեսական հիմնական զարգացումները 2004 թ. և զարգացման միտումները 2005 թ. առաջին կիսամյակում

35. **Տնտեսական աճ:** Պահպանելով վերջին տարիներին ձևավորված տնտեսական աճի բարձր տեմպի միտումը՝ 2004 թ. նախորդ տարվա համեմատ արձանագրվեց ՀՆԱ 10.1 տոկոս աճ: Այս ցուցանիշը էական գերազանցում է ԱՅՌԾ հիմնական սցենարով տնտեսական աճի կանխատեսվող ցուցանիշը՝ 6 տոկոս: Ընդ որում, տնտեսական աճի ծրագրվածից ավելի բարձր տեմպին մասնակցել են տնտեսության գրեթե բոլոր հիմնական ճյուղերը, ինչը, այլ հավասար պայմաններում, դրական ազդեցություն է թողնում եկամուտների բաշխման հավասարաչափության վրա՝ հատկապես, երբ խոսքը վերաբերում է զբաղվածությունից ստացվող եկամուտներին:
36. Թեև վերջին տարիներին Հայաստանի տնտեսությունը կայունորեն աճել է, իսկ 2001-2004 թթ. արձանագրվել են տնտեսական աճի երկնիչ ցուցանիշներ (շուրջ 11.7 տոկոս՝ միջին տարեկան), սակայն ճյուղային զարգացումները որոշակիորեն շեղվել են նախորդ տարիների միտումներից:
37. Եթե նախորդ երկու տարիների ընթացքում տնտեսական աճի վրա հիմնականում մեծ ազդեցություն ունեին արդյունաբերությունը և շինարարությունը, և շինարարությունում առկա էր լրացուցիչ արտաքին ֆինանսական միջոցների ներհոսք, ապա 2004 թ. պատկերը փոքր ինչ փոխվեց, և աճի մեջ մեծ ներդրում ունեցան գյուղատնտեսությունը, ներքին աղբյուրների հաշվին իրականացվող շինարարությունը և ծառայությունների ոլորտը:
38. Նախորդ տարիների համեմատ 2004 թ. աննախադեպ աճ է գրանցվել **գյուղատնտեսության** ոլորտում՝ պայմանավորված ինչպես բարենպաստ բնակլիմայական պայմաններով և ցանքատարածությունների ավելացմամբ, այնպես էլ ճյուղում արտադրողականության որոշակի աճով: Ոլորտում ավելացված արժեքն աճել է 14.5%-ով և ապահովել ՀՆԱ-ի աճի 3.1 տոկոսային կետը:
39. **Շինարարությունում** ստեղծված ավելացված արժեքը 2004 թ. աճել է 13.4%-ով՝ պայմանավորելով 2004 թ. արձանագրված ՀՆԱ 10.1% աճի 2.1 տոկոսային կետը: Շինարարության ոլորտում աճին նպաստել են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածում կատարված ներդրումները: Ըստ ֆինանսավորման աղբյուրների իրականացված շինարարության կառուցվածքում բնակչության միջոցները կազմել են 58.3%, իսկ կազմակերպությունների և պետական բյուջեի միջոցները՝ համապատասխանաբար 28.1 և 7.1%:
40. **Արդյունաբերության** ավանդը ՀՆԱ աճին 2004 թ. եղել է աննշան՝ ապահովել է 10.1% աճի ընդամենը 0.4 տոկոսային կետը: 2004 թ. ճյուղում ստեղծված ավելաց-

ված արժեքն աճել է ընդամենը 2.1%-ով: Նման ցածր աճը պայմանավորված է եղել հետևյալ գործոններով: Այսպես, 2004 թ. արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի աճը՝ առանց աղամանդի արտադրության կազմել է 7.0%: Աճ է արձանագրվել քիմիական արդյունաբերությունում (+54.6), հանքագործական արդյունաբերությունում (+ 10.5%) և էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում ճյուղում (+9.9%):

41. **Ծառայությունների** ոլորտի ազդեցությունը տնտեսական աճին եղել է մշամակալի և ապահովել 10.1% տնտեսական աճի 4.3 տոկոսային կետը: Մասնավորապես, տրանսպորտի և կապի ճյուղում 2004 թ. արձանագրվել է 16.9% աճ՝ նախորդ տարվա 8.3%-ի դիմաց, իսկ առևտրի և հանրային սննդի ճյուղում՝ 10.5%՝ նախորդ տարվա 14.1%-ի դիմաց:

Աղյուսակ 6. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ՝ փաստացի արդյունքները ծրագրայինի համեմատ


	2003		2004	
	Փաստ	ԱՅՈՑ	Փաստ	ԱՅՈՑ
Ազգային եկամուտ և գներ				
Իրական ՀՆԱ, փոփ. նախորդ տարվա նկատմամբ՝ տոկոս	14.0	6.0	10.1	
Համախառն ներքին արդյունք, մլրդ դրամ	1,625	1,609	1,896	
Համախառն ներքին արդյունք, մլրդ ԱՄՆ դոլար	2,807	2,731	3,555	
ՀՆԱ՝ 1 շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	874	904	1106	
Սպառողական գների ինդեքս (միջին), փոփ. նախորդ տարվա նկատմամբ՝ տոկոս	4.7	3.0	7.0	
Փոխարժեք (միջին), դրամ/ԱՄՆ դոլար	578.8	589.3	533.5	
Ավելագույն արժեքներ՝ ըստ հիմնական ճյուղերի				
	<i>փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ՝ տոկոս</i>			
Արդյունաբերություն	15.6	8.0	2.1	
Գյուղատնտեսություն	4.2	2.8	14.5	
Շինարարություն	45.5	-0.4	13.4	
Տրանսպորտ և կապ	8.3	6.0	16.9	
Առևտուր	14.1	11.4	10.5	
Այլ ճյուղեր	8.6	6.8	12.1	
Սպառում և ներդրումներ				
	<i>տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ</i>			
Վերջնական սպառում	93.5	94.6	94.7	
<i>որից՝ մասնավոր</i>	83.3	82.9	84.0	
Կապիտալի համախառն կուտակում	24.3	20.6	24.0	
<i>որից՝ պետական</i>	5.2	5.4	3.2	
Հարկաբյուջետային հատված				
	<i>տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ</i>			
Համախառն բյուջե				
Ընդամենը եկամուտներ և շնորհներ	21.5	21.5	19.4	
<i>որից՝ հարկային եկամուտներ</i>	17.2	18.8	17.2	
<i>շնորհներ</i>	3.2	2.1	0.7	
Ընդամենը ծախսեր և զուտ վարկավորում	22.4	24.1	21.1	
<i>որից՝ ընթացիկ ծախսեր</i>	16.7	18.3	17.1	
<i>կապիտալ ծախսեր</i>	5.2	5.4	3.4	
Հաշվեկշիռ	-0.9	-2.6	-1.6	

ԱՅՌԾ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արտաքին հատված	տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ, եթե այլ նշում չկա		
Ապրանքների և ծառայությունների արտահանում	32.1	30.7	27.4
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	50.0	46.0	42.5
Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ	-6.8	-5.8	-4.5
Պետական արտաքին պարտք	38.3	40.4	30.4
Համախառն արտաքին պահուստներ (տարեվերջին), ներմուծման ծածկույթ ամիսներով	4.3	4.6	4.3

Աղբյուրը՝ ՀՀ ԱԿԾ, ՀՀ ԿԲ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ԱՅՌԾ կանխատեսումներ:

Գծանկար 2. ՀՆԱ կառուցվածքն՝ ըստ հիմնական ճյուղերի (տոկոս)



Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն:

42. Անդրադառնալով ՀՆԱ բաղադրատարրերին՝ ըստ օգտագործման, նշենք, որ 2004թ. նախորդ տարվա համեմատ աճել են ինչպես վերջնական սպառման, այնպես էլ կապիտալի համախառն կուտակման գծով ծախսերը՝ համապատասխանաբար 10.9 և 12.3 տոկոսով: Նույն ժամանակահատվածում վերջնական սպառման ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 94.7, իսկ կապիտալի համախառն կուտակման գծով ծախսերը՝ 24.0%-ը:
43. Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2004 թ. կազմել է 590056 դրամ (1106 ԱՄՆ դոլար) և անվանական արտահայտությամբ աճել մոտ 17%-ով:
44. **Գներ, աշխատավարձ և փոխարժեք:** 2004 թ. ընթացքում գրանցվել է 2% սղաճ, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ծրագրավորված մինչև 3%-ի դիմաց, իսկ միջին տարեկան սղաճը կազմել է 7%, ծրագրված 7.7%-ի դիմաց: Այս ցուցանիշը էական գերազանցում է ԱՅՌԾ հիմնական սցենարով միջին տարեկան սղաճի կանխատեսվող ցուցանիշը՝ 3 տոկոս: Տարվա ընթացքում սղաճի վրա էապես ազդել են մի շարք արտաքին գործոններ՝ մասնավոր տրանսֆերտների զգալի աճը, ԱՄՆ դոլարի արժեզրկումը և բենզինի գների աճը: Ընդ որում, եթե մասնավոր տրանսֆերտների և բենզինի գների աճը խթանող ազդեցություն են ունեցել սղաճի ցուցանիշի վրա, ապա ԱՄՆ դոլարի արժեզրկման պայմաններում դրամի արժևորումը նվազեցրել է ներմուծման գները, որը որոշակիորեն զսպել է գների աճը: Տնտեսությունում միջին ամսական աշխատավարձը 2004 թ. կազմել է 43445 դրամ՝ 2003 թ. համապատասխան ցուցանիշի համեմատ աճելով 24.9 տոկոսով: Այս ցուցանիշը մոտ

35.4 տոկոսով գերազանցում է ԱՅՈՒՆ հիմնական սցենարով միջին ամսական աշխատավարձի կանխատեսվող ցուցանիշը՝ 32078 դրամ: ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը 2004 թ. ընթացքում դրսևորել է արժևորման վարքագիծ, չնայած ԱՅՈՒՆ-ով նախատեսված էր արժեզրկման միտում: Այսպես, 2004թ. ընթացքում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը արժևորվեց 7.8%-ով:

45. **Պետական ֆինանսներ:** 2004 թ. բյուջեի իրականացումը համահունչ է եղել հաստատված տարեկան բյուջեի ծրագրին: Համախմբված բյուջեի **եկամուտները** և **ծախսերը** (հաշվեգրման սկզբունքով) 2004 թ. անվանական արտահայտությամբ աճել են համապատասխանաբար 5.6 և 10 տոկոսով՝ կազմելով 368.6 և 399.8 մլրդ դրամ: Եկամուտների գերակշիռ մասն ապահովվել է հարկային եկամուտների հաշվին, իսկ ծախսերի կառուցվածքում առաջնային գերակայություն է տրվել, մասնավորապես, սոցիալական հատվածի ծախսերին: Այդուհանդերձ, եկամուտների և ծախսերի անվանական աճի ցուցանիշները զիջել են անվանական ՀՆԱ-ի աճի ցուցանիշին: Արդյունքում, որոշ շեղումներ են արձանագրվել փաստացի և ծրագրային ցուցանիշների՝ ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերակցություններում: Մասնավորապես, 2004 թ. փաստացի եկամուտներ - ՀՆԱ և փաստացի ծախսեր - ՀՆԱ հարաբերակցությունները 2003 թ. համապատասխան ցուցանիշների համեմատ կրճատվել են համապատասխանաբար 2.1 և 1.3 տոկոսային կետերով՝ կազմելով 19.4 և 21.1 տոկոս: ՀՆԱ-ի բարձր աճը անմիջականորեն և ամբողջությամբ չի արտացոլվել **հարկային եկամուտների** վարքագծում եւ այն մնացել է անփոփոխ մոտ 17.2 տոկոսի շրջանակներում: Այն հիմնականում պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ ծրագրայինի համեմատ ՀՆԱ-ի աճը եղել է աննախադեպ եւ ՀՆԱ-ի հավելածը հիմնականում ձևավորվել է հարկումից ազատված՝ գյուղատնտեսության ոլորտի աճով: Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարությունը հարկային եկամուտների ավելացման կարևոր աղբյուրներից մեկը համարում է հարկային վարչարարության բարելավումը և շարունակում է միջոցներ ձեռնարկել այս ուղղությամբ: Չնայած ընդհանուր ծախսեր - ՀՆԱ հարաբերակցության կրճատմանը, **ընթացիկ ծախսեր - ՀՆԱ** հարաբերակցությունը 2003 թ. համեմատ աճել է 0.4 տոկոսային կետով՝ 2004 թ. կազմելով 17.1 տոկոս: 2001 թ. համեմատ զգալիորեն լավացել է բյուջեի հաշվեկշիռը՝ դեֆիցիտ - ՀՆԱ հարաբերակցությունը, 4.5 տոկոսից կրճատվելով, 2002 և 2003 թթ. կազմել է մոտ 1 տոկոս, 2004 թ.՝ 1.6 տոկոս:
46. **Արտաքին հատված:** Հայաստանի տնտեսական աճի կարևոր գրավականներից է միջազգային տնտեսությանը ինտեգրման խորացումը: Այս երևույթը, հատկապես Հայաստանից արտահանվող ապրանքների և ծառայությունների ծավալների ավելացման միջոցով մեծ նշանակություն է ունեցել վերջին տարիներին տնտեսական աճի ապահովման հարցում: Տնտեսության բացվածության աստիճանը (ապրանքների և ծառայությունների արտաքին առևտրաշրջանառություն-ՀՆԱ հարաբերակցություն) 2004 թ. կազմել է մոտ 70%: Նախորդ տարվա նկատմամբ ՀՆԱ-ի աճը, համապատասխան ենթակառուցվածքների զարգացումը և համաշխարհային գների բարենպաստ պայմանները հանդիսացել են ապրանքների արտահանման աճի աղբյուրներ. արտահանումը կազմել է 723 մլն ԱՄՆ դոլար՝ 5.4% հավելած, իսկ ներմուծումը կազմել է 1351 մլն ԱՄՆ դոլար, կամ 5.6% հավելած: Ընթացիկ հաշվի

բացասական մնացորդը կազմել է 161.6 մլն ԱՄՆ դոլար, նախորդ տարվա համեմատ կրճատվելով 14.7%-ով և զգալի նվազելով ՀՆԱ-ի նկատմամբ՝ նախորդ տարվա 6.7%-ից մինչ 4.7%: Ընթացիկ հաշվի բարելավմանը գլխավորապես նպաստել են զուտ ընթացիկ տրանսֆերտները՝ նախորդ տարվա համեմատությամբ նշանակալի աճել են մասնավոր տրանսֆերտները, կազմելով 269.4 մլն ԱՄՆ դոլար: Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռների բացասական մնացորդի աճը, ինչպես նաև զուտ գործոնային եկամուտների նվազումը նպաստել են նախորդ տարվա համեմատ վճարային հաշվեկշիռի ընթացիկ հաշվի պակասուրդի աճին համապատասխանաբար մոտ 12.6, 1.3 և 30.5 տոկոսային կետով: Ըստ մաքսային վիճակագրության, 2004 թ. ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը կազմել է 2073.6 մլն ԱՄՆ դոլար, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճելով 5.5%-ով:

47. **Պետական արտաքին պարտք:** Վերջին տարիներին հատկանշական ձեռքբերումներից է պետական բյուջեի դեֆիցիտի մակարդակի իջեցմանը զուգահեռ պետական պարտքի մակարդակի կրճատումը: 2004 թ. ավարտվել է գույք՝ պարտքի դիմաց գործարքը, որով մարվել է Ռուսաստանի Ռաշնության նկատմամբ ՀՀ ամբողջ պարտքը: Նախորդ երեք տարիների միջինում 42%-ի դիմաց արտաքին պետական պարտքը 2004 թ. կազմել է ՀՆԱ-ի 30.4%-ը:
48. 2005թ. առաջին կիսամյակի զարգացումները հիմք են տալիս ենթադրելու, որ տարեկան արդյունքներով ձևավորվելու է ԱՅՈՒԹ շրջանակներում ծրագրվածից բարենպաստ պատկեր: Խոսքը, նախ և առաջ, վերաբերում է մակրոտնտեսական և նյութական աղքատության հիմնական ցուցանիշներին, ինչպես նաև դրանք պայմանավորող հիմնական գործոններին: 2004 թ. զարգացումները, ինչպես նաև 2005թ. բարենպաստ սպասումները անհրաժեշտաբար պահանջելու են ԱՅՈՒԹ հիմնական նպատակային ցուցանիշների ճշգրտում՝ ԱՅՈՒԹ իրականացման, մոնիտորինգի և գնահատման ու ապագա վերանայումների արդյունավետության բարձրացման նկատառումներից ելնելով:
49. 2005 թ. առաջին կիսամյակում տնտեսությունն աճել է ծրագրվածից բարձր տեմպերով: **Իրական ՀՆԱ** աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կազմել է 10.2 տոկոս (ԱՅՈՒԹ շրջանակներում ծրագրվել է 6 տոկոս տարեկան աճ): Աճի հիմնական ավանդն ապահովվել է ծառայությունների հատվածի եւ շինարարության հաշվին (համապատասխանաբար շուրջ 3.8 տոկոսային կետ և 2.9 տոկոսային կետ), թեև արդյունաբերության, գյուղատնտեսության և շինարարության ճյուղերը ևս աճել են (նախորդ տարվա 1-ին կիսամյակի համեմատ՝ համապատասխանաբար 4.6, 10.2 և 27.8 տոկոսով):
50. **Պետական ֆինանսների** բնագավառում 2005 թ. զարգացումները, ընդհանուր առմամբ, համահունչ են եղել տարեկան բյուջեի ծրագրին: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տեղաշարժերը ևս դրական են՝ պետական բյուջեի եկամուտներն անվանական արտահայտությամբ աճել են 25.7 տոկոսով, իսկ ծախսերը՝ 21.6 տոկոսով: Ընդ որում, հատկանշական է, որ եկամուտների աճն ամբողջությամբ ապահովվել է ներքին (մասնավորապես, հարկային) եկամուտների հաշվին:

51. Տարեկան ծրագրի համեմատ **սպառողական գների** փոփոխությունը 2005 թ. առաջին կիսամյակում ավելի բարձր է եղել. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գնաճը կազմել է 2.3 տոկոս (տարվա կտրվածքով ծրագրվել է 3 տոկոս գնաճ): Ընդ որում, գնաճը հիմնականում պայմանավորված է եղել պարենային ապրանքների գների աճով (3.4 տոկոս): Այդուհանդերձ, ինչպես և նախորդ տարի, 2005 թ. առաջին կիսամյակում ևս, ըստ գնահատականների, բնակչության եկամուտների իրական աճը շարունակել է դրական մնալ:
52. Ծրագրայինից, թերևս, ամենամեծ (և անսպասելի) շեղումներն արձանագրվել են **փոխարժեքի** վարքագծում: Տարվա առաջին վեց ամիսների ընթացքում դրամը շարունակաբար արժևորվել է: Առաջին կիսամյակի արդյունքներով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամն անվանական արտահայտությամբ արժևորվել է 17.1 տոկոսով: Թեև բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշների վրա նման զարգացումների հնարավոր ազդեցության գնահատականը պահանջելու է լրացուցիչ ուսումնասիրություններ, այդուհանդերձ, առաջին մոտեցմամբ կարելի է փաստել, որ հատկապես սպառման ներքին դեցիլներում գտնվող բնակչության եկամուտների վրա, առնվազն կարճաժամկետ հատվածում, այդ ազդեցությունը (ընդ որում, հնարավոր է դրական), ըստ էության, աննշան կլինի:

Գործարար միջավայր

53. Երկրի զարգացման հեռակետն, ըստ էության, համախառն արդյունքի ապահովումն է, որի չափն անմիջականորեն կապված է գործարար և ներդրումային միջավայրով և այդ դաշտում դրսևորվող տեղաշարժերով: Տնտեսական վերափոխումների արդյունքում ՀՆԱ-ի շուրջ 70 տոկոսից ավելին ապահովվում է ի հաշիվ տնտեսության մասնավոր հատվածի, որի կենսունակությունն էլ պայմանավորված է բիզնես միջավայրով:
54. Հաշվետու ժամանակահատվածում կառավարության կողմից վարվող ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղված էր գործարար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանն ու ներդրումների ծավալների մեծացմանը: 2005 թ. ապրիլի 21-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «ՀՀ ներդրումային քաղաքականության» Հայեցակարգը, որի հիմնական նպատակն է բարձրացնել իրականացվող ներդրումային քաղաքականության թափանցիկությունը և ամրագրել վերջինիս հիմնական սկզբունքները և ուղղությունները:
55. Գործարար միջավայրի բարելավման և ներդրումներին խոչընդոտող գործոնների վերացմանն ուղղված միջոցառումների արդյունքում որոշակիորեն բարելավվել է ԱՅՈՒՄ-ով նախանշված դաշտը:
56. Մասնավորապես, ՀՀ կառավարության 2004 թ. սեպտեմբերի 30-ի թիվ 1380-Ն որոշմամբ ընդունվել է «ՀՀ մասնավոր հատվածում մրցակցության ուժեղացման և գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագիրը», որն ընդգրկում է մի շարք միջոցառումների իրականացում հարկային և մաքսային հավաքագրումներում ինքնագնահատման համակարգ ներդնելու, ավելացված արժեքի հարկի փոխ-

- հատուցման խնդիրների կարգավորման, մաքսային հսկողության բարելավման, վարչական դատարանի համակարգի իրավական դաշտի ձևավորման, ստանդարտացման և չափազրույթների, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի կիրարկումն ապահովող իրավական փաստաթղթերի պատրաստման ուղղությամբ:
57. Գործարար և ներդրումային միջավայրի բարելավման կարևորագույն տարրերից է հավասար մրցակցային պայմանների ապահովումը: Անհավասար գործունեության վիճակում հայտնված նորաստեղծ ընկերություններն ի սկզբանե փակման են դատապարտված, ինչն էլ արդյունքում կարող է հանգեցնել խիստ մեծաշնորհային շուկաների ձևավորման, որտեղ գերշահույթների ստացումը զուգակցվելու է արտադրանքների ու ծառայությունների որակական ցածր ցուցանիշներով:
58. Այդ նպատակներին է միտված «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որով որոշակիացվում է գերիշխող դիրքի չարաշահման դեպքում տնտեսվարող սուբյեկտների ապախոշորացման դեպքերը, հստակեցվում է անբարեխիղճ մրցակցության դրսևորումների համար պատասխանատվության միջոցները՝ նախատեսելով տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ անբարեխիղճ մրցակցության համար տուգանքի հաշվարկման եղանակն՝ առաջնային սահմանելով տնտեսվարող սուբյեկտի այդ ապրանքային շուկայում նախորդ տարվա իրացման ծավալի ամրագրված տոկոսային դրույթաչափի կիրառումը:
59. Հաշվետու ժամանակահատվածում բարելավվել են ձեռնարկությունների պետական գրանցման և լիցենզավորման ընթացակարգերը, որի արդյունքում ձեռնարկությունների պետական գրանցման վրա ծախսված միջին ժամանակը 2004 թ. կազմել է 16 օր՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 2.6 օրով, լիցենզիա ստանալու համար ծախսված միջին ժամանակը 20.1 օրից հասցվել է 16.5 օրվա: Միաժամանակ, նկատելիորեն կրճատվել են նաև գրանցման և լիցենզավորման համար կատարվող վճարները:
60. Եթե ձեռնարկությունների գրանցման հարաբերությունները հաստատական զարգացում ու բարելավում են արձանագրում, ապա ձեռնարկությունների լուծարման գործընթացը տնտեսվարող սուբյեկտների համար շարունակաբար մնում է խոչընդոտներով ու քաշքշուկներով համեմված: Ստեղծված իրավիճակում արհեստականորեն ուռճացվում է գրանցված ձեռնարկությունների թվաքանակը՝ մեծացնելով տնտեսական քաղաքականության մշակման ժամանակ կանխատեսումների սխալվելիությունը:
61. Դատավճիռների և դատարանների վճիռների հարկադիր կատարման արդյունավետության բարձրացման, հարկադիր կատարման գործողությունների թափանցիկության ապահովման, և գրավի տնօրինման արդյունքում առևտրային բանկի սեփականությանը գույքի անցնելու գործընթացում հնարավոր խոչընդոտների նվազեցման ուղղությամբ որոշակի աշխատանքներ են իրականացվել, որոնց արդյունքում ակնկալվում է դատավիճռների և դատարանների վճիռների կատարման նկատմամբ վստահության աճ և դրա հետ կապված տնտեսական հարաբերությունների, մասնավորապես բանկային վարկի ընդլայնման խոչընդոտների նվազեցում, ինչպես նաև ֆինանսական միջնորդության և բանկային վարկավորման ծավալների աճ:

Այդուհանդերձ բանկային համակարգի զարգացման քանակական ցուցանիշները դեռևս չեն փաստում նշված միջոցառումների իրականացման որակական արդյունքների մասին, քանի որ հիշյալ խնդիրները շարունակաբար առկա են այդ հարաբերություններում:

62. Սեփականության իրավունքների պաշտպանման, պայմանագրերի կատարման և համապատասխան պատասխանատվությունների ինստիտուտի առկայությունն ու զարգացումը հանդիսանում է գործարար միջավայրի բարելավման կարևոր նախադրյալ՝ մասնավոր հատվածի զարգացման երաշխիք դառնալով: Նկատելի տեղաշարժ հնարավոր է ապահովել՝ կենսունակ դարձնելով «Սնանկացման մասին» ՀՀ օրենքը և դրանից բխող ընթացակարգերը: Դատական համակարգի արդյունավետության և մատչելիության բարձրացումը հնարավորություն կտա իրավական հիմքի վրա տեղափոխել գործարարների փոխհարաբերությունները՝ բաժրացնելով բիզնեսի իրավագիտակցության մակարդակը:
63. Որակապես նոր հարթության վրա են տեղափոխվել աշխատանքային հարաբերությունները՝ ՀՀ աշխատանքային նոր օրենսգրքի ընդունմամբ: Օրենսգիրքը գործողության մեջ է 2005 թ. հունիսի 21-ից: Իսկ օրենսգրքի ընդունումից մեկ տարվա ընթացքում կատարվելու է աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող օրենքների և այլ իրավական ակտերի օրենսգրքին համապատասխանեցում:
64. Վերջին տարիներին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման գործընթացը մեծ փոփոխությունների է ենթարկվել, որի արդյունքում բարձրացել է գործընթացների թափանցելիությունը և վերացել են ներդրողներին խանգարող մի շարք խոչընդոտներ:
65. Սկսած 2002 թ. Կադաստրի պետական կոմիտեն իր աշխատանքների մեջ սկսել է իրականացնել մեկ պատուհանի սկզբունքը՝ իր բոլոր տարածքային ստորաբաժանումների միջոցով տեղեկատվության հասանելիություն ապահովելով գործընթացների, զնացուցակների և ժամանակահատվածների վերաբերյալ, ինչպես նաև՝ ներդնելով դիմումների ստանդարտ ձևերի համակարգը բոլոր գործընթացների համար:
66. 2004 թ. ընթացքում ՀՀ կառավարության քայլերն ուղղված են եղել ՓՄՁ զարգացման քաղաքականության ու ռազմավարության մշակմանն ու իրականացմանը, պետություն-գործարար համայնք համագործակցության ընդլայնմանը: Այսպես, ՓՄՁ ոլորտում վերջին երեք տարիների ընթացքում ստեղծվել է շուրջ 20000 սուբյեկտ, իսկ միայն 2004 թ. ընթացքում ստեղծվել է շուրջ 8500 նոր ՓՄՁ սուբյեկտ՝ ավելի քան 21000 աշխատատեղերով:
67. ՓՄՁ սուբյեկտների գործունեությունն ու վերջիններիս պետական աջակցությունն ըստ էության, օրենսդրորեն կանոնակարգված է համապատասխան օրենքներով և ՀՀ կառավարության կողմից հաստատվող պետական աջակցության տարեկան ծրագրերով: Իսկ ՓՄՁ ոլորտի զարգացմանն աջակցելու ճկուն, կենսունակ և մասնաճյուղերով գործող համակարգի ստեղծման նպատակով դեռևս 2002 թ. ձևավորվել է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ⁴ /այսուհետ՝ Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ/ ոչ առևտրային, պետական մասնակցությամբ հիմնադրամը:

⁴ Հիմնադրվել է ՀՀ կառավարության 2002թ. մարտի 19-ի թիվ 282 որոշմամբ:

68. ՓՄՁ պետական աջակցության համակարգի կենսունակության բարձրացման, ինչպես նաև ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնման, նոր ստեղծվող կազմակերպությունների խրախուսման նկատառումներով 2004 թ. ընթացքում իրականացվել են ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման փորձնական ծրագրեր որի շրջանակներում ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել են վարկային միջոցներ 44.8 մլն դրամի սահմաններում:
69. ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից իրականացված մոնիտորինգի արդյունքներով բոլոր երաշխավորված վարկերը նպատակային են օգտագործվել և վերադարձման ռիսկերը նվազագույնին են հասցվել: Շահառուների մոտ արձանագրվել է եկամուտների աճ՝ միջինը 20-30 տոկոսի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով աշխատատեղերի աճ՝ միջինը 20 տոկոսով: Ներկայումս քննարկումներ են իրականացվում տոկոսադրույքների սուբսիդավորման փորձնական ծրագրերի ներդրման ուղղությամբ, ինչն ըստ էության, ՓՄՁ սուբյեկտների համար ավելի գործուն և հասցեական աջակցություն կլինի: Այդուհանդերձ սա ևս սահմանափակ շրջանակ է ընդգրկելու: Այսինքն՝ այստեղ պետք է կարևորվի համընդհանուր «մատչելի» մեխանիզմի ներդրումը, որը պետության համար կարող է լինել ավելի պակաս ծախսատար, իսկ ՓՄՁ սուբյեկտների համար՝ ավելի արդյունավետ:

Հանրային կառավարման համակարգ

70. Վերջին տարիների տնտեսական և սոցիալական ոլորտներում ձեռքբերումները հաստատեցին, որ պետական կառավարման ոլորտում իրականացվող քաղաքականությունները տալիս են որոշակի դրական արդյունք: Ինչպես վերջին չորս տարիներին, 2004 թ.-ին նույնպես պետական կառավարման համակարգի բարեփոխումները գտնվել են կառավարության ուշադրության կենտրոնում: Ըստ հաջորդական փուլերի՝ իրականացվել և այժմ շարունակվում են նախարարությունների, գերատեսչությունների, ինչպես նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վերակառուցումը, քաղաքացիական և համայնքային ծառայության համակարգերի ներդրումն ու կատարելագործումը:
71. Հստակեցվել են նախարարությունների կանոնադրությունները՝ բացահայտվել են կրկնվող, ավելորդ, տվյալ մարմնին ոչ բնորոշ գործառույթներն, ինչպես նաև դրանք իրականացնող ստորաբաժանումները: Բոլոր նախարարություններում, տարածքային կառավարման մարմիններում ներդրվել է քաղաքացիական ծառայություն՝ քաղաքացիական ծառայության, քաղաքական, հայեցողական պաշտոններով:
72. Պետական կառավարման մարմիններում իրականացվում է քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի շարունակական բարձրացում, 2006-2008 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրին համաձայն, 2006 թ.-ին նախատեսվում է բազային պաշտոնային դրույքաչափն ավելացնել 50 տոկոսով՝ սահմանելով 30,0 հազար դրամ:
73. 2004 թ.-ին պետական կառավարման մարմիններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և որոշումների կատարման էլեկտրոնային վերահսկողության համակարգի ներդրման նպատակով մշակվել և ընդունվել է «Էլեկտրոնային փաս-

տաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

74. Տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումներն ուղղված են եղել տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքների և պարտականությունների հստակեցմանն՝ ապահովելու անհրաժեշտ նախադրյալներ իրական ինքնակառավարման կայացման ճանապարհին: Վերանայվել և հստակեցվել են ֆինանսական համահարթեցման սկզբունքով պետական բյուջեից հատկացվող դոտացիաների, ինչպես նաև սուբվենցիաների և սուբսիդիաների հաշվարկման և տրամադրման մեխանիզմները:
75. Տավուշի և Գեղարքունիքի, Արարատի և Վայոց Ձորի մարզերի համար համապատասխանաբար DFID-ի և EU-ի կողմից իրականացվում է մարզերի տարածքային զարգացման ծրագրեր, որոնց կարևոր բաղադրիչն է հանդիսանում տարածքային կառավարման մարմինների կարողությունների հզորացումը:
76. Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման ուղղությամբ, որի վերաբերյալ հրապարակվել է առանձին հաշվետվություն:

Հարկային և մաքսային վարչարարություն

77. ԱՅՈՒՆ-ն սահմանելով միջնաժամկետ հատվածում հարկային քաղաքականության հիմնական գերակայությունները, միաժամանակ առաջադրում է հետևյալ խնդիրները, որոնք հատկապես պետք է լուծվեն ԱՅՈՒՆ շրջանակներում.
 - ՀՆԱ-ի նկատմամբ հարկերի հարաբերակցության բարձրացում,
 - ներդրումային ակտիվության և զբաղվածության խթանմանը նպաստող հարկային համակարգերի զարգացումը և կայուն բարձր տնտեսական աճի նկատմամբ առավելագույն չեզոքության պահպանումը,
 - հարկման դրույքաչափերի բարձրացումից հնարավորինս խուսափումը,
 - հարկային վարչարարության կատարելագործումը, հարկային և մաքսային մարմինների և տնտեսվարող սուբյեկտների փոխհարաբերությունների որակական բարելավումը,
 - հարկային համակարգի հետագա պարզեցումը, գործող հարկային օրենքների համախմբումը միասնական սկզբունքներով հարկային օրենսգրքում:
78. ԱՅՈՒՆ-ով միջնաժամկետ հատվածում հարկային քաղաքականության գերակայությունների շարքում իրենց տեղն ունեն հարկային վարչարարության արդյունավետության բարձրացումը, հարկային հսկողության համակարգի կառավարման բարելավումը: Ավելին, ԱՅՈՒՆ համատեքստում հարկային վարչարարության արդյունավետության բարձրացումն ընկալվում է որպես հարկ վճարողի համար՝ հարկերի վճարման հետ կապված անուղղակի ծախսերի (հաշվառում և հաշվետվություններ), ինչպես նաև հարկային մարմինների կողմից հարկերի վճարման հսկողության համար պետական ծախսերի նվազեցումներ:
79. Հարկային վարչարարության մակարդակի բարձրացմանն առնչվող խնդիրների լուծման նպատակով կառավարությունն առանձնացրել է հարկային ծառայության գործունեության հետևյալ 4 գերակա ուղղությունները.

- հարկային ապառքների կրճատում,
 - հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարների /գերավճարների/ նվազեցում,
 - պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գանձման աշխատանքների բարելավում,
 - խոշոր հարկ վճարողների հարկային հսկողության արդյունավետության բարձրացում:
80. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի համատեքստում կարևոր տեղ է վերապահվում հարկային և մաքսային քաղաքականությանն ու վարչարարությանը՝ համապատասխան զարգացումներով ՀՆԱ-ի 0,3-0,4 տոկոսի չափով տարեկան աճ ապահովելու համար պայմանների ստեղծման առումով: Ընդ որում, կայուն տնտեսական աճի հետագա շարունակականության երաշխիքը պետք է լինի հարկային եկամուտների աճի ապահովումը՝ հարկային վարչարարության կատարելագործման և հարկային համակարգի պարզեցման արդյունքում:
81. Թեև անվանական արտահայտությամբ համախմբված բյուջեի հարկային եկամուտները վերջին տարիներին անշեղորեն աճել են և նույնիսկ գերազանցել են ԱՅՌԾ ծրագրային ցուցանիշները, այդուհանդերձ այդ աճը բավարար չի եղել ապահովելու ԱՅՌԾ շրջանակներում ծրագրված ՀՆԱ նկատմամբ հարաբերական ցուցանիշների մակարդակները: Մասնավորապես, 2004 թ.-ին համախմբված բյուջեի հարկային եկամուտներ ՀՆԱ հարաբերակցությունը ծրագրային ցուցանիշին զիջել է շուրջ 1.6 տոկոսային կետով: Այս առումով կառավարությունը ԱՅՌԾ առաջիկա վերանայման ժամանակ լրացուցիչ միջոցառումներ կնախատեսի հարկային և մաքսային վարչարարության ոլորտում, որոնք ուղղված կլինեն ԱՅՌԾ ծրագրային ցուցանիշների ապահովմանը:

Աղքատության հաղթահարմանն ուղղված քաղաքականությունն առանձին ոլորտներում

Սոցիալական պաշտպանության համակարգ

82. Անհավասարության և նյութական աղքատության կրճատման տեսանկյունից ԱՅՌԾ շրջանակներում առանձնահատուկ է սոցիալական քաղաքականության դերը: Սոցիալական օժանդակության ոլորտում կարևորվում է ընտանեկան նպաստների համակարգի հասցեականության բարձրացումը՝ այն օգտագործելով որպես բնակչության ամենաանապահով շերտի աղքատության կրճատման կարևոր գործիք: Բացի այդ, ծրագիրը շեշտադրում է բնակչության հատուկ պաշտպանության կարիք ունեցող խմբերին (հաշմանդամներ, ծնողազուրկ երեխաներ, փախստականներ և տեղահանված անձինք) սոցիալական նպատակային որակյալ ծառայությունների մատուցումը: Սոցիալական ապահովագրության ոլորտում քաղաքականությունն ուղղված է համակարգի արդյունավետության բարձրացմանը, կենսաթոշակների չափերի աճին, գործազրկության դեպքում ապահովագրության իրականացմանը,

ինչպես նաև աշխատանքային ստաժից կախված կենսաթոշակների տարբերական ավելացմանը, անձավորված հաշվառման համակարգի ներդրմանն ու ըստ կատարած ապահովագրական վճարների՝ կենսաթոշակային և գործազրկության նպաստի համակարգերին անցման ապահովմանը:

Աղյուսակ 8. Համախմբված բյուջեի ծախսերը սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության բնագավառում 2003-2005 թթ.

	2003	2004	2005	2003	2004	2005
	ԱՅՈՒՆ			Փաստ		Բյուջե
Ընդամենը, մլրդ դրամ¹	71.4	82.6	94	73.0	85.35	112.9
ՀՆԱ նկատմամբ՝ տոկոս	4.8	5.1	5.4	4.5	4.5	5.35
Համախմբված բյուջեի ծախսերի նկատմամբ՝ տոկոս	19.0	21.3	22.3	20.1	21.3	23.1
Փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ՝ տոկոս	18.4	15.8	13.8	19.7	16.9	32.2
որից՝						
Պետական բյուջե, մլրդ դրամ	30.5	36.1	41.4	29.3	34.35	46.7
ՀՆԱ նկատմամբ՝ տոկոս	2.1	2.2	2.35	1.8	1.81	2.2
Բնագավառի ծախսերի նկատմամբ՝ տոկոս	42.8	43.7	44	40.1	40.2	41.3
Փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ՝ տոկոս	29.6	18.2	14.7	23.0	17.2	33.8
ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամ, մլրդ դրամ	40.8	46.5	52.6	43.2	51	65.4
ՀՆԱ նկատմամբ՝ տոկոս	2.8	2.9	3.0	2.7	2.7	3.1
Բնագավառի ծախսերի նկատմամբ՝ տոկոս	57.2	56.3	56	59.2	59.7	57.9
Փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ՝ տոկոս	11.1	13.9	13.1	17.6	18.1	28.2

¹ ՀՀ ՍԱԴՀ համակարգի պահպանման և զարգացման գծով ծախսերը ներառված չեն: Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՀՀ ՍԱԴՀ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ԱՅՈՒՆ կանխատեսումներ:

83. Սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության բնագավառում պետական ծախսերի ծրագրումը իրականացվել է՝ հիմք ընդունելով ԱՅՈՒՆ գերակայություններն ու բնագավառում պետական ծախսերի ծրագրային ցուցանիշները: 2004 թ. համախմբված բյուջեից բնագավառին ուղղված ծախսերը կազմել են 85 մլրդ դրամ՝ 2003 թ. փաստացի ցուցանիշը գերազանցելով 17 տոկոսով, իսկ 2005 թ. համապատասխան ցուցանիշը կազմել է 112.9 մլրդ դրամ, աճելով 32.2 տոկոսով:
84. 2004 թ. ընտանեկան նպաստների գծով ծախսերը կազմել են 16.1 մլրդ դրամ (ՀՆԱ նկատմամբ՝ 0.9 տոկոս) կամ բնագավառում ընդհանուր պետական ծախսերի 18.2 տոկոսը: Առաջնորդվելով ԱՅՈՒՆ գերակայություններով ու քաղաքականության ուղղություններով, 2004 թ.-ին այս ոլորտին կատարված բյուջետային հատկացումներն զգալիորեն աճել են (տե՛ս Աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Ընտանեկան նպաստների գծով ծախսերը 2003-2005 թթ.

	2003	2004	2005	2003	2004	2005
	ԱՅՈԾ			Փաստ		Բյուջե
Ընտանեկան նպաստներ, մլրդ դրամ	12.7	16.1	20.21	12.4	16.1	20
<i>ՅՆԱ նկատմամբ՝ տոկոս</i>	0.9	1.0	1.2	0.8	0.9	1
<i>Համախմբված բյուջեի ծախսերի նկատմամբ՝ տոկոս</i>	3.4	4.1	4.8	3.4	4.0	4.1
<i>Սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության ծախսերի նկատմամբ՝ տոկոս</i>	17.9	19.5	21.1	16.9	18.2	17.7
<i>Փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ՝ տոկոս</i>	5.5	26.3	25.5	2.2	30.0	24.2

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ԱՅՈԾ կանխատեսումներ:

85. Հաշվի առնելով այն փաստը, որ ընտանեկան նպաստների համակարգն ապացուցել է իր գործունակությունը՝ որպես աղքատության կրճատման բավականին արդյունավետ գործիք և այն հանգամանքը, որ նպաստների գծով եկամուտները շարունակում են առանցքային դեր խաղալ ներքին քվանտիլներում գտվող բնակչության դրամական եկամուտների կառուցվածքում՝ ընտանեկան նպաստներին ուղղվող ծախսերի աճին զուգընթաց ՀՀ կառավարությունը քայլեր է ձեռնարկել համակարգի արդյունավետության բարձրացման և աղքատության նկատմամբ մեծ ռիսկայնություն ունեցող բազմազավակ ընտանիքներին տրամադրվող նպաստների տարբերակման մեխանիզմի ներդրման ուղղությամբ:
86. 2005թ. աղքատության ընտանեկան նպաստի իրավունք տվող սահմանային միավորը իջեցվեց մեկ միավորով՝ 35.00-ից դարձավ 34.00: Սահմանվեց, որ 34.01-ից մինչև 38.00 անապահովության միավոր ունեցող ընտանիքների անչափահաս անդամները հավելում կստանան 3000 դրամի չափով, իսկ բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերի նույն միավորն ունեցող ընտանիքների անչափահաս անդամները՝ 3500 դրամ, 38.01-ից մինչև 41.00 անապահովության միավոր ունեցող ընտանիքների անչափահաս անդամները հավելում կստանան 3500 դրամ, բարձր լեռնային և սահմաներձ բնակավայրերում՝ 4000 դրամ, 41.01 և ավելի բարձր միավոր ունեցող ընտանիքներում՝ 4000 դրամ, իսկ բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերում՝ 4500 դրամ: Աղքատության ընտանեկան նպաստի բազային մասը սահմանվեց 6000 դրամ: Սահմանվեց միանվագ դրամական օգնության նոր ձև՝ նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող միանվագ դրամական օգնություն 35 հազար դրամի չափով:
87. Արդյունքում, 2004 թ. 2003 թ. նկատմամբ ընտանեկան նպաստի միջին չափը բարձրացվել է 26.3%-ով, 2005 թ. 2004 թ. նկատմամբ՝ 25.5%-ով, պահպանելով նպաստառու ընտանիքների թվաքանակը:
88. Աղքատության հաղթահարման գործում սոցիալական տրանսֆերտների համակարգի էական դերակատարության մասին են վկայում Աղյուսակ 10-ում բերված տվյալները: Ըստ այդ գնահատականների, եթե աղքատության մակարդակի գնահատման հաշվարկից հանվեն սոցիալական տրանսֆերտների արժեքային գումարները, ապա

աղքատության մակարդակը 2004թ. կկազմեր 49.9%, գրանցված 39%-ի փոխարեն, իսկ ծայրահեղ աղքատությանը կկազմեր 18.6%՝ 7.2%-ի դիմաց:

Աղյուսակ 10. Աղքատության մակարդակի փոփոխությունը սոցիալական աջակցության և սոցիալական տրանսֆերտների չվճարման դեպքում

	Աղքատության մակարդակը սոցիալական տրանսֆերտները հաշվի առած		Աղքատության մակարդակն առանց սոցիալական տրանսֆերտների			
			առանց սոցիալական օգնության ⁵		առանց սոցիալական տրանսֆերտների ⁶	
	2003	2004	2003	2004	2003	2004
Ոչ աղքատ բնակչություն, տոկոս	57.1	61	55.8	58.4	50.1	50.1
Աղքատ բնակչություն, տոկոս	42.9	39	44.2	41.6	49.9	49.9
որից՝ շատ աղքատ	7.4	7.2	9.7	10.1	16.2	18.6

¹ *Սոցիալական օգնությունը ներառում է արտոնությունների դիմաց փոխհատուցումները, նպաստ երեխայի համար, նպաստ միայնակ մայրերին, գործազրկության նպաստ, կրթաթոշակ, ընտանեկան նպաստ և այլն:*

² *Սոցիալական տրանսֆերտները ներառում են վերը թվարկված սոցիալական աջակցությունը և կենսաթոշակները:*

89. ՄԱԶԾ աջակցությամբ պատրաստված «Մարդկային աղքատությունն ու աղքատամետ քաղաքականությունը Հայաստանում» զեկույցը ընդունելով ներկայումս ընտանեկան նպաստների համակարգի արդյունավետությունը իբրև կարճաժամկետ քաղաքականության արդյունք, առաջարկում է ընտանեկան նպաստի համակարգի չափորոշիչները համալրել մարդկային աղքատության ցուցիչներով և տարբերակել նույնքան բալ ստացած ընտանիքներն ըստ աղքատությունից դուրս գալու անհավասար հնարավորությունների, ինչը թույլ կտա էլ ավելի զարգացնել թիրախավորման գաղափարը և հանգել ըստ տարածքների նպաստների մշանակման տարանջատումների:
90. Թեև ԱՅՈՒՄ-ով նախատեսված սոցիալական քաղաքականության շրջանակներում նախատեսված էր միանվագ դրամական օգնության համար տրամադրվող միջոցների դադարեցում, այնուամենայնիվ, կառավարությունը 2005 թ. սահմանափակվեց միայն նվազեցնելով այդ գումարները պետական բյուջեով նախատեսված ընդհանուր գումարի 5%-ից մինչև 3%-ի: Նշենք նաև, որ ոլորտում իրականացված հետազոտություններում ամրագրված են միանվագ դրամական օգնությունների վճարման մեխանիզմների անարդյունավետության և ոչ բավարար հասցեականության մասին դրույթներ⁵:
91. Ընտանեկան նպաստների համակարգը զերծ չի մնացել նաև թերացումներից, մասնավորապես ՀՀ մարզերի և Երևան քաղաքի 18 սոցիալական ծառայության տարածքային գործակալություններում իրականացված իրավակիրառական պրակ-

⁵ *Աղքատության և սոցիալական ազդեցության գնահատում (PSIA) որակական հետազոտություն, GTZ, էջ 12, Երևան 2005թ.,*

տիկայի մոնիտորինգի և ստուգման արդյունքներով արձանագրվել են 9.860.500 դրամ գումարի չափով սխալ նշանակված նպաստի վճարումներ: Արձանագրված խախտումների 70%-ը բաժին է ընկնում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված տեղեկանքներին: Կոռուպցիոն երևույթների դրսևորման վերոհիշյալ փաստի մասին արձանագրվում են նաև փորձագիտական հետազոտություններում⁶:

92. Վերոնշյալ դրսևորումների նվազեցմանը կնպաստի 2005 թ. «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրառումը, որով պայմանավորված օրենսդրական լուծում են ստացել ընտանիքների անապահովության գնահատման ցուցանիշները, դրանց կշռի որոշման, ինչպես նաև կիրառման հանգամանքների սահմանումները:
93. Շարունակվել են քայլեր ձեռնարկվել կենսաթոշակային համակարգի արդյունավետության և ֆինանսական կենսունակության բարձրացման ուղղությամբ: 2004 թ. կենսաթոշակների գծով ծախսերը⁷ նախորդ տարվա համեմատ աճել են շուրջ 20 տոկոսով և կազմել 50.9 մլրդ դրամ (կամ ՀՆԱ 3 տոկոսը):

Աղյուսակ 11. Կենսաթոշակների գծով համախմբված բյուջեի ծախսերը 2003-2005 թթ.

	2003	2004	2005	2003	2004	2005
	ԱՅՈՑ			Փաստ	Փաստ	Բյուջե
Ընդամենը, մլրդ դրամ¹	40.6	47.0	53.2	42.6	50.9	63.3
<i>ՀՆԱ նկատմամբ՝ տոկոս</i>	2.8	2.9	3.0	2.6	2.7	3
<i>Համախմբված բյուջեի ծախսերի նկատմամբ՝ տոկոս</i>	10.8	12.1	12.6	11.7	12.9	13
<i>Սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության ծախսերի նկատմամբ՝ տոկոս</i>	56.9	56.8	56.6	58.4	57.6	56
<i>Փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ՝ տոկոս</i>	18.8	15.6	13.2	24.7	19.6	24.3
<i>այդ թվում՝</i>						
Ապահովագրական (աշխատանքային) կենսաթոշակներ, մլրդ դրամ	38.6	44.2		40.6	47.9	60.7
<i>ՀՆԱ նկատմամբ՝ տոկոս</i>	2.6	2.7		2.5	2.5	2.8
Սոցիալական կենսաթոշակներ, մլրդ դրամ	2.0	2.7		2.0	3.0	2.6
<i>ՀՆԱ նկատմամբ՝ տոկոս</i>	0.1	0.2		0.1	0.2	0.12

¹ Առանց պետական բյուջեից ֆինանսավորվող սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների ու շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման գծով ծախսերի:

Աղբյուրը՝ ՀՀ ՍԱՊԴ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ԱՅՈՑ կանխատեսումներ:

⁶ ԱՅՈՑ սոցիալական մոնիտորինգի որակական գնահատման հաշվետվություն, «Հազարաշեն» ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն, 2005թ, Երևան

⁷ Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների ու շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման գծով պետական բյուջեից ֆինանսավորվող ծախսերը ներառված չեն:

94. Կենսաթոշակների գծով ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է եղել երկու գործոններով՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամի (ՀՀ ՍԱՊՀ) եկամուտների աճով, ինչպես նաև սոցիալական կենսաթոշակների և ոչ ապահովագրական բնույթ ունեցող վճարների ֆինանսավորման և ապահովագրական կենսաթոշակների ֆինանսավորման առանձնացմամբ: Մասնավորապես, 2003 թ.-ից սոցիալական կենսաթոշակները ֆինանսավորվում են պետական բյուջեի միջոցների հաշվին, իսկ 2004 թ.-ից պետական բյուջեից են ֆինանսավորվում նաև ապահովագրական ստաժում ներառվող աշխատանքային և այլ գործունեության այն ժամանակահատվածների դիմաց հավելումները, որոնց համար սոցիալական վճարումներ կատարելու պարտավորությունը օրենքով դրվում է պետության վրա:
95. Ընդհանուր ռեսուրսային փաթեթի բարելավումը հնարավորություն է տվել շարունակաբար բարձրացնել ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը՝ դրանով նպաստելով աշխատանքային ստաժից կախված կենսաթոշակների չափերի տարբերակման աստիճանի ավելացմանը: Մասնավորապես, 2003 թ. առաջին երեք եռամսյակներում այն կազմել է 100 դրամ (2002 թ. չորրորդ եռամսյակի 80 դրամի համեմատ), իսկ հոկտեմբերից՝ 120 դրամ: 2004 թ. հունվարից ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը կրկին բարձրացվել և սահմանվել է 140 դրամ⁸:
96. Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են իրականացվել կենսաթոշակային համակարգի բարեփոխումների ուղղությամբ: 2004 թ. դեկտեմբերին ՀՀ Նախագահի կարգադրությամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը մշակել է կենսաթոշակային բարեփոխումների հայեցակարգային մոտեցումներն ու կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ծրագիր-ժամանակացույցը: Նշված փաստաթղթերը հաստատվել են ՀՀ կառավարության 2005 թ. ապրիլի 28-ի թիվ 666-Ն որոշմամբ, համաձայն որի Հայաստանի Հանրապետությունում պետք է ներդրվի կենսաթոշակային ապահովության եռաստիճան (խառը) համակարգ: Հիմք ընդունելով հայեցակարգային մոտեցումները՝ ներկայումս մշակվում է կենսաթոշակային ապահովության նոր ռազմավարությունը:
97. Կենսաթոշակային ապահովագրության համակարգի բարեփոխումների շրջանակներում ներկայումս ընթացքի մեջ են անհատական (անձնավորված) հաշվառման համակարգի ներդրման ուղղությամբ կատարվող աշխատանքները: Ակնկալվում է, որ համակարգի գործունեության և անհատականացված հաշվետվությունների առկայության պարագայում հնարավոր կլինի ունենալ հավաստի տեղեկատվություն յուրաքանչյուր անձի աշխատավարձի, կատարված սոցիալական վճարումների չափի և ապահովագրական ստաժի վերաբերյալ, որն էլ հնարավորություն կտա անմիջական կապ ստեղծել աշխատողի աշխատավարձի, կուտակված ապահովագրական վճարների մեծության և ապագա կենսաթոշակների չափերի միջև:
98. Կենսաթոշակային համակարգի առաջ կանգնած խնդիրներից հարկ է առանձնացնել դեռևս լուծում չստացած գյուղացիական տնտեսություններում զբաղվածների⁹

⁸ Ըստ ՀՀ կառավարության սեպտեմբերի 9-ի համապատասխան որոշման, 2004 թ. հոկտեմբերից ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը կազմելու է 160 դրամ:

⁹ 2003թ. հունվարից գյուղացիական տնտեսություններում զբաղվածները ազատվել են պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ կատարելու պարտականությունից

կենսաթոշակային ապահովագրության համակարգին կամավոր մասնակցության հարցերի օրենսդրական կարգավորումը: Այս առումով ԱՅՈՒՑ առաջիկա վերանայումների ընթացքում անդրադարձ կկատարվի այդ խնդրին:

99. Սոցիալական ապահովության քարտերի համակարգի ներդրման արդյունքում զգալիորեն բարելավվել է գործող տեղեկատվական բազաներում ներառված տվյալների որակը, դրանց հավաստիությունը: Մասնավորապես՝ կենսաթոշակառուների տեղեկատվական բազա ներառված 540. 000 տվյալից ճշգրտման ենթակա է եղել 355.000-ը սոցիալական ապահովության քարտերի տեղեկատվական բազայի տվյալների հետ համադրման միջոցով:
100. Բարելավվել են նաև աղքատության ընտանեկան նպաստի տեղեկատվական բազա ներառված տվյալները, որոնցից 500.000 նպաստառուների տվյալներից 300.000-ը ենթակա է եղել ճշգրտման, իսկ մի քանի փուլով իրականացված համադրումների շնորհիվ առ 01.01.2005 թ. ճշգրտվել է 200.000 տվյալ: Նմանօրինակ միջոցառումներ են իրականացվել նաև հաշմանդամների և գործազուրկների տեղեկատվական բազաների առնչությամբ. առաջինում ներառված 170.000 տվյալից ճշգրտման ենթակա է եղել 100.000-ը, որից 20.000-ը ճշգրտվել է, իսկ մյուս տվյալների ճշգրտումը դեռևս ընթացքի մեջ է, 2-րդում ներառված 52.000 տվյալից ճշգրտման ենթակա է եղել 14.000 տվյալ, 10.000-ը ճշգրտվել է:
101. Տարեցների և հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական սպասարկման հանրապետական կենտրոնը Երևան քաղաքում սպասարկում է խնամքի կարիք ունեցող միայն 1200 միայնակ ծերերի և հաշմանդամների: Եթե նկատի ունենանք, որ հանրապետությունում բնակվում է 11000 միայնակ անժառանգ կենսաթոշակառու, ապա պարզ կդառնա, թե որքան զգալի է նման ծառայությունների ավելացման պահանջը: Ի դեպ այս խնդրի լուծմանն ուղղված 1997թ. ՀՀ կառավարության նոյեմբերի 4-ի թիվ 485 որոշումը տնային պայմաններում սոցիալական սպասարկման ծառայությունների ընդլայնման և հանրապետության մարզերում ծառայությունների կազմակերպման ուղղությամբ դեռևս լիարժեքորեն չի կատարվում:
102. Այդ առումով առաջարկվում է վերոնշյալ խնդիրը լուծել սոցիալական որոշ փաթեթների իրականացումը քաղաքացիական հասարակության ինստիտուտներին պատվիրակելու միջոցով, ելնելով այն իրողությունից, որ Հայաստանում առկա են դոնորների ֆինանսական աջակցությամբ նման ծրագրեր իրականացնելու հաջողված փորձեր. օրինակ՝ «Առաքելություն-Հայաստան» ոչ կառավարական բարեգործական կազմակերպությունը միայն 2004 թ. տնային սպասարկման ծառայություններ է մատուցել շուրջ 8697 տարեցների, 9744 փախստականների¹⁰: Նման փորձափութական առաջարկ է առաջ քաշվել նաև «Մարդկային աղքատությունն ու աղքատամետ քաղաքականությունը Հայաստանում» ՄԱԶԾ զեկույցում¹¹, ինչպես նաև սույն հաշվետվության միջանկյալ մասնագիտական քննարկման ժամանակ¹²:

¹⁰ «Առաքելություն-Հայաստան» ՀԿ-ի պաշտոնական տեղեկանք
¹¹ Մարդկային աղքատությունն ու աղքատամետ քաղաքականությունը Հայաստանում, Ձեկույցի նախագիծ, ՄԱԿ, ՄԱԶԾ, էջ 66, 2005թ.
¹² ԱՅՈՒՑ աշխատանքային խմբի ընդլայնված մասնագիտական քննարկման արձանագրություն, տես էլեկտրոնային կայք www.prsp.gov.am

Նշված խնդրին անդրադարձ կատարվի ԱՅԻՆ առաջիկա վերանայման ընթացքում:

103. ՀՀ կառավարության 2004 թ. օգոստոսի 5-ի «ՀՀ կառավարության 2003 թ. օգոստոսի 8-ի «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը» N 994-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1225-Ն որոշմամբ ԱՅԻՆ-ի մի շարք դրույթներում ամրագրելով զբաղվածության ակտիվ քաղաքականություն իրականացնելու անհրաժեշտությունը, զբաղվածության ոլորտին վերաբերող դրույթները համապատասխանեցվել են այդ քաղաքականության իրականացման գաղափարախոսության հետ: Մասնավորապես՝ աշխատանք փնտրող անձին տրվող դրամական օգնության ծրագիրը փոխարինվելու են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող՝ աշխատաշուկայում մրցունակության տեսանկյունից խոցելի խմբերին պատկանող անձանց ֆինանսական աջակցության այլ ծրագրերով (աշխատավարձի փոխհատուցման և այլ ծրագրերով), որով ևս մեկ քայլ է արվում զբաղվածության քաղաքականության ակտիվացման ուղղությամբ:
104. Թեև հանրապետությունում ընդհանուր առմամբ նկատվում է գործազրկության մակարդակի անկում, սակայն Շիրակի, Սյունիքի և Լոռու մարզերում այն շարունակում է մնալ հանրապետության միջինից մոտ 2 անգամ ավելի բարձր:
105. Այս իրողությունը նկատի ունենալով է, որ զբաղվածության ոլորտում, սկսած 2004թ., իրականացվում է տարածաշրջանային քաղաքականություն, ինչի դրական ազդեցությունը դրսևորվեց հատկապես «Նպաստ աշխատանքի դիմաց» ծրագրի շրջանակներում: Ավելացել է թե՛ ծրագրերում ընդգրկված համայնքների, թե՛ աշխատանք փնտրողների թիվը. 555 ծրագրով իրականացված աշխատանքներում ընդգրկվել է մոտ 11800 մարդ: Հետագայում էլ զբաղվածության ոլորտում նախատեսվում է առաջնորդվել տարածաշրջանային-նպատակային քաղաքականության սկզբունքով՝ թե՛ ակտիվ, թե՛ պասիվ ծրագրերի, թե՛ հասարակական աշխատանքների իրականացման առումով:
106. Աղքատության և սոցիալական ազդեցության գնահատում (PSIA) որակական հետազոտության արդյունքները¹³ (հետազոտությունը կատարվել է 2004 թ. երկու քաղաքներում Չարենցավան և Ստեփանավան՝ պարզելու ԱՅԻՆ-ով նախատեսված զբաղվածության և ընտանեկան նպաստների քաղաքականությունների կիրառման աստիճանը) վկայում են, որ դեռևս խնդիրներ կան ներքին մոնիտորինգի («Զբաղվածության ծառայություն» գործակալության՝ իր կենտրոնների մոնիտորինգի) ոլորտում. հարցվողների գերակշիռ մասը տեղեկացված չէ իր իրավունքներից, գործող ծրագրերից և առկա են խախտումներ, մասնավորապես, «Նպաստ աշխատանքի դիմաց» ծրագրում գրանցված և իրականում գործող անձինք միշտ չէ, որ համընկնում են:
107. ՀՀ կառավարության 2004 թ. դեկտեմբերի 2-ի «ՀՀ կառավարության 1999թ. ապրիլի 19-ի N 235 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1667-Ն որոշմամբ բարձրացվել է գործազրկության բազային նպաստը, սահմանելով նվազագույն ամսական աշխատավարձի 60 տոկոսի չափով՝ 7800 դրամ:

¹³ Գերմանական տեխնիկական համագործակցություն՝ ԳՏՀ, ԱՅԻՆ ենթածրագիր՝ ԱՍԱԳ

108. Փորձագիտական գնահատականները փաստում են, որ Հայաստանում, ինչպես ընդհանուր, այնպես էլ երիտասարդների գործազրկության իրական մակարդակները անհամեմատ ավելի բարձր են, քան զբաղվածության ծառայությունների կողմից արձանագրվող գործազրկության մակարդակը: Համաձայն 1996 թ. իրականացված աշխատուժի հետազոտության գործազուրկների միայն 25 տոկոսն էին գրանցված զբաղվածության ծառայություններում: Նման իրավիճակն այդ ժամանակվանից մնացել է անփոփոխ: Ըստ փորձագիտական գնահատականների, որոնք հիմնված են 2003 թ. աշխատուժի ուսումնասիրությունների վրա, իրական գործազրկության մակարդակը գերազանցում է պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը շուրջ 4 անգամ՝ ընդ որում, մեծահասակների համար այն ավելի է շուրջ 2.5, իսկ երիտասարդների համար՝ շուրջ 11 անգամ: Պետք է նշել, որ Հայաստանում այս ցուցանիշների անհամապատասխանության վրա, վերը նշված պատճառներից բացի, ազդում է նաև այն հանգամանքը, որ, համաձայն «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքի, գործազուրկի կարգավիճակ չեն կարող ստանալ այն անձինք, ովքեր չունեն առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձ: Հասկանալի է, որ այս դրույթն առաջին հերթին վերաբերում է երիտասարդ բնակչությանը և այլ գործոնների հետ միասին հանգեցնում է գրանցված և իրական գործազրկության տարիքային կառուցվածքների էական տարբերությունների¹⁴:
109. Նշենք նաև, որ Հայաստանում աշխատուժի ուսումնասիրությունների հիման վրա աշխատանքի շուկային վերաբերող տեղեկատվության խիստ անբավարարությունը և համադրելիության ցածր աստիճանը էականորեն սահմանափակում են գործազրկության և զբաղվածության բնագավառում վերլուծությունների շրջանակը և հնարավորությունները¹⁵: Մասնավորապես, «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում» ՀՀ ԱՎԾ վերլուծական զեկույցում 2002-2003 թթ. տնտեսապես ակտիվ բնակչության վերաբերյալ (զբաղվածության վարչական վիճակագրության մասով) ցուցանիշները համադրելի չեն նախորդ տարիների նույնանուն ցուցանիշների հետ:
110. Կառավարությունը հատուկ կարևորում է երեխաների սոցիալական օժանդակության ծրագրերը: 2003 - 2004 թթ. ուղրտում առկա խնդիրները լուծելու նպատակով ընդունվել են մի շարք իրավական ակտեր: Մասնավորապես, հաստատվել է առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը, 2003 թ.-ից իրականացվում է ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին պետական աջակցության ծրագիրը, որի նպատակներն են ՀՀ մանկատների 1991-2003 թթ. շրջանավարտների սոցիալական պաշտպանությունը և նրանց ինտեգրումը հասարակության մեջ¹⁶: Ծրագրեր են իրականացվում նաև պետական խնամքի տակ գտնվող առանց ծնողական խնամքի մնացած

¹⁴ Հայաստանի աշխատաշուկայի նախնական վերլուծություն՝ շեշտադրելով երիտասարդության հարցերը, Ավարտական զեկույց, Մաս Ա էջ 52, «Ավագ Սոլյուշն» ՍՊԸ, ք.երևան, 2004 թ.

¹⁵ Հայաստանի աշխատաշուկայի նախնական վերլուծություն՝ շեշտադրելով երիտասարդության հարցերը, Ավարտական զեկույց, Մաս Ա, էջ 53, «Ավագ Սոլյուշն» ՍՊԸ, ք.երևան, 2004 թ.

¹⁶ 2004 թ. բյուջեով այս ծրագրի գծով նախատեսվել է 335 մլն դրամ՝ նախորդ տարվա 200 մլն դրամի համեմատ:

երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, ընտանկան կամ ընտանեկանին մոտեցված միջավայրում երեխաների խնամքի և դաստիարակության ապահովման, ինչպես նաև մանկատների բեռնաթափման, մանկատներից երեխաների դուրս բերման ճանապարհով դրանցում տեղ գտած սոցիալական որբության կրճատման ուղղությամբ:

111. ՀՀ կառավարությունը 2004 թ. ապրիլի 8-ին հաստատել է «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագիրը և Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրի միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 945-Ն որոշումը, որը նպաստելու է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովմանը, ինչպես նաև օժանդակելու է կանանց սոցիալ-տնտեսական հարցերի կարգավորմանը՝ դրանով իսկ նպաստելով երկրում աղքատության հաղթահարմանը:
112. ՀՀ կառավարության կողմից ընդունվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին ճանաչելու և մանկատներում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» 2004 թ. օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն և «Մանկատան (անկախ կազմակերպական իրավական ձևից) շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին» 2005 թ. փետրվարի 17-ի թիվ 158-Ն որոշումները: Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի ներդրման կապակցությամբ 2004 թ. դեկտեմբերի 5-ին ՀՀ վարչապետի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի և մարզային հանձնաժողովների (Երևանի քաղաքային հանձնաժողովի) ստեղծման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» որոշումը: Երեխաների իրավունքների պաշտպանությանն է ուղղված նաև 2005 թ. հունվարի 20-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված «Երեխայի իրավունքների պաշտպանության տարեկան ծրագիրը հաստատելու մասին» թիվ 196-Ն որոշումը:
113. 2004-2005 թթ. շարունակվել է «Ճապոնական սոցիալական զարգացման հիմնադրամի երեխաների խնամքի համակարգի բարեփոխումների փորձարկման համար T051331 դրամաշնորհային ծրագիրը», որի շրջանակներում նախատեսվում է ստեղծել ռիսկի ենթակա երեխաների համար համայնքային կենտրոններ Երևանում և Գյումրիում:
114. Կառավարությունը շարունակել է աշխատանքները փախստականների և ներքին տեղահանվածների բնակարանային պայմանների բարելավման ու ինտեգրացիայի ապահովման գործում: Իրականացվել է Հայաստանի տարածքում ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների հաշվառում, ուսումնասիրվել են փախստականների 3570 ընտանիքների բնակարանային պայմանները, շահառու է ճանաչվել 3470 ընտանիք: ՀՀ կառավարության կողմից 2004 թ.-ի մայիսի 20-ին ընդունվել է «1988-1992 թթ.-ին Ադրբեջանից բռնազաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագիրը»: Հանրապետության 9 մարզերում (բա-

ցառությամբ Երևան քաղաքի և Կոտայքի մարզի), 2005-2007 թթ.-ին կլուծվի ժամանակավոր կացարաններում բնակվող 820 փախստական ընտանիքների բնակարաններով ապահովման խնդիրը:

115. Կառավարությունը փորձում է լուծել փախստականներին փոքր և միջին բիզնեսով զբաղվելու հնարավորություններ ստեղծելու խնդիրը, մասնավորապես այս շահառու խումբը ճանաչվել է իբրև նախապատվություն ունեցող «Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության 2005 թ. ծրագրում»:
116. Բնակչության հատուկ պաշտպանության կարիք ունեցող շերտերի նկատմամբ վարած քաղաքականության մեջ արձանագրվել են նաև որոշակի խնդիրներ: Մասնավորապես, 2004 թ. հուլիսի 22-ի N1094-Ն որոշմամբ փոփոխություններ կատարվեց «Ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման կարգի մասին կանոնները հաստատելու մասին 1992 թ. նոյեմբերի 15-ի N 579 որոշման մեջ և ուժը կորցրած ճանաչվեց հաստատված կանոնների 16-րդ կետը, որի համաձայն կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման դեպքում վնասը փոխհատուցում է (վնասի փոխհատուցումը շարունակում է) նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի հաշվին: Վերջինիս արդյունքում ռիսկային խմբում հայտնված մարդիկ առավել վտանգված են և խնդրի աղքատամետ լուծման որոնումը օրակարգային է:

Առողջապահություն

117. Առողջապահության ոլորտում ԱՅՌԾ հիմնական նպատակներն են առողջապահական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը՝ ուշադրությունը, առաջին հերթին, կենտրոնացնելով բուժօգնության առաջնային օղակի և տարածքային կտրվածքով ամհամամասնությունների մեղմման վրա: Դրված նպատակների ապահովման ուղղությամբ նախանշվում է առողջապահության ոլորտ ուղղվող պետական ծախսերի ավելացում և համակարգի կառավարման բարելավման ու արդյունավետության բարձրացման ուղղությամբ միջոցառումների իրականացում:
118. 2004 թ. առողջապահության բնագավառում պետական ծախսերը հիմնականում բնորոշվել են դրական զարգացումներով. 2004 թ. 2003 թ. համապատասխան ցուցանիշի մակարդակը գերազանցել է 26 տոկոսով և կազմել 24.7 մլրդ դրամ: Առողջապահության բյուջեն 2003 թ. կազմել է 21 մլրդ. դրամ, 2004 թ. 25 մլրդ. դրամ, իսկ 2005 թ. 32.մլրդ. դրամ: 2004 թ. բյուջեն կատարվեց ավելի քան 99 տոկոսով, ինչի արդյունքում բուժհիմնարկները պետպատվերի պայմանագրային պարտավորությունների սահմաններում ֆինանսավորվեցին ամբողջ ծավալով:
119. Թեև 2004 թ. առողջապահության բնագավառում պետական ծախսերի մակարդակն անվանական արտահայտությամբ համահունչ է եղել ԱՅՌԾ ծրագրային ցուցանիշին, այդուհանդերձ, հիմնականում պայմանավորված փաստացի տնտեսական

աճի ծրագրվածից ավելի բարձր տեմպերով, որոշակի շեղումներ են արձանագրվել առողջապահության բնագավառում ծախսեր-ՀՆԱ հարաբերակցությունում:

Աղյուսակ 12. Պետական բյուջեի ծախսերը առողջապահության բնագավառում 2003-2005 թթ.

	2003	2004	2005	2003	2004	2005
	ԱՅՈՒՆ			Փաստ	Փաստ	Բյուջե
Ընդամենը, մլրդ դրամ	21.0	24.9	30.8	19.6	24.7	32.2
ՀՆԱ նկատմամբ՝ տոկոս	1.4	1.5	1.8	1.2	1.3	1.52
Պետական բյուջեի ծախսերի նկատմամբ՝ տոկոս	6.4	7.3	7.7	6.4	6.2	8
Փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ՝ տոկոս	31.2	18.6	23.5	22.6	26	30

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ԱՅՈՒՆ կանխատեսումներ:

120. Առողջապահության բնագավառին ուղղվող ֆինանսական հատկացումների աճի արդյունքում մեկ շնչի հաշվով պետական բյուջեի ծախսերը 2004 թ. կազմել են 7.8 հազ. դրամ, իսկ 2005 թ.՝ մոտ 10.0 հազ. դրամ:
121. 2005 թ. ամբուլատոր-պոլիկլինիկայի բժշկական անձնակազմի աշխատողների ամսական աշխատավարձը բարձրացվել է հասցնելով 46800 դրամի նախորդ տարվա 36000 դրամի դիմաց, իսկ միջին բուժանձնակազմի աշխատողների ամսական աշխատավարձը՝ 29900 դրամի նախորդ տարվա 23000 դրամի դիմաց:
122. Հիվանդանոցային բժշկական անձնակազմի աշխատողների ամսական աշխատավարձը բարձրացվել է մինչև 37500 դրամ (նախորդ տարվա 33500 դրամի դիմաց), իսկ միջին բուժանձնակազմի աշխատողների ամսական աշխատավարձը՝ մինչև 29300 դրամ (նախորդ տարվա 24550 դրամի դիմաց):
123. 2004 թ. համակարգի շուրջ 80 տոկոս բուժհաստատություններում իրականացվել են վերանորոգման ու վերազինման աշխատանքներ: Հաշվետու ժամանակաշրջանում բացվել են ժամանակակից բուժարքավորումներով ու տեխնոլոգիաներով հագեցած բաժանմունքներ:
124. Կարևորելով **առաջնային բուժօգնության** նշանակությունը, ՀՀ կառավարությունը ընդունել է «ՀՀ բնակչության առողջության առաջնային պահպանման 2003-2008 թթ. ռազմավարությունը», որի նպատակն է բարելավել առողջության առաջնային պահպանման օղակում ցուցաբերվող բուժօգնության մատչելիությունը, որակն ու արդյունավետությունը, մասնավորապես **ընտանեկան բժշկության համակարգը** ներդնելու ճանապարհով: Այս համատեքստում կառավարությունը միջոցառումներ է իրականացնում համակարգի գործունեության կառավարման և ֆինանսավորման համապատասխան մեթոդների ներդրման ուղղությամբ: Հատուկ կարևորություն է տրվում նաև կադրերի պատրաստման և վերապատրաստման խնդիրներին՝ փորձնական ծրագրերում ներգրավելով ինչպես Երևան քաղաքի, այնպես էլ մարզերի ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունները:

125. «Առողջապահության համակարգի ֆինանսավորման տարեցտարի ավելացումն և այդ համատեքստում առողջության առաջնային պահպանմանը՝ որպես գերակայություն, ուղղվող գումարների զգալի աճը 2005 թ.-ին հնարավոր դարձրեց 65 տարեկան և բարձր տարիքի անձանց անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնությունը կազմակերպել առաջնային /ամբուլատոր-պոլիկլինիկական/ օղակի բոլոր մակարդակներում, առանց տեսակների և ծավալների սահմանափակման, ինչպես նաև անվճար դարձնել առաջնային օղակում սրտաբանական ծառայությունը, հաշվի առնելով սիրտ-անոթային համակարգի հիվանդություններից մահացության բարձր մակարդակը: Բացի այդ, 2005 թ.-ին առողջության առաջնային պահպանման օղակում ներդրվել են բուժօգնության որակի վերահսկման չափորոշիչները: Իսկ 2006 թ.-ին պետության կողմից երաշխավորված անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական օգնության շրջանակներում ընդգրկվել են բնակչության բոլոր տարիքային խմբերը:
126. Համակարգը զերծ չի մնացել նաև կոռուպցիոն դրսևորումներից, մասնավորապես տնային տնտեսությունների կողմից ցույց տրված առողջապահական ծառայությունների սպառման ծավալները 4.48 անգամ գերազանցում են առողջապահության ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ցույց տրված բնակչության միջոցների հաշվին մատուցված ծառայությունների ծավալին¹⁷:
127. Դեղերի ապահովվածության խնդրում կառավարությունը վարել է հասցեագրված ուղղվածություն ունեցող քաղաքականություն: Բնակչության անվճարունակ խավերի համար դեղորայքային ապահովության մատչելիությունը բարձրացնելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակվել, շահագրգիռ ծառայությունների հետ համաձայնեցվել և ՀՀ առողջապահության նախարարի 20.07.04 թ. N759-Ն հրամանով հաստատվել է «Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերին և առանձին հիվանդություններով տառապող անձանց դեղերով ապահովման կարգը»: ՀՀ առողջապահության նախարարի 2005 թ. հունվարի 27-ի N 74-Ն հրամանով վերը նշված կարգը լրամշակվել է և 2004 թ. սահմանված կարգով հաստատված ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից գնման ենթակա դեղերի ցանկը հանվել է, ինչը հնարավորություն է տվել ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպություններում բուժումը կազմակերպել առավել արդյունավետ: Արդյունքում դեղերի տրամադրման նպատակով բնակչության կողմից ՀՀ առողջապահության նախարարությանն ուղղված դիմումները նվազել են 40%-ով¹⁸:
128. Չնայած կառավարության կողմից ձեռնարկած քայլերին, դեռևս դեղերի թե՛ ֆիզիկական, և թե՛ ֆինանսական մատչելիությունը չլուծված խնդիր է համարվում:

¹⁷ «Հայացք տնտեսությանը», թիվ 14(26) Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոնի տեղեկագիր, 25. նոյեմբերի 2004թ.

¹⁸ Նույն տեղում:

Ըստ փորձագիտական գնահատականների, հիվանդանոցային բուժօգնության համար պահանջվող դեղերի հիմնական մասը ձեռք է բերվում հիվանդի կողմից, ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության ընթացքում անհրաժեշտ դեղերը ձեռք են բերվում հիմնականում այցելուների կողմից՝ դեղատնային ցանցից¹⁹ :

129. Վերջինս հատկապես զարգացած չէ գյուղական բնակավայրերում: ՄՁԱԳ-ի շրջանակում հետազոտված 170 գյուղական համայնքների մոտ 90%-ում դեղատուները բացակայում է կամ չի գործում: Ընդ որում այդ համայնքների բնակչության շուրջ 77%-ը ստիպված է դեղերը ձեռք բերել համայնքի տարածքից 6 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող դեղատներից: Այդ մասին են վկայում նաև Օքսֆամ (ՄԲ) հայկական գրասենյակի նախաձեռնությամբ 2003-2004 թթ. ընթացքում հանրապետության չորս մարզերում իրականացված հետազոտության արդյունքները²⁰, ըստ որի գյուղական համայնքներում դեղատների բացակայությունը ստիպում է գյուղաբնակների շուրջ երկու երրորդին օգտվել մարզային քաղաքների, իսկ 10-25%-ին նաև մայրաքաղաքի դեղատներից:
130. **Տարածքային** կտրվածքով առկա անհամասնությունները վերացնելու ուղղությամբ իրականացվող միջոցառումները միտված են մարզերի, հատկապես գյուղական բնակավայրերի, բուժհաստատությունների նյութատեխնիկական բազայի բարելավմանը և ժամանակակից սարքավորումներով ապահովմանը: 2004 թ. բյուջեն այս նպատակով նախատեսել է համապատասխան հատկացումներ և գործընթացը ներկայումս ընթացքի մեջ է: Բացի այդ, նպատակ է հետապնդվում մարզերում բարձրացնել ախտորոշիչ ծառայությունների հասանելիությունը և մարզային պոլիկլինիկաների հետ կնքվել են դժվարամատչելի ախտորոշիչ ծառայությունների մատուցման պայմանագրեր: Գյուղական բնակավայրերում բնակչությանը շտապ բուժօգնության ծառայությունների մատչելիության ապահովման և այդ գործառնությունները առաջնային օղակի բժիշկներին ամրագրելու ուղղությամբ հանրապետության մարզերի շուրջ 80 գյուղական բժշկական ամբուլատորիաներին, որոնց Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում տրամադրվել են շտապ օգնության մեքենաներ, 2004 թ. ՀՀ առողջապահության նախարարությունը թույլատրել է շտապ օգնության կանչերն իրականացնել պետական պատվերի շրջանակներում:
131. «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» գերակայություններից է **մոր և մանկան առողջության պահպանումը**՝ միտված Հազարամյակի հռչակագրում ամրագրված համապատասխան նպատակների ապահովմանը²¹: Կա-

¹⁹ Մարդկային աղքատությունը ու աղքատամետ քաղաքականությունը Հայաստանում, էջ 28, UNDP ՀՀ կառավարություն, Երևան 2005

²⁰ «Շիրակի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում առաջնային բուժօգնության և ոռոգման ջրի իրավիճակի մոնիտորինգ և գնահատում, Պրակ 6, Ջանգվածային հետազոտություն, Օքսֆամ, Երևան, 2004»

²¹ Մանկական և մայրական մահացության ցուցանիշների վերջին տարիներին դրսևորած վարքագիծը հուսադրող է և նման միտումների պահպանման պարագայում Հազարամյակի հռչակագրի նպատակները կապահովվեն: Այդուհանդերձ, ծնունդների և մանկական մահացության գրանցման գործընթացում առկա են որոշ վիճակագրական խնդիրներ, որոնց լուծման ուղղությամբ համագործակցում են ՀՀ առողջապահության և արդարադատության նախարարություններն ու ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը:

ռավարությունը, կարևորելով այս խնդիրները, հաստատել է մի շարք ծրագրային փաստաթղթեր, որոնք ուղղված են ԱՅԴԾ-ում ամրագրված համապատասխան ծրագրային դրույթների կատարմանը: Մասնավորապես, 2003 թ. կառավարությունը հաստատել է «Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015 թթ. ռազմավարությունը», որի նպատակներից են, մասնավորապես մանկական և մայրական մահացության կրճատումը, ցածր քաշով նորածինների թվաքանակի կրճատումը, պատվաստումներով ընդգրկվածության 95 տոկոս և ավելի մակարդակի ապահովումը, բացառապես կրծքով սնուցման ցուցանիշի աճը:

132. Այս համատեքստում հատուկ ուշադրություն է դարձվել մանկաբարձա-գինեկոլոգիական օգնության որակի բարձրացմանը և ծննդօգնության հաստատությունների նյութատեխնիկական հենքի ամրապնդմանը: Դա իր արտացոլումն է գտել նաև պետության ծախսային ծրագրերում: Մասնավորապես, մանկաբարձա-գինեկոլոգիական բուժօգնության գծով 2004 թ. բյուջեում ամրագրված ծախսերը շուրջ 20 տոկոսով գերազանցում են նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը, իսկ մեկ ծննդաբերության ծախսերը 2004 թ. պլանավորվել են 42 հազ. դրամ՝ նախորդ տարվա 36 հազ. դրամի դիմաց: Բացի պետական ֆինանսավորումից, այս ուղղությամբ կատարվող աշխատանքներում մեծ է դոնոր կազմակերպությունների և պետությունների ավանդը՝ հատկապես տարածքային կտրվածքով խնդիրների լուծման պարագայում²²:

133. Կառավարության կողմից շարունակաբար իրականացվում են այնպիսի **տարափոխիկ հիվանդությունների** դեմ պայքարի և կանխարգելման ծրագրեր, ինչպիսիք են տուբերկուլյոզը, մալարիան և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը: 2003 թ. կառավարությունը հաստատել է «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագիրը», որի նպատակներն են տուբերկուլյոզի կանխարգելման, հայտնաբերման և բուժման համակարգված իրականացումը, բնակչությանը հակատուբերկուլյոզային դեղորայքի անվճար տրամադրումը, բնակչության հիվանդացության, հաշմանդամության հետագա զարգացման և մահացության կանխումը: Թեև մալարիայի դեպքերը տարեց-տարի նվազում են և իրականացվող ծրագրերը տալիս են իրենց արդյունքը, այդուհանդերձ հիվանդության լրիվությամբ վերացումը պահանջելու է լրացուցիչ ջանքեր: Ընթացքի մեջ է նաև «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագիրը», որի շրջանակներում, մասնավորապես միջոցառումներ են իրականացվում բնակչության շրջանում բժշկական և հիգիենիկ կրթության ուղղությամբ, պարբերաբար կանխարգելիչ աշխատանքների են տարվում ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի խմբերում, գործում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով մարդկանց, նրանց ընտանիքի անդամների, խնամողների և բուժաշխատողների համար տեղեկատվական կենտրոնը և ՄԻԱՎ-ի նկատմամբ կամավոր խորհրդատվության և հետազոտության կետեր:

134. Առողջապահության բնագավառում բարեփոխումների առանցքային ուղղություններից են հանդիսանում համակարգի **կառավարման կատարելագործումը և արդ-**

²² Մասնավորապես, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ Արմավիրի և Սպիտակի ծննդօգնության հաստատություններին տրամադրվել են ռեանիմոբիլներ՝ անհետաձգելի մանկաբարձական բուժօգնություն ապահովելու նպատակով, և առաջիկայում նախատեսվում է ընդլայնել նման ծառայությունների տարածվածությունը՝ հատկապես հեռավոր շրջաններում:

յունավետության բարձրացումը: Այս ուղղությամբ կատարված աշխատանքները վերաբերել են ինչպես առողջության առաջնային պահպանման օղակի, այնպես էլ հիվանդանոցային բուժօգնության հաստատություններին: Համակարգի օպտիմալացումը նպատակ է հետապնդում ապահովել առողջապահական ծառայությունների բեռի տեղաշարժ համեմատաբար թանկ հիվանդանոցային բուժօգնությունից դեպի ավելի մատչելի և համեմատաբար էժան առաջնային բուժօգնության օղակ: Միևնույն ժամանակ, հիվանդանոցային բուժօգնության մակարդակում պետությունը նպատակ է հետապնդում առկա սահմանափակ միջոցները կենտրոնացնել հնարավորին չափ քիչ թվով հաստատություններում: Այսպես, 2004 թ. հիվանդանոցային բուժօգնության պետական պատվերը տեղադրվել է ընտրովի բազմապրոֆիլ հիվանդանոցներում՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված չափանիշներով: Հաստատությունների գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորվել է միավորման ճանապարհով դրանց խոշորացումը՝ հատկապես Երևան քաղաքում:

Կրթություն

135. Կրթության ոլորտում ԱՅՈՒՆ հիմնական նպատակներն են կրթության մատչելիության ապահովումը և որակի բարձրացումը՝ առաջնահերթությունը տալով հանրակրթության բնագավառին: Դրված նպատակների ապահովման ուղղությամբ նախանշվում է կրթության ոլորտ ուղղվող պետական ծախսերի ավելացում և համակարգի արդյունավետության բարձրացման ուղղությամբ միջոցառումների իրականացում:
136. Վերջին տարիներին կրթությանն ուղղվող պետական ծախսերի դինամիկայում արձանագրվել են դրական տեղաշարժեր: Այսպես, 2004թ. կրթության ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 2.33%-ը՝ 2003 թ. 1.96%-ի դիմաց, իսկ 2005 թ.՝ 2.74% (ՏՀՁԿ երկրներում կրթությանն ուղղված պետական ծախսերը միջինում կազմում են ՀՆԱ-ի 4.7%-ը):
137. 2004 թ. կրթության ոլորտին ուղղված պետական հատկացումների շուրջ 83.6%-ն ուղղվել է հանրակրթության ոլորտին, իսկ 14.1%-ը մասնագիտական կրթական ծրագրերի ֆինանսավորմանը, 2005 թ. համապատասխանաբար՝ 84.22% և 12.44%՝ ՏՀՁԿ երկրների 72% և 20%-ի դիմաց:
138. 2004 թ. հունիսին փոփոխություններ կատարելով 2003 թ. դեկտեմբերին հաստատված տարեկան բյուջեում, կրթության ոլորտին լրացուցիչ հատկացվել է շուրջ 7 մլրդ դրամ, որի գերակշիռ մասն ուղղվել է հանրակրթական դպրոցների շենքային պայմանների բարելավման կապիտալ ծախսերին: Այդ հանգամանքը հիմնականում պայմանավորել է կրթության բնագավառում պետական ծախսերի գծով ԱՅՈՒՆ շրջանակում 2004 թ. համար ծրագրված անվանական ցուցանիշի և 2004 թ. բյուջեի համապատասխան ցուցանիշի տարբերությունը: Միջոցների նման վերաբաշխումը հանգեցրել է ԱՅՈՒՆ ծրագրվածի համեմատ բյուջեի կառուցվածքի ինչպես միջոլորտային, այնպես էլ ներոլորտային որոշակի տեղաշարժերի. մի կողմից, համախմբված բյուջեի ընդհանուր ծախսերում ընդլայնվել է կրթության ոլորտ ուղղվող ծախսերի բաժինը, մյուս կողմից, կրթության ոլորտի ընդհանուր ծախսերում աճել է հանրակրթության բաժինը:

Աղյուսակ 13. Համախմբված բյուջեի ծախսերը կրթության բնագավառում 2003-2005 թթ.

	2003	2004	2005	2003	2004	2005
	ԱՅՈԾ			Փաստ		Բյուջե
Ընդամենը կրթություն, մլրդ դրամ	35.2	42.8	52	35.4	48.4	63.6
<i>ՀՆԱ նկատմամբ՝ տոկոս</i>	2.4	2.7	3	2.2	2.5	3
<i>Համախմբված բյուջեի ծախսերի նկատմամբ՝ տոկոս</i>	9.4	11.0	12.3	9.7	12.1	13
<i>Փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ՝ տոկոս</i>	18.3	21.6	21.4	19.1	36.7	31.4
Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն, մլրդ դրամ	23.0	30.2	37.5	23.2	34.4	45.3
<i>ՀՆԱ նկատմամբ՝ տոկոս</i>	1.6	1.9	2.1	1.4	1.8	2.1
<i>Կրթության բնագավառում ծախսերի նկատմամբ՝ տոկոս</i>	65.4	70.5	72.2	65.5	71.1	71.2
<i>Փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ՝ տոկոս</i>	23.2	31.0	24.2	23.4	48.3	31.7

Աղբյուրը՝ ՀՀ ԱԿԾ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ԱՅՈԾ կանխատեսումներ:

139. Կառավարությունը կրթության որակի բարձրացման կարևոր նախապայման է դիտում հանրակրթության ոլորտում զբաղված ուսուցիչների և վարչական անձնակազմի **աշխատավարձերի** բարձրացումը, ինչը հանդիսացել է կրթության բնագավառում պետական ծախսերի աճի առանցքային գործոններից մեկը: Այդ նպատակով կառավարությունը հետևողականորեն իրականացնում է աշխատավարձերի բարձրացման քաղաքականությունը՝ այն դիտելով որպես կրթության որակի բարձրացման գրավական: Մասնավորապես, ուսուցիչների միջին ամսական աշխատավարձը 2003 թ. բարձրացվել է 20 տոկոսով, 2004 թ.՝ 66.5 տոկոսով, իսկ 2005 թ.՝ 65.3 տոկոսով՝ հասնելով շուրջ 50.5 հազար դրամի: Ուսուցիչների տարեկան աշխատավարձ/շնչային ՀՆԱ հարաբերակցությունը Հայաստանում 2003 թ. կազմել է 0.49, 2004 թ.՝ 0.7, իսկ 2005թ. 1.0՝ կապված կրթական մակարդակից և ստաժից, ՏՀԶԿ երկրների 0.97-1.45-ի դիմաց:
140. Հանրակրթության բնագավառում պետական ծախսերի հաջորդ առաջնահերթ ուղղություններից են դպրոցների շենքային պայմանների բարելավումն ու ջեռուցման խնդիրների լուծումը՝ նպատակ ունենալով հնարավորինս ապահովել կրթական գործընթացի անընդհատությունն ու հաճախելիության բարձրացումը: 2004 թ. ՀՀ հանրակրթության ոլորտում իրականացվել են մեծ ծավալի շինվերանորոգման աշխատանքներ: Պետբյուջեով շինարարական աշխատանքների համար նախատեսված 8 մլրդ. դրամի շրջանակներում կառուցվել է 25 նոր դպրոց և հիմնանորոգվել 187-ը: Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի համաֆինանսավորվող ծրագրերով կառուցվել է 16 դպրոցական շենք և հիմնանորոգվել 148-ը: Շարունակվել են ԱՄՆ «Հայ կրթական հիմնարկության» և «Հայ օգնության միության» կողմից իրականացվող դպրոցների վերանորոգման ծրագրերը: Հայաստանում վերանորոգված դպրոցների թիվն այսօր հասնում է մոտ 100-ի:

141. Դպրոցների ջեռուցման բարելավման նպատակով 2003 թ. բարձրացվել են ջեռուցման նպատակով տրվող վառելիքի չափը և ջեռուցման սեզոնում տաքացվող օրերի թիվը՝ դրանք տարբերակելով ըստ հարթավայրային, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերում գտնվող դպրոցների: Իսկ 2005 թ. վառելիքի և ջեռուցման գծով լրացուցիչ միջոցներ են նախատեսվել՝ կապված սեփական կաթսայատների միջոցով ջեռուցման կազմակերպման հետ:
142. Որոշակիորեն բարելավվել է հատկացվող պետական ֆինանսավորման միջոցների օգտագործման արդյունավետությունը՝ ի հաշիվ դպրոցների օպտիմալացման և ուսուցիչների շաբաթական ծանրաբեռնվածության բարձրացման: Համաձայն ՀՀ կառավարության 2002 թ.-ի ապրիլի 25-ի թիվ 444 որոշման, բյուջետային միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման նպատակով 2004 թ.-ին ավարտվել է հանրակրթական բոլոր դպրոցների անցումը ֆինանսավորման նոր ձևի և խորհուրդներով կառավարման համակարգի: Վերջինս, սակայն, ըստ փորձագիտական եզրակացությունների և հետազոտությունների²³, հեռու է լիարժեք գործելուց և դեռևս կրում է ֆորմալ բնույթ: Դիտարկվող այս երևույթը պայմանավորված է նոր կառավարման համակարգի մասին նվազ իրազեկությամբ և տեղեկացվածությամբ, գործառույթների ոչ լրիվ ըմբռնողությամբ: Կառավարությունը 2006-2008 թթ. ՄԺԾԾ-ով արդեն իսկ նախատեսել է 200 դպրոցի տնօրենների և 1200 խորհրդի անդամների վերապատրաստման ծրագրերի մեկնարկ, ինչն անշուշտ կնպաստի այս համակարգի ներդրմանն աջակցելուն և զարգացմանը:
143. Կառավարությունը կրթության որակի բարձրացման և համապատասխանության ապահովման նպատակով որոշ աշխատանքներ է տարել ուսուցիչների որակավորման բարձրացման և կարճատև վերապատրաստումների ուղղությամբ: 2004 թ.-2005 թ. I կիսամյակում վերապատրաստման ծրագրերում ընդգրկված է եղել մոտ 10950 ուսուցիչ: Կազմակերպվել են տարաբնույթ սեմինարներ ու խմբային խորհրդակցություններ: 2004-2006 թթ. ԱՅՈՒՆ-ի իրականացման միջոցառումների ցանկով նախատեսված էր 2004-2006 թթ. 35000 ուսուցչի վերապատրաստում: Նոր կրթակարգին համապատասխան վերապատրաստումը կսկսվի միայն 2006 թ.-ից: Նշենք, որ կազմվել է վերապատրաստումների կրթական գոտիների քարտեզը: Այդ տարածքներից ընտրվել են 52 դպրոց-կենտրոններ, որոնք հիմք կհանդիսանան վերապատրաստման ծրագրերի իրականացման համար: 2004 թ. ստեղծվել են Կրթության ազգային ինստիտուտի (ԿԱԻ) 7 մասնաճյուղեր և արդեն բոլոր մարզերում գործում է ընդհանուր թվով 13 մասնաճյուղ:
144. Համաձայն ԱՅՈՒՆ-ի, բարելավման կարիք ունի ուսուցիչների մասնագիտական որակը և ուսուցչի մասնագիտության վարկանիշը: Մինչև 2003 թ. հանրակրթական համակարգում աշխատող ուսուցիչներից տարեկան վերապատրաստում են անցել միայն 4-5%-ը, իսկ 2004 թ.-ին 8-9 %, (2005 թ.-ին այն նախատեսվում է հասցնել մոտ 20 %-ի): Դա բավարար է վերապատրաստման 5-ամյա պարբերաշրջանն ապահովելու համար: Դեռևս լուրջ և չլուծված խնդիր է բուն որակավորման բարձրացման և վերապատրաստման գործընթացը, դրանց կապը ատեստավորման հետ:

²³ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի դպրոցների ծախսերի և գործունեության մոնիտորինգ» Երևան, 2004 . Տարածաշրջանային զարգացման կենտրոն, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հայաստանյան մասնաճյուղ:

145. Սակայն ըստ փորձագիտական գնահատականների, ուսուցիչների վերապատրաստման և որակավորման բարձրացման աշխատանքները դեռևս բավարար չեն: Առանց վերապատրաստման, ատեստավորման և որակավորման ճանաչման կանոնակարգված համակարգի իրականացրած ուսուցիչների օպտիմիզացիայի գործընթացը ստեղծել է նաև որոշակի կոռուպցիոն ռիսկեր: Դրանք արտահայտվում են դեռևս ուսուցչական բանակում՝ աշխատանքի մեջ գտնվող ուսուցիչների չարդարացված հոսքով դեպի մանկավարժական ԲՈՒՀ-եր (պետական կամ մասնավոր, հեռակա, էքստեռն, այլ ուսուցման ձևերում): Հետագոտման կարիք ունի որակյալ ուսուցիչների հարաբերական «ավելցուկ» առկայությունը, մանկավարժական կադրերի պատրաստման պլանավորման ներկա իրավիճակը և կրթական համակարգի իրական պահանջարկը՝ չնվազող պետական պատվերի համատեքստում:
146. Կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերը մանկավարժական կադրերով համալրմանը: Այս նպատակով հաշվետու տարում 149 ուսուցիչ գործուղվել են տարբեր մարզեր: Նրանց համար սահմանված են որոշակի արտոնություններ: Այդ մանկավարժներից 14-ը ուսուցման անհատական գրաֆիկի անցած ուսանողներ են: Բացի այդ, 2004 թ.-ից ՀՀ 6 մարզերի դպրոցներից ստացված հայտերի հիման վրա նախարարության կողմից իրականացվել է նպատակային ընդունելություն մանկավարժական համալսարան, Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտ և Գյուղակադեմիա:
147. Բարեփոխումների և արդիականացման գործընթացին զուգընթաց աշխատանքներ են տարվել ուսուցիչների սոցիալական պաշտպանվածության բարձրացման ուղղությամբ: ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության հետ համատեղ մշակվել և իրականացվում է դպրոցից դուրս մնացած ուսուցիչների աջակցման ծրագիր, որին ուղղվել է 50 մլն դրամ Համաշխարհային Բանկի վարկային միջոցներից:
148. Կառավարությունը որոշակի քայլեր է կատարել կրթության **հավասարության** և հավասարապես մատչելիության ապահովման ուղղությամբ: Մասնավորապես, շարունակվել է տարրական դասարանների աշակերտներին դասագրքերով անվճար ապահովման քաղաքականությունը:
149. ՄԱԶԾ-ի վերլուծությունները²⁴ ցույց են տալիս, որ կրթական ծրագրերի շրջանակում գործող **դասագրքերի շրջանառու հիմնադրամի** միջոցները ձևավորվում են ի հաշիվ միջնակարգ դպրոցի սաների կողմից պարտադրաբար մուծվող դասագրքերի «վարձակալման» համար սահմանված վճարների, այդ թվում աղքատ ընտանիքների երեխաների կողմից և օգտագործվում դասագրքերի հիմնադրամի թարմացման, վերականգնման և նոր դասագրքերի գնման համար: ՀՀ կառավարությունը սոցիալապես անապահով ընտանիքների համար այս հիմնադրամին է հատկացնում ընդամենը 10 տոկոսի չափով գումար: Ընդ որում, գումարի բաշխման մեխանիզմը չափազանց խրթին է ու, վերջին հաշվով, չի ապահովում աղքատության հետ որևէ կապ: Համաձայն վիճակագրական հետազոտության արդյունքների, մեկ աշա-

²⁴ Մարդկային աղքատությունը և աղքատամետ քաղաքականությունը Հայաստանում, ՀՀ կառավարություն, UNDP Երևան 2005

- կերտի դպրոցական ծախսերը միջինում կազմում են ամսական 2500 դրամ²⁵, կամ մեկ տարվա կտրվածքով՝ ավելի քան 10 միլիարդ դրամ (առանց մասնավոր պարամունքների վրա կատարված ծախսերի): Չհաշված դասագրքերի վարձակալության հետ կապված փոքր «արտոնությունները», թվարկված բոլոր ծախսերի բեռը հիմնականում հավասարապես կրում են թե՛ աղքատ, և թե՛ ոչ աղքատ ընտանիքները: Սակայն առաջինների համար այդ ծախսերն ըստ էության գործում են որպես ռեզրեսիվ հարկ՝ ավելի ծանր նստելով աղքատ ընտանիքի վրա: Այստեղից հետևում է, որ աղքատ ընտանիքների համար հանրակրթությունը հավասարապես մատչելի չէ:
150. **Նախադպրոցական կրթության որակի և մատչելիության ապահովում.** Նախադպրոցական կրթությունը հանրային կրթության առաջնային օղակն է: Կրթական այս մակարդակը դուրս է մնացել ԱՅՈՒՆ-ից, սակայն 2004-2006 թթ. միջոցառումների ցանկով փորձ է արվել լրացնել այս բացթողումը:
151. Ըստ «Կրթությունը Հայաստանում» տարեգրքի²⁶, նախադպրոցական հիմնարկների թիվը 1991 թ.-ի համեմատությամբ նվազել է 47%-ով, իսկ երեխաների ընդգրկվածությունը 69%-ով: Մտահոգող է հատկապես դպրոցին նախապատրաստվող տարիքային խմբի (5-6 տարեկաններ) ընդգրկվածության ցածր մակարդակը (25%), որն անմիջականորեն ազդում է հանրակրթության որակի վրա²⁷: ՄԶԱՀ-ի տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում ընդգրկվածության ամենացածր մակարդակն արձանագրվել է նախադպրոցական կրթական հաստատություններում²⁸:
152. Ընդունվել է «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքը²⁹, որը կոչված է կարգավորելու նախադպրոցական կրթության համակարգի գործունեության և զարգացման իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը: Օրենքի կարգավորման խնդիրներից է նաև նախադպրոցական կրթության մեջ երեխաների ընդգրկվածության ապահովումն ու համակարգի արդյունավետ կառավարումը: Հաշվետու տարում հաստատվել է «Նախակրթարանների ուսումնադաստիարակչական ծրագրերի մշակում և փորձարկում հանրապետական ծրագիրը»:
153. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ համագործակցության շրջանակում 2004 թ.-ին նախադպրոցական կրթության ոլորտում իրականացվել են ծնողների կրթության և այլընտրանքային ծառայությունների ներդրման փորձնական ծրագրերը: Վերջինիս առաջին փուլի արդյունքում նախադպրոցական հաստատությունների լրացուցիչ ծառայություններում ընդգրկվել է 180 երեխա:
154. Նախադպրոցական կադրերի մասնագիտական որակի բարելավման նպատակով 2004թ ընթացքում իրականացվել է նախադպրոցական հիմնարկների 65 ղեկավարների և 320 դաստիարակների վերապատրաստում: Հրատարակվել է 6 տարեկան երեխաների համար աշխատանքային տետրեր և մեթոդական ձեռնարկներ:

²⁵ Տես՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», Վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2003:

²⁶ «Կրթությունը Հայաստանում» տարեգիրք, 2004, էջ 9

²⁷ «Հայացք տնտեսությանը», թիվ 28, փետրվար, 2005

²⁸ Մարդկային աղքատությունն ու աղքատամետ քաղաքականությունը Հայաստանում: ՄԱԶԾ, Երևան 2005

²⁹ ՀՀ կառավարության կողմից հաստատվել է նաև «ՀՀ նախադպրոցական կրթության զարգացման հայեցակարգը և ռազմավարությունը»:

155. Համաձայն փորձագիտական գնահատականների նախադպրոցական կրթության աշխատողների աշխատավարձի խնդիրը օրակարգային է և անհրաժեշտ է ուսուցիչների վարձատրությանն ուղղված քաղաքականությունից անցում կատարել մանկավարժական կադրերի աշխատավարձի բաժրացմանն ուղղված քաղաքականությունը³⁰ :
156. Մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ՀՀ օրենքը: ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությունը», որի հիմնական նպատակն է՝ Հայաստանում նախնական և միջին մասնագիտական կրթության ժողովրդավարական և արդյունավետ համակարգի ստեղծման միջոցով ապահովել որակյալ մասնագետների պատրաստումը՝ տնտեսության ու աշխատաշուկայի պահանջների համապատասխան: Մշակվել է նաև «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացման գերակայությունները և 2005-2008 թթ. գործողությունների պլանը»: Այս ոլորտի կարևոր ձեռքբերումներից էր արհեստագործական ուսումնարանների վերաբացումը: Մշակվել և հաստատվել է միջին մասնագիտական կրթության 10 մասնագիտության գծով պետական կրթական չափորոշիչ:
157. Արհեստագործական ուսումնարաններում ներդրվել է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության օրինակելի ուսումնական պլաններ՝ ուսուցանվող 19 մասնագիտության և մասնագիտացման գծով: Կառուցվածքային փոփոխությունների արդյունքում արհեստագործական հոսքով մի շարք ավագ դպրոցներ վերակազմակերպվել են նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների՝³¹ արհեստագործական ուսումնարանների (այսուհետ՝ ԱՈԲ), որոնց թիվը ներկայումս կազմում է 26: Դրանցում անվճար ուսուցման հիմքով սովորում է 1980 մարդ: Փորձագիտական վերլուծությունները փաստում են, որ արհեստագործական դպրոցների վերակազմավորումը նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների թելադրված է աշխատաշուկայի³² պահանջով և հասարակական նոր հարաբերություններով³³ :
158. Կառավարությունը անհրաժեշտ ուշադրություն է հատկացրել նաև կադրային ներուժի զարգացման խնդիրներին, ի մասնավորի վերապատրաստվել են նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շուրջ 50 դասախոսներ: Ներկայումս արհեստագործական ուսումնարաններում ուսանում են

³⁰ Մարդկային աղքատությունն ու աղքատման քաղաքականությունը Հայաստանում: ՄԱԶԾ, Երևան 2005 թ.

³¹ ՀՀ կառավարության 2003 թ. մայիսի 22-ի N 637-Ն որոշմամբ հաստատվել է նախնական մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը, որը ներառում է 50 մասնագիտություն՝ 229 որակավորմամբ:

³² Հայաստանի աշխատաշուկայի և երիտասարդության զբաղվածության հիմնախնդիրների վերլուծություն: Ավագ Սոլյուշնա ՄՊԸ, Երևան 2004 թ.:

³³ Տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում, էջ 71, UNDP, Երևան, 2002

շուրջ 2300 սովորողներ՝ 1980-ը անվճար, մյուսները վճարովի ուսուցման հիմքով և 1-3 տարիների ընթացքում մասնագիտանում են մետաղամշակման, շինարարության, գյուղատնտեսության, տրանսպորտային, ռադիոէլեկտրոնիկայի, սննդի ու կենցաղային սպասարկման և այլ ոլորտների 28 մասնագիտության գծով: Շրջանավարտները ստանում են արհեստագործի (որակյալ բանվորի կամ վարպետի) որակավորում, իսկ հիմնական ընդհանուր կրթությամբ հիմքի վրա ընդունված սովորողները՝ նաև միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն:

159. Պետական ծախսերի աճին զուգընթաց, ուշադրության կենտրոնում են շարունակում մնալ կրթության համակարգի **կառավարմանն ու արդյունավետությանը** վերաբերող հարցերը: Կառավարման ապակենտրոնացման և հաստատությունների ինքնավարության ընդլայնման քաղաքականությանը համապատասխան բոլոր դպրոցները 2003 թ. վերկազմավորվել են պետական ոչ առևտրային կազմակերպությունների: Համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման միջոցառումներն ուղղված են եղել ուսուցիչների թվաքանակի ճշգրտմանը, ուսուցչական դրույքի ուսումնական ծանրաբեռնվածության աճին և դպրոցների ցանցի օպտիմալացմանը: Արդյունքում, որոշակի դրական տեղաշարժեր են գրանցվել արդյունավետությունը բնութագրող կարևոր ցուցանիշներում, որոնք համահունչ են ԱՅՈՑ նպատակադրումներին: Մասնավորապես, 2004 թ. հանրակրթական դպրոցներում աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը կազմել է 11.1՝ 2003 թ. 10.8-ի համեմատ, իսկ դասարանների միջին խտությունը՝ 22.0 աշակերտ՝ 2003 թ. 16.2-ի դիմաց: Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում կարևորագույն արդյունքներն են եղել անցումը երկաստիճան համակարգի և բուհական մասնագիտությունների չափորոշիչների մշակումը: Չափորոշիչներին համապատասխան վերանայվել են բարձրագույն մասնագիտական առարկայական ծրագրերը: 2004 թ.-ին ընդունվել է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, որը մեծ խթան է մասնագիտական կրթության զարգացման, արդյունավետության և որակի բարձրացման համար: Մանկավարժական, գյուղատնտեսական և ֆիզիկական կուլտուրայի մասնագիտությունների գծով իրականացվել է դիմորդների նպատակային ընդունելություն: Ընդլայնվել է մասնագիտական կրթության համակարգում հեռակա ձևով ուսուցման մասնագիտությունների ցանկը:

Ենթակառուցվածքներ

Ջրային տնտեսություն

160. Աղքատության հաղթահարման ռազմավարության տեսանկյունից ՀՀ կառավարությունը ջրային տնտեսության ոլորտում իրականացվելիք քաղաքականության հիմնական նպատակ է հռչակել բնակչությանը հասանելի, մատչելի և որակյալ ծառայությունների մատուցման ապահովումը և դրանով պայմանավորված սահմանել է այն խնդիրների շրջանակը, որոնք առաջնահերթ լուծում են պահանջում: Դրանք են՝ ծառայությունների հասանելիության, մատչելիության և որակի բարձրացումը, սուբսիդավորման քաղաքականության հասցեականության բարձրացումը, համա-

կարգի ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացումը, հաշվառելիության համակարգի բարելավումը:

161. Ջրային տնտեսության ոլորտում պետական բյուջեի ծախսերը 2004 թ. կազմել են շուրջ 22 մլրդ դրամ, ինչը փոքր-ինչ ավելի է 2004 թ. համար ԱՅԻՆ-ով նախատեսված 21.6 մլրդ դրամ ֆինանսավորման ծավալից: ԱՅԻՆ-ի համեմատ մի փոքր այլ կառուցվածք է ունեցել ոլորտի 2004 թ. պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը: Այսպես, եթե ԱՅԻՆ-ով համակարգի ընկերությունների սուբսիդավորման համար նախատեսված է եղել 4.4 մլրդ դրամ, ապա պետական բյուջեով՝ 6.9 մլրդ դրամ, ներդրումային ծրագրերի մասով ԱՅԻՆ-ն նախատեսել էր 17.2 մլրդ դրամ, իսկ պետական բյուջեով այդ ծախսերը կազմել են մոտ 13.5 մլրդ դրամ: Այս առումով կառավարության քաղաքականությունը, ինչպես և սահմանված է ԱՅԻՆ-ում, ուղղված է լինելու սուբսիդավորման ծավալների աստիճանական կրճատմանը՝ մինչև սուբսիդավորման դադարեցումը՝ ի հաշիվ համակարգի ընկերությունների ֆինանսական կենսունակության աստիճանի բարձրացման: Արդյունքում, բյուջետային ազատված միջոցներն ուղղվելու են առավել հասցեական սոցիալական ծրագրերի իրականացմանը:
162. Ինչպես ցույց են տալիս 2004 թ. իրականացված տնային տնտեսությունների հետազոտության արդյունքները, առաջընթաց է արձանագրվել խմելու ջրի մատչելիության աստիճանի առումով: Մասնավորապես, 2004 թ. մոտ 0.5 տոկոսային կետով բարձրացել է կենտրոնացված ջրամատակարարման մատչելիության աստիճանը, ինչն առավելապես պայամանավորված է եղել գյուղական բնակավայրերում կենտրոնացված ջրամատակարարման մատչելիության աստիճանի բարձրացմամբ՝ 0.6 տոկոսային կետով (տե՛ս Աղյուսակ 14):

Աղյուսակ 14. Խմելու ջրի մատչելիությունը

	2002	2003	2004
Կենտրոնացված ջրամատակարարման մատչելիությունը, տոկոս	89.1	91.0	91.5
<i>Քաղաքային բնակավայրեր, տոկոս</i>	97.0	97.8	96.7
<i>Գյուղական բնակավայրեր, տոկոս</i>	77.0	80.6	81.3
Բերովի ջրից օգտվող տնային տնտեսությունների քանակը, տոկոս	5.2	5.9	4.5

Աղբյուրը՝ 2001, 2002, 2003 թթ.-ի տնային տնտեսությունների հետազոտություններ:

163. 2004 թ. ընթացքում շարունակվել են աշխատանքները՝ համակարգում կառուցվածքային փոփոխությունների, ոռոգման և խմելու ջրի ջրառի և ջրամատակարարման կետում հաշվառման համակարգերի ներդրման, ջրամատակարարման տևողության մեծացման ու որակի բարելավման և տրված ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգում կորուստների նվազեցման և ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, մեխանիկական եղանակով ոռոգման և խմելու ջրի մատակարարումն աստիճանաբար ինքնահոս եղանակով փոխարինելու միջոցով էլեկտրաէներգիայի ծախսի աստիճանական

կրճատման ապահովման, չափիչ սարքերի տեղադրման, վարկային միջոցների արդյունավետ օգտագործման և այլ ուղղություններով:

164. 2003-2004 թթ. ընթացքում գյուղական բնակավայրերում խմելու ջրի մատակարարման մատչելիության աստիճանի բարձրացումը մեծապես կարող էր պայմանավորված լինել իրականացված մի շարք ներդրումային ծրագրերով: Մասնավորապես, այդ ժամանակահատվածում Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW), Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD), ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտի և Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում ավելի քան 40 գյուղական բնակավայրերում վերականգնվել կամ կառուցվել են ջրամատակարարման համակարգեր:
165. Առաջընթաց է արձանագրվել նաև բերովի ջրից օգտվող տնային տնտեսությունների տեսակարար կշռի նվազեցման առումով: Այսպես, Ադյուսակ 14-ից երևում է, որ բերովի ջրից օգտվող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը 1.3 տոկոսային կետով նվազել է և կազմել 4.6 տոկոս, որոնց մեծ մասը կենտրոնացած է գյուղական բնակավայրերում: Կառավարությունը շարունակելու է առանձին բնակավայրերում ներդրումային ծրագրերի իրականացման միջոցով տվյալ խմորի լուծման քաղաքականությունը, իսկ այն բնակավայրերում, որտեղ ջրամատակարարման համակարգերի կառուցումը տնտեսապես արդյունավետ չի լինի, ՀՀ կառավարության քաղաքականությունն ուղղված կլինի բնակչության ջրի հետ կապված լրացուցիչ ծախսերի փոխհատուցմանը: Այս առումով, ԱՅՈՒՆ-ում համապատասխան փոփոխություններ կարող են կատարվել ծրագրի առաջիկա վերանայման ընթացքում:
166. Ջրային տնտեսության ոլորտում իրականացվող ներդրումային քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը, ինչպես սահմանված է ԱՅՈՒՆ-ում, համակարգում ծառայությունների մատուցման էներգատար կառուցվածքների փոփոխումն է: Այդ նպատակով Համաշխարհային բանկի «Ոռոգման համակարգերի զարգացում» ծրագրի շրջանակներում իրականացվել են ինքնահոս երեք համակարգերի կառուցման աշխատանքներ: Երեք ինքնահոս համակարգերի գործարկման արդյունքում էլեկտրաէներգիայի տարեկան խնայողությունը կկազմի շուրջ 48 մլն կվտ ժ էլեկտրաէներգիա, որը կազմում է ոլորտում օգտագործվող էլեկտրաէներգիայի շուրջ 20 տոկոսը:
167. Հաշվետու ժամանակահատվածում զգալի առաջընթաց է արձանագրվել ջրային տնտեսության համակարգում հաշվառման համակարգի բարելավման և արդիականացման ուղղությամբ, որը ևս հանդիսացել է իրականացված ներդրումային քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը: Հաշվառելիության համակարգի բարելավման և արդիականացման նպատակով զգալի աշխատանքներ են տարվել ինչպես Երևանի «Ջրմուղ-կոյուղի» և «Հայջրմուղկոյուղի», այնպես էլ «Նոր Ակունք» ՓԲԸ-ների կողմից սպասարկվող բնակավայրերում: 2004 թ. ընթացքում Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող տարածքում բաժանորդների 85 տոկոսից ավելին անհատական ջրաչափ է տեղադրած եղել, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող տարածքում անհատական ջրաչափ տեղադրած բա-

Ժանորդների քանակը հասել է շուրջ 120 հազարի, իսկ «Նոր Ակունք» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող տարածքում՝ շուրջ 10 հազարի: Ընդ որում, 2004 թ. ընթացքում Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից բյուջետային միջոցների հաշվին աղքատության ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքների բնակարաններում տեղադրվել է 31361 ջրաչափ:

168. Համաձայն ԱՅԹ-ի, ջրային տնտեսության և, ընդհանրապես, հանրային ծառայությունների ոլորտում սակագնային քաղաքականությունը պետք է ուղղված լինի շահագործման ծախսերին սակագների համապատասխանեցմանը: Այդ նպատակով 2004թ. տեղի է ունեցել ոռոգման և խմելու ջրի սակագների վերանայումներ: Խմելու ջրի սակագները ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից վերանայվել են 2004 թ. ապրիլին, որի արդյունքում ներկայումս խմելու ջրի սակագները «Ջրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող տարածքում կազմում է 1 խ.մ. համար 125 դրամ, իսկ «Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող տարածքում՝ 140 դրամ: «Ոռոգում-Ջրառ» ՓԲԸ-ի գետավազանային սկզբունքով բաժանված 4 մասնաճյուղերի համար սահմանվել են 8 սակագներ: 2004 թ. 1 խ.մ. ոռոգման ջրի միջին սակագինը կազմել է 6.8 դրամ: Չնայած սակագների բարձրացմանը, վերջիններս դեռևս ցածր են ծախսածածկման աստիճանից և այս առումով, առաջիկայում սակագնային քաղաքականությունն ուղղված է լինելու սակագների և շահագործման ու պահպանման ծախսերի համապատասխանեցման ապահովմանը:

Ճանապարհաշինություն

169. ԱՅԹ համաձայն, զգալիորեն ավելացվել են պետական բյուջեի ներքին ռեսուրսների հաշվին ճանապարհաշինությանն ուղղվող ծախսերը: Այսպես, եթե 2003 թ. ճանապարհաշինության ոլորտում պետական բյուջեի փաստացի ծախսերը (առանց վարկային և դրամաշնորհային ծրագրերի) կազմել են 1.3 մլրդ դրամ, ապա 2004 թ. պետական բյուջեով ճանապարհաշինությանն ուղղված ծախսերը կազմել են շուրջ 7.3 մլրդ դրամ՝ 2003 թ. համեմատ շուրջ 5.6 անգամ ավելի:
170. Ընդ որում, 2004 թ. պետական բյուջեից առաջին անգամ ֆինանսավորվել են նաև ԱՅԹ գերակայություն համարվող համայնքային նշանակության ճանապարհների հիմնանորոգման և ընթացիկ պահպանման աշխատանքներ՝ շուրջ 570 մլն դրամի չափով, որը կազմում է ճանապարհաշինության համար պետական բյուջեից հատկացված միջոցների մոտ 8 տոկոսը:
171. Համաշխարհային բանկի տրանսպորտի վարկային ծրագրի ճանապարհային բաղադրամասի շրջանակներում 2004 թ. իրականացվել են շուրջ 88 կմ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների միջազգային չափանիշներին համապատասխանող հիմնանորոգման աշխատանքներ՝ 5.4 մլրդ դրամ արժեքով:

Էներգետիկա

172. Էներգետիկայի բնագավառի գործունեությունը հիմնականում ուղղված է եղել հանրապետության էներգետիկ պահանջարկի բավարարմանը, էներգետիկական ան-

կախության ներկա մակարդակի առնվազն պահպանմանը, այդ թվում՝ ներկրվող (բնական գազ, միջուկային վառելիք, մագուժ՝ որպես ռազմավարական պաշար) և տեղական էներգետիկ պաշարների (հիդրո, հողմային, արևի և այլն) տարատեսականացմամբ և արտադրական հզորությունների առավելագույնն օգտագործման ապահովմամբ:

173. Ըստ ԱՅՈՒՄ-ի՝ էլեկտրաէներգետիկ ոլորտում պետության կողմից կատարվելիք ներդրումների հիմնական ուղղություններն են էլեկտրաէներգիայի փոխանցման և կարգավարման համակարգի վերականգնումը և զարգացումը, ինչպես նաև համակարգի ֆինանսական առողջացումը: Այս ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում կառավարության կողմից կատարվել են համապատասխան աշխատանքներ:
174. Մասնավորապես, 2004 թ. ընթացքում Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվել են Քանաքեռ ՅԷԿ-ի և էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերականգնման աշխատանքներ շուրջ 1.15 մլրդ դրամի չափով, իսկ Համաշխարհային բանկի էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման ծրագրի շրջանակներում իրականացվել են շուրջ 7.8 մլրդ. դրամի աշխատանքներ:
175. Համակարգի ֆինանսական առողջացման նպատակով կառավարությունը «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի մասնավորեցումից ստացված միջոցներից շուրջ 27.0 մլն ԱՄՆ դոլար ուղղել է «Հայգազարդ» ՓԲԸ-ում հաշվառվող բնակչության էլեկտրաէներգիայի հին դեբիտորական պարտքերի ամբողջությամբ մարմանը: Ստացված գումարներից շուրջ 4.8 մլն ԱՄՆ դոլարը օգտագործվել է Իրան-Հայաստան գազատարի համաֆինանսավորման նպատակով, իսկ 22.2 մլն ԱՄՆ դոլարով մարվել են համակարգի վարկային պարտավորությունները, ինչը զգալիորեն նվազեցրել է համակարգի ընկերությունների վարկային պորտֆելի մեծությունը:
176. Էներգետիկ համակարգում պետական բյուջեի ծախսերը³⁴ 2004 թ. համար կազմել են շուրջ 9.136 մլրդ դրամ: Ըստ ԱՅՈՒՄ-ի՝ էլեկտրաէներգետիկ ոլորտում պետության կողմից կատարվելիք ներդրումների հիմնական ուղղություններից մեկն է հանդիսանում էլեկտրաէներգիայի փոխանցման և կարգավորման համակարգի վերականգնումը և զարգացումը: Այս ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում կառավարության կողմից կատարվել են համապատասխան աշխատանքներ:
177. Պաշտոնական տվյալների համաձայն, էլեկտրաէներգիայի կարգավարման համակարգի սարքավորումների արդիականացման և զարգացման նպատակով փոխարինվել և իրականացվել են «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի «Էներգակապ» մասնաձյուղին պատկանող նոր կապի գծերի շուրջ 1250 մ մալուխներ, ինչպես նաև 80 հեմասյուններ:
178. 2004 թ. ընթացքում հանրապետությունում արտադրվել է 6030.0 մլն. կՎտժ էլեկտրական էներգիա՝ 2003 թ.-ի համեմատ 529.1 մլն կՎտ ժ-ով կամ 9.6 %-ով ավելի, որից արտադրող կայաններում սեփական կարիքների համար օգտագործվել է 338.8 մլն կՎտ ժ կամ 5.6%:

³⁴ Էներգետիկ համակարգում կատարված ֆինանսավորումների վերաբերյալ առավել մանրամասն տես հավելված 14.1-ում

179. Չնայած էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի ընդհանուր վատ վիճակին և ցանցի ընթացիկ վերանորոգման աշխատանքների անբավարարության, գյուղական շրջանների բնակչության 83%-ը բավարարված է էլեկտրաէներգիայի մատակարարման որակից, որից 40%-ը գտնում են, որ էլեկտրաէներգիայի մատակարարումը լավ վիճակում է:
180. Ինչպես ցույց են տալիս 2004 թ.-ին իրականացված տնային տնտեսությունների հետազոտության արդյունքները, քաղաքային բնակավայրերի տնային տնտեսությունների շուրջ 5.5 տոկոսը ձմռանը կացարանը չի ջեռուցել: Իսկ ձմռանը չջեռուցած կացարաններում բնակվող տնային տնտեսությունների անդամների հիվանդանալու հաճախականությունը մոտ երկու անգամ բարձր է հանրապետության միջին մակարդակից, ընդ որում՝ աղքատ տնային տնտեսությունների մոտ կացարանը չջեռուցածների տեսակարար կշիռը շուրջ երկու անգամ ավելի բարձր է³⁵, ինչը վկայում է այն մասին, որ կացարանի չջեռուցման հիմնական դրդապատճառը վերջինիս ոչ մատչելի լինելն է աղքատ ընտանիքների համար: Ելնելով նշված իրողությունից՝ կառավարությունը ԱՅՌԾ առաջիկա վերանայման ժամանակ հատուկ ուշադրություն կդարձնի ջեռուցման խնդիրներին՝ հատկապես քաղաքային բնակավայրերում:

Գյուղատնտեսություն

181. 2004 թ. գյուղատնտեսական համախառն արտադրանքը 2003 թ. համեմատ համարելի գներով հաշվարկված աճել է շուրջ 14.5 տոկոսով: Ընդ որում գյուղատնտեսական արտադրության աճի միտումները պահպանվել են նաև 2005 թ. առաջին կիսամյակում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 10.2 տոկոսով:

Աղյուսակ 15. Գյուղատնտեսության համախառն արտադրանքի չարժը 2001-2004 թթ.

	2001	2002	2003	2004	2005 I կիս.
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, մլրդ. դրամ	351.0	377.6	410.1	504.1	103.6
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճը, տոկոս	11.6	4.4	4.3	14.5	10.2
այդ թվում՝ բուսաբուծություն, %	19.0	4.6	4.4	20.1	-
անասնաբուծություն, %	2.3	4.2	4.3	8.0	-

Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն:

182. Ինչպես ցույց են տալիս 2004 թ. իրականացված տնային տնտեսությունների հետազոտության արդյունքները, 2004 թ. ընթացքում, 2003 թ. համեմատ, գյուղական

³⁵ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի «Մարդկային աղքատությունն ու աղքատամետ քաղաքականությունը Հայաստանում» զեկույց

աղքատության մակարդակը կրճատվել է 6.8 տոկոսային կետով, ընդ որում բնակչության դրամական եկամուտները գյուղական բնակավայրերում համապատասխան ժամանակահատվածում աճել են շուրջ 11.0 տոկոսով:

183. Միաժամանակ, գյուղական աղքատության մակարդակը շարունակում է ավելի բարձր մնալ քաղաքային աղքատության մակարդակից. 2004 թ. գյուղական աղքատության մակարդակը կազմել է 40.7 տոկոս, մինչդեռ քաղաքային բնակավայրերում այն կազմել է 38.0 տոկոս: Վերջինս առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ մեկ շնչի հաշվով բնակչության դրամական եկամուտները գյուղական բնակավայրերում շուրջ 33.0 տոկոսով պակաս են քաղաքային բնակավայրերի բնակչության դրամական եկամուտներից:
184. Վարձու աշխատանքից եկամուտները գյուղական բնակավայրերում դեռևս շարունակում են ցածր մնալ՝ 2004 թ. դրանց տեսակարար կշիռն ընդհանուր դրամական եկամուտների մեջ կազմել է ընդամենը 27.9 տոկոս, մինչդեռ քաղաքային բնակավայրերում վերջինիս տեսակարար կշիռը դրամական եկամուտների մեջ կազմել է շուրջ 56.8 տոկոս: Նշված հանգամանքը վկայում է, որ գյուղական բնակավայրերում դեռևս չլուծված է մնում ոչ գյուղատնտեսական գործունեության զարգացման խնդիրը և այդ առումով կառավարության քաղաքականությունն ուղղված է լինելու գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության խթանման գործում մեխանիզմների ներդրմանը, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացմանը:
185. 2004 թ. ընթացքում գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը 2003 թ. նկատմամբ կազմել է 109.6 տոկոս, իսկ սպառողական գների ինդեքսը՝ 107.0 տոկոս: Գյուղմթերքների գների առաջանցիկ աճով կարելի է նաև բացատրել այն հանգամանքը, որ դրամական եկամուտները գյուղական բնակավայրերում 2004 թ. ավելի արագ են աճել (11.0 տոկոս), քան քաղաքային բնակավայրերում (5.4 տոկոս), սակայն բացարձակ մեծությամբ գյուղական բնակավայրերում մեկ բնակչի հաշվով եկամուտները պակաս են եղել քաղաքային բնակավայրերից:

ԱՅՈՑ շրջանակներում գյուղատնտեսության ոլորտում իրականացված առանձին միջոցառումները և ստացված արդյունքները

186. 2004 թ. հացահատիկի արտադրությունն ավելացել է 47.2, կարտոֆիլինը՝ 13.6, բանջարեղենինը՝ 5.5, պտղինը՝ 10.2 և խաղողինը՝ 82.5 %-ով: Ըստ պաշտոնական տվյալների, հացահատիկի համախառն բերքի 146.9 հազ. տոննա հավելաճը 88.5 տոկոսով ապահովվել է բերքատվության բարձրացման, իսկ 11.5 տոկոսը՝ ցանքատարածության ավելացման հաշվին: Բանջարեղենի 31.3 հազ. տոննա բերքի հավելաճն ամբողջությամբ ապահովվել է ինտենսիվ գործունի՝ բերքատվության ավելացման հաշվին: Ինչ վերաբերում է խաղողի արտադրության հավելաճին (67.3 հազ. տոննա), ապա դրա շուրջ 73.0 տոկոսը նույնպես ապահովվել է բերքատվության բարձրացման հաշվին:
187. Հանրապետությունում հացահատիկի աննախադեպ բերքի ստացմանը, ինչպես նաև մյուս մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը զգալիորեն նպաստել

են ԱՅԹ-ի շրջանակներում բույսերի պաշտպանության բնագավառում իրականացված միջոցառումները: Այդ միջոցառումներն շարունակական բնույթ են կրում, որոնց իրականացման արդյունքում ակնկալվում է 2007 թ. 60-80%-ով նվազեցնել բուսաբուծությանը վնասակար օրգանիզմների կողմից պատճառվող վնասը:

188. Հաշվետու տարվա ընթացքում սերմաբուծության բնագավառում իրականացված միջոցառումները նույնպես նպաստել են գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը: Սակայն, սերմաբուծության ոլորտում առկա են որոշ խնդիրներ: Այս ուղղությամբ կատարված որակական հետազոտությունը ցույց է տալիս, որ հողօգտագործողների զգալի մասը չի վստահում սերմաբույծներից և սերմակայաններից ձեռք բերված տեղական և արտասահմանյան սորտերին: Դրանք, որպես կանոն, բնութագրվում են ցածր բերքատվությամբ:³⁶ Ենթադրվում է, որ «Սերմերի մասին» օրենքը, որը 2005 թ. մայիսին ընդունվեց Ազգային ժողովի կողմից, կարգավորելու է սերմերի արտադրության, փոխանակման և օգտագործման հետ կապված փոխհարաբերությունները:
189. Գյուղատնտեսական հողերի գիտականորեն հիմնավորված պարարտացման համակարգերի մշակման ուղղությամբ 2004 թ. հանրապետության 137 համայնքներում կատարվել են դաշտային ագրոքիմիական հետազոտական աշխատանքներ 41165 հա տարածության վրա: Արդյունքում կազմվել են «Հողերի պարարտացման ճիշտ համակարգեր» հանձնարարականները և ագրոքիմիական քարտեզներ, որոնք հանձնվել են համայնքներին: Միջոցառման շարունակական իրականացման արդյունքում ենթադրվում է, որ հողօգտագործողների 40%-ը 2007 թ. վերջից կկիրառի Գյուղատնտեսության նախարարության (ԳՆ) կողմից առաջարկված հողի որակի բարելավման և պաշտպանության մեթոդիկան: Նշենք, որ սկսած 2005 թ. նախատեսվում է, որ այս միջոցառումն աստիճանաբար իրականացնել շահառուների միջոցների հաշվին:
190. Այս առումով նշենք, որ Արմավիրի, Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերում կատարված հետազոտությունը վկայում է, որ այդ մարզերում որպես հիմնական պարարտանյութ օգտագործվում է ազոտական պարատանյութը, նույնիսկ այն դեպքում երբ ցանքահողերը կարիք ունեն այլ տեսակի պարարտանյութերի: Սրա պատճառը նախ և առաջ այն է, որ այսօր հողօգտագործողներին համեմատաբար մատչելի գներով առաջարկվում է հենց այս պարարտանյութը: Հետազոտությունը նշում է նաև, որ հողօգտագործողները դժգոհ են Վրաստանից ներկրվող ազոտական պա-

³⁶ Հայաստանի գյուղական ձեռնարկությունների և գյուղատնտեսական փոքր կոմերցիայի զարգացման ծրագիր, Ազգաբնակչության հետազոտությունների հայկական կենտրոն «Հազարաշեն», Երևան, մարտ, 2005 թ.: Հետազոտությունն իրականացվել է Հայաստանի չորս մարզերի՝ Արմավիրի, Շիրակի, Լոռու և Սյունիքի 19 գյուղական բնակավայրերում և երեք մարզային կենտրոններում: Հետազոտությունն առաջնորդվել է որակական հետազոտության մեթոդով՝ խորացված հարցազրույցներ ֆերմերների, ձեռնարկատերերի հետ, էքսպերտային հարցազրույցներ գյուղապետերի կամ նրանց տեղակալների, գյուղատնտեսների, ամասնաբույժների, գյուղերի մտավորականների, մարզպետարանների պատասխանատուների և մարզային մակարդակի ընկերությունների, ֆերմերային գործունեությունն ու ձեռնարկատիրությունը օժանդակելու ուղղված միությունների և ՀԿ-ների հետ: Ընդհանուր առմամբ կայացել է 176 հարցազրույց, տեղի են ունեցել ինը ֆոկլուս խմբային քննարկումներ՝ երեքական հատ Արմավիրի, Լոռու և Սյունիքի մարզերում:

րատանյութի որակից՝ գտնում են, որ այն անհրաժեշտ քանակությամբ ազոտ չի պարունակում³⁷ : Այսպիսով, ագրոտեխնիկական կանոններով պահանջվող կալիումական և ֆոսֆորական պարարտանյութերը գյուղացիական տնտեսությունների կողմից ներկայումս չեն օգտագործվում, իսկ օրգանական պարարտանյութերի օգտագործման տեսակարար կշիռը խիստ ցածր է:

191. Հայաստանի նման բնակլիմայական պայմաններ ունեցող երկրի համար անչափ կարևոր է հակակարկտային ծառայության վերականգնումը: Այս ուղղությամբ աշխատանքները դեռևս գտնվում են սաղմնային վիճակում: Ներկայումս Արագածոտնի մարզում տեղադրված են 15 հակակարկտային տեղակայանքներ, որոնք գտնվում են փորձարկման ընթացքի մեջ:
192. Անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալները 2004 թ. նույնպես ավելացել են՝ միսը 2.8, կաթը 8.1, ձուն 12.1 և բուրդը 1.7 տոկոսով: Կառավարության գնահատականները ցույց են տալիս, որ կաթի 41.5 հազ. տոննա հավելածի 57.4 տոկոսն ապահովվել է գլխաքանակի ավելացման, իսկ 42.6 տոկոսը՝ ինտենսիվ գործոնի՝ կաթնատվության ավելացման հաշվին: Ինչ վերաբերում է ձվի 60.8 մլն հատ հավելածին, ապա այն 70.0 տոկոսով ապահովվել է ածան հավերի գլխաքանակի, իսկ 30 տոկոսը՝ ձվատվության ավելացման հաշվին:
193. Գյուղատնտեսական կենդանիների մթերատվության մակարդակի բարձրացմանը նպաստել են հակահամաճարակային պատվաստումների ծրագրի շրջանակներում, պետական միջոցների հաշվին, ինֆեկցիոն 5 հիվանդությունների նկատմամբ գյուղատնտեսական կենդանիների կանխարգելիչ իմունացման պատվաստումները: Ընդհանուր առմամբ հանրապետությունում իրականացվել է 6536 հազ. պատվաստում, որոնց արդյունքում ինֆեկցիաների համաճարակային բռնկումներ չեն գրանցվել: Այս միջոցառումներն ունեն շարունակական բնույթ, որոնց իրականացման արդյունքում մինչև 2007 թ. ավարտը նախատեսվում է, որ գյուղատնտեսական կենդանիների սիբիրախտով վարակվածության աստիճանը հասցնել մինչև 0.001%, բրուցելյոզով, տուբերկուլյոզով և խոզերի ժանտախտով վարակվածության աստիճանը՝ մինչև 0.2%: Իսկ գյուղատնտեսական կենդանիների Ա,Օ և Ասիա-1 դաբաղով վարակվածության աստիճանը հասցնել մինչև 0.5%, ինչպես նաև խոշոր եղջերավոր կենդանիների խշխշան պալարով վարակվածության աստիճանը՝ մինչև 0.1%:
194. Այդուհանդերձ, այս ուղղությամբ կատարված հետազոտությունը նշում է, որ անասնապահությունում ցեղատեսակի կորստի, վատ խնամքի, վատ կերակրման պատճառով անասունները կորցրել են իրենց որակական հատկանիշները: Չնայած որ արհեստական սերմնավորման ծառայություններն աստիճանաբար վերականգնվում են, այնուամենայնիվ տևական ժամանակ անասունների արհեստական բեղմնավորում չի կատարվել: 2004 թ. Լոռիում 34000 կովից արհեստական բեղմնավորման է ենթարկվել ընդամենը 800-1000-ը: Օգտագործվող սերմանյութի մեծ մասը մնացել է սովետական շրջանից՝ խոր սառեցման եղանակով, որի որակը նվազել է: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից նշակվել է «Տոհմային անասնաբուծության մասին» ՀՀ օրենքի նախագիծը,

³⁷ Հայաստանի գյուղական ձեռնարկությունների և գյուղատնտեսական փոքր կոմերցիայի զարգացման ծրագիր:

որն այնուհետև սահմանված կարգով ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից: Լոռու ցեղային տոհմական տնտեսության վերացումից հետո, Հայաստանում լիարժեք, որակյալ սերմանյութ չի պաշարվում: Հետազոտությունը նշում է նաև, որ Հայաստանի կլիմայական պայմաններում տավարի լավագույն տեսակը՝ կովկասյան գորշը, գրեթե վերացել է:

195. Գյուղատնտեսական կենդանիների մթերատվության աճին նպաստել է նաև «Արհեստական սերմնավորման միջոցառումներ» միջնաժամկետ ծրագիրը: Ծրագրի շրջանակներում սերմնավորվել է շուրջ 23 հազ. կով: Ընդհանուր առմամբ, 2004 թ. սերմնավորվել է մոտ 25 հազ. կով: Նախատեսվում է տարեցտարի ավելացնել կովերի արհեստական սերմնավորման ծավալները, իսկ ծրագրի իրականացման արդյունքում արհեստական սերմնավորումից ստացված կովերի կաթնատվությունը բարձրացնել 15-20%-ով: Նույն նպատակով նշակվել է «Տոհմային անասնաբուծության մասին» օրենքի նախագիծը, որը գտնվում է Ազգային ժողովում՝ քննարկման փուլում: Միաժամանակ պատրաստվել է «Տավարի կովկասյան գորշ ցեղի գենոֆոնդի պահպանման» ծրագիրը և ներկայումս Կառավարությունը միջոցներ է ձեռնարկում ծրագրի ֆինանսավորումն ապահովելու համար:
196. Գրունտային ջրերի մակարդակի իջեցման և երկրորդական աղակալման երևույթի կանխարգելման նպատակով իրականացվեց կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և նորոգման ծրագիրը: Ծրագրի շրջանակներում՝ հիմնականում Արարատի և Արմավիրի, ավելի քիչ՝ Լոռու մարզերում 367.8 կմ երկարությամբ ցանցերում կատարվել են մաքրման և վերանորոգման աշխատանքներ: Արդյունքում լավացել է 8,5 հազ. հա ոռոգելի գյուղատնտեսական հողատեսքերի մելիորատիվ վիճակը և բարելավվել են 39 համայնքների սանիտարահիգիենիկ պայմանները: Նշենք, որ Արարատյան հարթավայրի ոռոգելի հողերի աղային հանույթի կատարման միջոցառումը չի իրականացվել ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Նախատեսվում է այն կատարել 2005 թ.-ից սկսած:
197. Հողօգտագործման արդյունավետության բարձրացման, օգտավործվող հողակտորների քանակի նվազեցման, հողերի շուկայի կայացման, գյուղատնտեսական հողերում ներդրումների և հիպոթեկային վարկավորման խթանման նպատակով ԱՅՈԾ-ի շրջանակներում նախատեսված են մի շարք միջոցառումներ: Դրանց շրջանակներում հանրապետության 318 համայնքներում, որտեղ ընդհանուր առմամբ 508184.5 հա պետական սեփականության հողերից 306612.2 հա անհատույց սեփականության իրավունքով տրամադրվել է համայնքներին:
198. Այս գործընթացը հանգեցնում է հողերի միավորմանը, որը կնպաստի հողի շուկայի արդյունավետության բարձրացմանը բերելով տնտեսապես առավել կենսունակ գյուղացիական տնտեսությունների առաջացմանը: Միջնաժամկետ և հեռանկարային առումներով այս սցենարը միանգամայն կիրառելի է Հայաստանի համար, սակայն մոտ ապագայում այն պարզապես կհանգեցնի աղքատության և չքավորության խորացմանը, առաջացնելով հողի արագ համակետորոնացում փոքրաթիվ խմբերի ձեռքում՝ բերելով արդեն իսկ չափազանց աղքատ հողի փոքր սեփականատերերի հետագա աղքատացմանը: Միաժամանակ արոտավայրերի օտարումը կարող է հանգեցնել անասապահությամբ զբաղվող աղքատ գյուղացիների վիճակի հետագա

վատթարացմամբ:³⁸ Հողերի խոշորացման և հողի շուկայի կայացմանն ուղղված գործընթացները հատուկ ուշադրության և լրացուցիչ ուսումնասիրության կարիքն ունեն` պարզելու դրանց աղքատամետ ուղղվածությունը:

199. Հողերի խոշորացմանը նպաստելու է նաև կոոպերատիվների, ասոցիացիաների, ընկերությունների և այլ միավորումների ձևավորումը: Այդ գործընթացի խթանմանը կնպաստի «Գյուղատնտեսական կազմակերպությունների և կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի ընդունումը: Միաժամանակ հանրապետության քաղաքատիպ ավաններում որպես աղքատության հաղթահարման միջոց կարելի է դիտարկել այդ ավանների բնակիչներին, համայնքներին փոխանցված հողակտորներից, որոշակի ծավալով հող հատկացնել:³⁹
200. Նշենք, որ հողերի խոշորացման բացասական հետևանքները կանխարգելող միջոցառումները` ցածրադիր և նախալեռնային տարածքներում գյուղացիական տնտեսությունների օպտիմալ չափերի որոշումն ու ջրման արդյունավետ տեխնիկայի և նրա տարրերի հիմնավորման նպատակով ՀՀ երեք մարզերում փորձացուցադրական կոոպերատիվների ստեղծում և դրանց գործունեության ապահովման միջոցառման իրականացումը, ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, հետաձգվում է:
201. Հանրապետության գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի նորացման և համալրման նպատակով, ճապոնիայի կառավարության դրամաշնորհների հաշվին, ներկրվել է 53 հացահատիկահավաք կոմբայն և 226 տրակտոր: Նույն նպատակով Չինաստանի բարեգործական ծրագրի շրջանակներում ներկրվել է 51 միավոր տրակտոր և գյուղատնտեսական գործիքներ ու պահեստամասեր: Ներկրված տեխնիկան աճուրդային եղանակով իրացվել են կամ տրվել են վարձակալության:
202. Այնուամենայնիվ դեռևս տեխնիկայի պակաս է զգացվում գյուղական համայնքներում: Հանրապետության տեխնոլոգիական պարկը վերազինվում է տարեկան ընդամենը 0.5-0.6%-ով` հիմնականում օտարերկրյա աջակցության միջոցով, մինչ այդ վերազննումը պետք է կատարվի տարեկան 7%-ի չափով: Պակաս է զգացվում փոքր (միջին) հզորության գյուղտեխնիկայի առկայության, ինչպես նաև անբավարար է դրա սարքինության մակարդակը, գյուղգործիքների արտադրությունը կազմակերպված չէ երկրի արդյունաբերական ձեռնարկությունների առկա հզորությունների բազայի վրա, լիզինգային գործարքների տեսակարար կշիռը ցածր է, դանդաղ են ընթանում գյուղտեխնիկայի օգտագործման բնագավառում կոոպերացման գործընթացները և այլն: Քանի որ գյուղացիները կոոպերացիա չեն կազմում, գործնականում տեխնիկան աշխատում է յուրաքանչյուրի համար առանձին, և փոքր, կտրտված հողակտորների դեպքում խիստ թանկ աշխատանք է դառնում, հատկապես բարձր լեռնային, կոշտ հողերի պայմաններում:⁴⁰
203. Գյուղատնտեսության առջև ծառայած խնդիրների լուծմանը նպաստով` ագրոպարենային ոլորտում կոոպերացիայի ձևավորման բնագավառում ԱՄՆ Գյուղդե-

³⁸ Մաքս Սպուր, Հողային բարեփոխումներ, գյուղական աղքատություն և անհավասարություն. հողային քաղաքականության աղքատամետ մոտեցումներ, ՄԱԿ-ի Ջարգացման ծրագիր, Հաագա-երևան, դեկտեմբեր, 2004թ.:

³⁹ ԱՀՌԾ գյուղատնտեսության ոլորտի միջոցառումների քննարկման միստի արձանագրություն, Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, Երևան, հունիսի 3, 2005:

⁴⁰ ԱՀՌԾ գյուղատնտեսության ոլորտի միջոցառումների քննարկման միստի արձանագրություն:

պարտամենտի մարքեթինգի աջակցության ծրագրի ֆինանսական աջակցության բաղադրիչ՝ 1998 թ.-ից շարունակվում է գյուղատնտեսական վարկային ակունքների ծրագիրը, որն օժանդակում է գյուղացիական և ֆերմերային ընկերություններին՝ ցուցաբերելով ֆինանսական և տեխնիկական աջակցություն: Ագրոպարենային ոլորտում կոոպերացիայի ձևավորման բնագավառում նշենք, որ գործող իրավաօրենսդրական դաշտն անհավասար մրցակցային պայմաններ է ստեղծում տարբեր կազմակերպական ձևերի ենթակառուցվածքային միավորներին: Մասնավորապես, կոոպերացման սկզբունքով ծառայություններ մատուցող կազմակերպությունների հիմնադրումն անմիջապես առաջացնում է գործունեությունից մի շարք հարկատեսակների, մասնավորապես ավելացված արժեքի հարկի և շահութահարկի գանձում, որոնցից իրականում խուսափում են նույնատիպ գործառույթ իրականացնող մասնավոր սեփականատերերը:⁴¹

204. Բարձր լեռնային, հեռավոր և առավել աղքատ գյուղերի սոցիալ-տնտեսական վիճակի կայունացման նպատակով 2004 թ. Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի միջոցներով իրականացվեց գյուղատնտեսական ծառայությունների ծրագիրը: Ծրագրի շրջանակներում Տավուշի մարզում հիմնվեց 24 հա դեղձի այգի և Սյունիքի մարզում 57 հա տարբեր տեսակի պտղատու այգիներ: Ոռոգման բնագավառում օժանդակություն է ցուցաբերվել 23 ջրօգտագործողների ընկերություններին, որոնց ոռոգելի ամբողջ տարածքը կազմում է շուրջ 73.8 հազ. հա: Կատարվել են ոռոգման ջրի մատակարարման հետ կապված շինարարական աշխատանքներ՝ 29 օբյեկտներում, որոնց արդյունքում բարձրացել է ջրապահովվածությունը շուրջ 15 հազ. հա հողատարածքներում: Ավարտվել է Տավուշի մարզի Ոսկան-Բարեկամավան միջգյուղային 18.1 կմ երկարությամբ ավտոխճուղու վերակառուցման աշխատանքները:
205. Ընդհանուր առմամբ, հաշվետու տարվա ընթացքում բանկային համակարգի կողմից գյուղատնտեսության վարկավորման ծավալները կազմել են 8.611 մլրդ դրամ, իսկ գյուղատնտեսության վարկավորման տոկոսը՝ գյուղատնտեսության ավելացված արժեքի նկատմամբ կազմել է 1.7%: Նշենք, որ ԱՅՈՒԹ-ն կանխատեսում էր, որ 2004 թ., գյուղատնտեսության ավելացված արժեքի 2.8% աճի դեպքում, գյուղատնտեսության վարկավորման տոկոսը՝ գյուղատնտեսության ավելացված արժեքի նկատմամբ պետք է կազմեր 3.4% կամ 11.90 մլրդ դրամ: Գյուղատնտեսության ոլորտին հատկացված վարկերի տոկոսադրույքը տատանվում է 18-22%-ի սահմաններում, որը տվյալ ոլորտի եկամտաբերության տոկոսների հետ համեմատած դեռևս բարձր է համարվում:
206. Վարկային ռեսուրսների նկատմամբ գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների պահանջարկի և ագրարային գիտակրթական համակարգի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով իրականացվեց «Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագիրը», որի շրջանակներում 2004 թ., Համաշխարհային բանկի միջոցներից, տրամադրվեց շուրջ 2068 կարճաժամկետ վարկ՝ 2192,9 հազ. ԱՄՆ դոլարի չափով: Միաժամանակ հանրապե-

⁴¹ Հրայր Ծպնեցյան, Գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների զարգացումը՝ աղքատության կրճատման կարևոր ուղղություն, Գյուղական աղքատությունը ՀՀ մարզերում:

տության 10 գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների կողմից մատուցվեցին տարբեր խորհրդատվական ծառայություններ, կազմակերպվեցին բազում սեմինարներ և մարքեթինգային միջոցառումներ, ինչպես նաև հեռարձակվեցին ռադիոհեռուստահաղորդումներ: Սակայն պետք է արձանագրել, որ գյուղական վայրերում առկա է խորհրդատվության ծրագրերի վերաբերյալ իրազեկության խնդիր: Չնայած գյուղերում արդեն կան գյուղատնտեսներ և անասնաբույժեր, բայց նրանց գործունեությունը իրականում գտնվում է սաղմնային վիճակում:⁴²

207. Աղքատության հաղթահարման ռազմավարությունը գյուղատնտեսության զարգացման տեսանկյունից կարևորում է նաև գյուղատնտեսական գործունեության ապահովագրման գործունե համակարգի ստեղծման հիմնախնդիրը: Նշենք, որ գյուղատնտեսությունում ապահովագրական ռիսկերի գնահատման ծրագիր-առաջարկի իրականացումը չի կատարվել ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Ապահովագրության ոլորտի կայացման նպատակով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը մշակել է համապատասխան հայեցակարգ: Ներկայումս անհրաժեշտ է իրականացնել գյուղատնտեսական ապահովագրության ռիսկերի գնահատում, ինչպես նաև հստակեցնել Կառավարության աջակցության չափը, որն ուղղված պետք է լինի տվյալ ոլորտի կայացմանը: Ներկայումս գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական ռիսկերի գնահատման ծրագրի իրականացումը նպատակահարմար է համարվել իրականացնել առաջիկայում՝ ՀՀ պետական բյուջեի միջոցներից բացի ֆինանսավորման այլ աղբյուրներ հայթայթելուց հետո:
208. Աղքատության հաղթահարման ռազմավարությունը գյուղատնտեսության զարգացման տեսանկյունից կարևորում է նաև սեզոնայնության և շուկայի պաշտպանության գործունե համակարգի ստեղծման խնդիրները: Նշենք, որ ԱՅԻՆ-ով 2004 թ. միջոցառում նախատեսված չի եղել: Ոչ կառավարական հատվածի առաջարկությամբ նախատեսվում է այդ հարցին անդրադառնալ ԱՅԻՆ առաջիկա վերանայման ժամանակ:
209. Գյուղատնտեսության կայուն զարգացումը անհրաժեշտ է նյութական աղքատության արդյունավետ հաղթահարման և, որ ամենակարևորն է՝ երկրի պարենային անկախության բավարար մակարդակի ապահովման տեսանկյունից, քանի որ պարենային անկախությունը (պարենամթերքի ինքնաբավության անհրաժեշտ մակարդակ) հնարավոր արտակարգ իրավիճակներում պարենային ճգնաժամերի առաջացման կանխարգելման հիմնական նախապայմանն է և այդ առումով հանդիսանում է ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչներից մեկը:

⁴² Հայաստանի գյուղական ձեռնարկությունների և գյուղատնտեսական փոքր կոմերցիայի զարգացման ծրագիր:

Բնապահպանություն

210. Գյուղական և քաղաքային բնակչության աղքատության վրա ազդեցության տեսանկյունից բնապահպանական խնդիրները տարբեր կերպ են արտահայտվում: Գյուղական բնակչության վրա այդ ազդեցությունն առավելապես պայմանավորված է այն հանգամանքով, որ գյուղական բնակչությունը խիստ կախվածության մեջ է գտնվում բնական ռեսուրսներից: Այս առումով հողերի և անտառների դեգրադացիայի խնդիրն ուղղակի ազդեցություն է գործում գյուղական բնակչության եկամուտների մակարդակի վրա: Քաղաքային բնակչության կենսապայմանների վրա միջնորդավորված ազդում է նաև մթնոլորտի աղտոտվածությունը, ինչպես նաև պուրակների անկանոն կառուցապատումը և կանաչ տարածքների վերացումը: Քաղաքային աղքատ բնակչությունը, որպես կանոն, հիմնականում բնակվում է շրջակա միջավայրի տեսանկյունից քաղաքների ամենամաքաբեմապատ գոտիներում՝ արդյունաբերական ձեռնարկությունների, աղբակուտակման գոտիների հարևանությամբ:
211. Աղքատության հաղթահարման ռազմավարության տեսանկյունից բնապահպանական և շրջակա միջավայրի խնդիրները կարելի է դասակարգել հետևյալ խմբերի՝
1. անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարում
 2. հողերի դեգրադացիայի կանխում, անապատացմանը նպաստող անտրոպոգեն գործոնների նվազեցում,
 3. ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում, օգտագործում և Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնում,
 4. կենցաղային աղբի հեռացման և արդյունաբերական վնասակար թափոնների խնդիրներ⁴³ :

Անտառային ռեսուրսների կառավարում

212. Անտառային ռեսուրսների կառավարման համակարգի ամրապնդման նպատակով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից մշակվել և Կառավարության հավանությանն է արժանացել «ՀՀ անտառի ազգային քաղաքականություն և ռազմավարություն» փաստաթուղթը և «Ապօրինի անտառահատումների հետ կապված խնդիրների լուծմանն աջակցող միջոցառումների գործողությունների» ծրագիրը, ինչպես նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարությանն է ներկայացվել «ՀՀ նոր անտառային օրենսգրքի» նախագիծը: Միաժամանակ, ընթացքի մեջ են «Հայաստանի անտառների ազգային ծրագրի» մշակման աշխատանքները:
213. Չնայած կետ 210-ում մշված անտառային ռեսուրսների կառավարմանը ուղղված չորս պետական կարևոր փաստաթղթերի մշակմանը և ընդունմանը, համաձայն ԱՅՈԾ աշխատանքային խմբում ներկայացված բնապահպանական հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների կարծիքի, Կոտայքի մարզի Աղավնաձոր, Մարմարիկ, Մեղրաձոր գյուղերին հարակից երբեմնի թավ անտառի ապօրինի հատման հետևանքով որոշ ընդարձակ տարածքներում մնացել են մացառներ, շուտով կսկսվի անտառածածկ տարածքների հողի դեգրադացիան և անապատացումը:

⁴³ ՀՀ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Երևան, 2003, էջ 129-130:

Երևանի կենտրոնում իրականացվող կառուցապատումը հատկապես բարձրահարկ շենքերով և հաճախ կանաչ տարածքների հաշվին, վատթարացնում է կենտրոնի էկոլոգիական իրավիճակը և մեծացնում սեյսմիկ ռիսկը: Նման կառուցապատումները ոտնահարում բնակիչների էկոլոգիական և սոցիալական իրավունքները, աղավաղում քաղաքի պատմամշակութային դեմքը⁴⁴:

214. Կայուն անտառկառավարման և անտառօգտագործման ապահովման նպատակով, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում անտառների հաշվառման, գույքագրման, մոնիտորինգի համակարգի ստեղծման և իրականացման նպատակով Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող “Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման” ծրագրի շրջանակում իրականացվեց «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Իջևան» և «Սևքար» անտառտնտեսությունների անտառկառավարման պլանների (շուրջ 45000 հա տարածքի համար) կազմման խորհրդատվական աշխատանքները:
215. Սակայն պետք է նշել, որ ըստ բնապահպանության ոլորտում զբաղվող հասարակական կազմակերպությունների և փորձագիտական խմբերի կարծիքի, անտառային ռեսուրսների օգտագործման և անտառվերականգնման գործընթացները լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունեն՝ պետական մարմինների կողմից ներկայացված վիճակագրական տվյալների ճշտությունը գնահատելու նպատակով:

Սևանա լճի էկոհամակարգի վերականգնում

216. Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման և պահպանման նպատակով հսկվել է ոռոգման համար լճից բաց թողնված ջրի չափաքանակը, որը 2004թ. կազմել է 148,8 մլն խմ: Լճի մակարդակը 2004 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1897,65 մ և մակարդակի բարձրացումն անցած երկու տարիների ընթացքում կազմել է 133 սմ:
217. Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման և պահպանման նպատակով հսկվել է ոռոգման համար լճից բաց թողնված ջրի չափաքանակը, որը 2005 թ. կազմել է 145.1 մլն խմ: Լճի մակարդակը 2005 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1898.06 մ, որը համապատասխանում է 1991 թ. լճի մակարդակի ցուցանիշին: Սակարդակի բարձրացումը անցած չորս տարիների ընթացքում կազմել է 174 սմ, որը հերթական անգամ վկայում է լճի ջրի մակարդակի բարձրացման կայուն միտումների մասին:
218. Դրական գնահատելով Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման կայուն միտումները, այնուամենայնիվ այս փուլում հարկավոր է ուսումնասիրել թե այդ միտումներն ինչ հետևանքներ են թողելու Սևանա լճի ջրի որակի վրա:

Արդյունաբերական վնասաբեր թափոններ

219. Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարման բնագավառում հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ընդունվել են ոլորտը կարգավորող մի շարք կարևոր իրավական ակտեր, այդ թվում՝ «Թափոնների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ վտան-

⁴⁴ Նմանօրինակ երևույթների կանխարգելման նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից մշակվել է քաղաքի կանաչապատ տարածքների վերականգնման և դրանց ընդլայնման ծրագիր, ըստ որի նախատեսվում է մինչև 2020 թվականը մոտ 2.5 անգամ ընդլայնել կանաչ տարածքները:

գավոր թափոնների ցանկը, ՀՀ արգելված վտանգավոր թափոնների ցանկը, «Քիմիական նյութերի և թափոնների կառավարման ազգային ակնարկը (պրոֆիլը) և «Հայաստանի Հանրապետությունում Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման գործողությունների ազգային ծրագրի 2005-2010 թթ. իրականացվելիք միջոցառումների ցանկը:

Ֆիզիկական ենթակառուցվածքի վերականգնում և զարգացում

220. Արդյունավետ ջերմամատակարարման համակարգի ստեղծման և մատչելիության ապահովման ուղղությամբ Քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման համակարգում էներգաարդյունավետության խոչընդոտների վերացման ծրագրի շրջանակներում Կառավարության կողմից հաստատվել է «Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարելավում» լայնամասշտաբ ծրագրի փաստաթուղթը՝ 2.95 մլն ԱՄՆ դոլար բյուջեով: Ծրագիրը, որը ֆինանսավորվելու է Գլոբալ էկոլոգիական ֆոնդի կողմից, մեկնարկել է 2005 թ.-ին: Ծրագրի իրականացումը նպատակաուղղված է ջերմոցային գազերի կրճատմանը:

Բնապահպանության և բնօգտագործման ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործում

221. Բնապահպանական և բնօգտագործման ոլորտի կարգավորման նպատակով ընդունվել է «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը, որը նոր էջ է բացում Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի պահպանության բնագավառում իրականացվող քաղաքականության տարեգրությունում: «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումը, բնապահպանական տեսչական համակարգի տեխնիկական հզորացմանը և տեսչական անձնակազմի մասնագիտական ունակությունների կտրուկ բարձրացմանը զուգընթաց, ոչ միայն կապահովի բնապահպանական օրենսդրությամբ ամրագրված նորմերի ու պահանջների կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացումը՝ դրանով իսկ նպաստելով բնապահպանական օրինախախտումների կանխարգելմանը, այլ նաև համահունչ կլինի վերջին 2-3 տարում Հայաստանում բնապահպանական և բնական ռեսուրսների օգտագործման ոլորտները կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործման և ընդլայնման գծով իրականացված ռազմավարական նշանակություն ունեցող գործողություններին:

222. 2005 թ.-ին «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից ջրային ռեսուրսների, հողային ռեսուրսների և մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգերի հաստատումը հնարավորություն է ընձեռում բնապահպանական տեսչական մարմիններին ավելի արդյունավետ և գործունե կերպով ապահովել շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկման և հատուցման գործընթացը:

223. Բնապահպանական և բնօգտագործման ոլորտի օրենսդրական դաշտի կատա-

- րելագործման և այդ դաշտում գործող վճարատեսակների օպտիմալացման նպատակով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից մշակվել և Կառավարությանն է ներկայացվել «Կենսապաշարների օգտագործման համար բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» օրենքի նախագիծը:
224. «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում և դրա կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերում կատարված մի շարք փոփոխությունները և լրացումները, ավելի գործունե են դարձրել այդ վճարների համակարգը թե՛ ֆիսկալ, և թե՛ կարգավորիչ (շրջակա միջավայր վնասակար արտանետումների ծավալի նվազեցման) դերի առումով: Վերոգրյալի, ինչպես նաև բնօգտագործման հաշվառվող ծավալների ավելացման և բնապահպանական տեսչական աշխատանքների արդյունավետության բարձրացման շնորհիվ, բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով շարունակական կերպով ապահովվում է պետական բյուջեի մուտքերի զգալի աճը (1998 թ. համեմատ դրանք աճել են ավելի քան 8 անգամ), որն իր հերթին հնարավորություններ է ընձեռում աստիճանական կերպով զգալի չափերով ավելացնելու բնապահպանական համապատասխան միջոցառումների իրականացման համար պետական բյուջեից ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցների ծավալները:
- Բացի նշվածից՝
- 2005 թ.-ից սկսվել է ընդերքօգտագործման լիցենզիոն պայմանագրերի հիման վրա Շրջակա միջավայրի պահպանության դրամազևիտում (ՀՀ Կենտրոնական բանկի հատուկ հաշվում) համապատասխան երաշխիքային գումարների կուտակումը, որոնք բացառապես օգտագործվելու են ընդերքի շահագործման հետևանքով խախտված տարածքների ռեկուլտիվացիայի, հարթեցման, կանաչապատման, ծառատնկման և կառուցապատման աշխատանքների իրականացման համար: 31.12.2005 թ. դրությամբ արդեն իսկ հավաքագրվել է ավելի քան 58.3 մլն դրամ:
 - ՀՀ կառավարության 23.06.2005 թ. N 897-Ն որոշմամբ ստեղծվել է «Բնապահպանական նպատակային ֆոնդ» արտաբյուջետային հաշիվը: 2005 թ. արդյունքներով Հայաստանի Հանրապետության իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից կամավոր մուծումների, նվիրատվությունների և հանգանակությունների տեսքով ֆոնդին է փոխանցվել ընդհանուր հանրագումարով 37.8 մլն դրամ: Հաշվետու տարում ֆոնդից հատկացված 17.35 մլն դրամ ֆինանսական միջոցների հաշվին իրականացվել են մի շարք կարևոր բնապահպանական ծրագրեր և միջոցառումներ:
225. «Սթնուլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը հնարավորություն է տվել 2006 թ. հունվարի 1-ից Հայաստանում ներդնել ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների վերահսկողության համապատասխան համակարգ:
226. Բնապահպանական տեսչական աշխատանքների արդյունավետության բարձրացման շնորհիվ, բնօգտագործման վճարների գծով պետական բյուջեի մուտքերը կազմել են 1649.3 մլն դրամ՝ 2003 թ. համեմատ աճելով շուրջ 40 տոկոսով:

Բյուջետային շրջանակը և պետական ծախսերի քաղաքականությունը

2004 թ. հարկաբյուջետային զարգացումները և 2005 թ. բյուջետային ծրագիրը

227. **2004 թ. տարեկան բյուջեն**, ըստ էության, առաջինն է, որն ամբողջությամբ հիմնվել է ԱՅՈՒԹ գաղափարախոսության վրա և ծրագրվել է՝ հիմք ընդունելով ԱՅՈՒԹ շրջանակներում սահմանված գերակայությունները: 2004 թ. բյուջով ՀՀ իշխանությունները նպատակ են հետապնդել բյուջեի ռեսուրսային փաթեթի իրատեսական ընդլայնման սահմաններում՝ հիմնականում ի հաշվիվ հարկային վարչարարության բարելավման և արտաքին աղբյուրներից դրամաշնորհների տեսքով լրացուցիչ միջոցների ներգրավման, ապահովել գերակա ուղղություններով (մասնավորապես, սոցիալական ոլորտ և ենթակառուցվածքներ) պետական ծախսերի ավելացումը: Միևնույն ժամանակ, կառավարությունը նպատակ է հետապնդել բյուջեի հաշվեկշիռը պահել ընդունելի սահմաններում:
228. **2004 թ. համախմբված բյուջեի եկամուտները**, նախորդ տարվա 349 մլրդ դրամ ցուցանիշի համեմատ, ավելացել են 5.6 տոկոսով՝ կազմելով 368.6 մլրդ դրամ: Ընդ որում, եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է եղել ներքին եկամուտների աճով, մասնավորապես, հարկային եկամուտները (ներառյալ՝ տուրքերը) անվանական արտահայտությամբ աճել են շուրջ 16.7 տոկոսով, իսկ ոչ հարկային եկամուտները աճել են գրեթե 60 տոկոսով: Դրան նպաստել են ինչպես հարկային և մաքսային վարչարարության բարելավումը, այնպես էլ ծրագրվածից ավելի նպաստավոր մակրոտնտեսական միջավայրը: Ինչ վերաբերվում է շնորհներին, ապա վերջինս 2004 թ. նախորդ տարվա համեմատ նվազել է մոտ 3.7 անգամ, ինչը պայմանավորված է եղել 2003 թ. Լիսի հիմնադրամի կողմից իրականացվող դրամաշնորհային ծրագրերի ավարտմամբ:

Աղյուսակ 16. Համախմբված բյուջեի շրջանակը 2002-2005 թթ. (հաշվեգրման սկզբունքով)

	2002		2003		2004		2005	
	Փաստ	ԱՅՈՒԹ	Փաստ	ԱՅՈՒԹ	Փաստ	ԱՅՈՒԹ	Բյուջե	
	<i>մլրդ դրամ</i>							
1. Ընդամենը եկամուտներ և շնորհներ	305.6	339.9	348.9	346.2	368.6	383.0	436.4	
Ընդամենը եկամուտներ	258.1	279	297.4	312.9	354.8	349.6	424.3	
Հարկային եկամուտներ	242.3	269.4	279.3	302.2	326.1	338.8	389.7	
Ոչ հարկային և կապիտալ եկամուտներ	15.7	9.6	18	10.7	28.7	10.1	34.6	
Շնորհներ	47.5	61	51.5	33.3	13.7	33.4	12.1	
Ընթացիկ	17.1	14.1	11.6	9.7	13.7	9.0	12.1	
Կապտալ	30.5	46.9	39.9	23.7	0.0	24.4	0.1	

ԱՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

	2002	2003		2004		2005	
	Փաստ	ԱՅՈՒՆ	Փաստ	ԱՅՈՒՆ	Փաստ	ԱՅՈՒՆ	Բյուջե
<i>մլրդ դրամ</i>							
2. Դեֆիցիտի ֆինանսավորում (զուտ)	12.1	36.5	14.4	41.9	31.2	39.2	51.3
Ներքին աղբյուրներ	-24.7	46.4	-24.4	2.7	-3.1	3.6	16.6
Արտաքին աղբյուրներ	36.7	-9.9	38.8	39.2	34.3	35.6	34.7
3. Ընդամենը տնօրինելի միջոցներ (1+2)	317.7	376.5	363.3	388.1	399.8	422.2	487.7
4. Ընդամենը ծախսեր և զուտ վարկավորում	317.7	376.5	363.3	388.1	399.8	422.2	487.7
Ընթացիկ ծախսեր	243.5	279	271.5	294	323.9	335.6	380.4
Կապիտալ ծախսեր	63.8	101	85.2	86.9	65.4	78.5	97.2
<i>որից՝ կապիտալ շնորհների հաշվին</i>	30.5	46.9	39.9	23.7	-	24.4	0.1
Ձուտ վարկավորում	10.4	-3.5	6.6	7.2	10.5	8.2	10.1
<i>տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ</i>							
1. Ընդամենը եկամուտներ և շնորհներ	22.4	23.1	21.5	21.5	19.4	21.8	20.7
Ընդամենը եկամուտներ	18.9	18.9	18.3	19.4	18.7	19.9	20.1
Հարկային եկամուտներ	17.8	18.3	17.2	18.8	17.2	19.3	18.5
Ոչ հարկային և կապիտալ եկամուտներ	1.2	0.7	1.1	0.7	1.5	0.6	1.6
Շնորհներ	3.5	4.1	3.2	2.1	0.7	1.9	0.6
Ընթացիկ	1.3	1	0.7	0.6	0.7	0.5	0.6
Կապտալ	2.2	3.2	2.5	1.5	0.0	1.4	0.0
2. Դեֆիցիտի ֆինանսավորում (զուտ)	0.9	2.5	0.9	2.6	1.6	2.2	2.4
Ներքին աղբյուրներ	-1.8	3.2	-1.5	0.2	-0.2	0.2	0.8
Արտաքին աղբյուրներ	2.7	-0.7	2.4	2.4	1.8	2.0	1.6
3. Ընդամենը տնօրինելի միջոցներ (1+2)	23.3	25.5	22.4	24.1	21.1	24.0	23.1
4. Ընդամենը ծախսեր և զուտ վարկավորում	23.3	25.5	22.4	24.1	21.1	24.0	23.1
Ընթացիկ ծախսեր	17.9	18.9	16.7	18.3	17.1	19.1	18.0
Կապիտալ ծախսեր	4.7	6.8	5.2	5.4	3.4	4.5	4.6
<i>որից՝ կապիտալ շնորհների հաշվին</i>	2.2	3.2	2.5	1.5	-	1.4	0.0
Ձուտ վարկավորում	0.8	-0.2	0.4	0.4	0.6	0.5	0.5

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՀՀ ՍԱԴՀ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ԱՅՈՒՆ կանխատեսումներ:

229. **Համախմբված բյուջեի ծախսերը** 2003 թ. 363 մլրդ դրամի համեմատ աճել են 10 տոկոսով և 2004 թ. կազմել շուրջ 400 մլրդ դրամ: Եթե ընթացիկ ծախսերը 2004 թ. աճել են շուրջ 19 տոկոսով, ապա կապիտալ ծախսերը նվազել են մոտ 23 տոկոսով, ինչը, ինչպես արդեն վերը նշվեց, պայմանավորված է եղել կապիտալ դրամաշնորհային ծրագրերի ավարտմամբ:
230. Թեև համախմբված բյուջեի ինչպես եկամուտները, այնպես էլ ծախսերը 2004 թ. անվանական արտահայտությամբ աճել են, այդուհանդերձ, աճը բավարար չի եղել ապահովելու ԱՅՈՒՆ շրջանակներում ծրագրված ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերական ցուցանիշների մակարդակները: Մասնավորապես, եկամուտները և ծախսերը

(ՀՆԱ-ի նկատմամբ արտահայտած) համապատասխանաբար կազմել են 19.4 և 21.1 տոկոս՝ ԱՅՈՒՄ ծրագրային ցուցանիշներից շեղվելով համապատասխանաբար -2.1 և -3.0 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, բյուջեն եզրափակվել է ՀՆԱ-ի նկատմամբ 1.6 տոկոս դեֆիցիտով՝ ծրագրային 2.6 տոկոս ցուցանիշի փոխարեն: Այդուհանդերձ, կարճաժամկետ հատվածում, հատկապես տարեկան կտրվածքով, ՀՆԱ-ի նկատմամբ ցուցանիշների վարքագծին անհրաժեշտ է մոտենալ որոշ զգուշությամբ, քանի որ տվյալ պարագայում նման զարգացումների հիմնական պատճառներից մեկը հանդիսացել են ծրագրային և փաստացի անվանական ՀՆԱ ցուցանիշների միջև արձանագրված շեղումները՝ 2003 թ. ՀՆԱ-ն անվանական արտահայտությամբ աճել է շուրջ 19 տոկոսով՝ ծրագրով կանխատեսվող 10 տոկոսի համեմատ, իսկ 2004 թ.՝ 16.7 տոկոսով, ծրագրով կանխատեսվող 9.2 տոկոսի համեմատ⁴⁵:

231. Անդրադառնալով բյուջեի առաջնային գերակայություններից մեկը հանդիսացող սոցիալական ոլորտին՝ ⁴⁶ անհրաժեշտ է նշել, որ կառավարությունը, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, հիմնականում կատարել է համապատասխան ոլորտներում իր ծախսային պարտավորությունները: 2004 թ. այս ոլորտներում ծախսերն աճել են ընդհանուր ծախսերի համեմատ առաջանցիկ տեմպերով և կազմել են շուրջ 158 մլրդ դրամ (նախորդ տարվա համեմատ +23.8 տոկոս), ինչը հանգեցրել է բյուջեի ծախսերի կառուցվածքի որոշ տեղաշարժերի՝ ի օգուտ սոցիալական ծախսերի, որոնց տեսակարար կշիռը համախմբված բյուջեի ընդհանուր ծախսերում 2003 թ. համեմատ ավելացել է 4.4 տոկոսային կետով և 2004 թ. կազմել է 39.6 տոկոս: Սակայն, հիմնականում պայմանավորված ՀՆԱ-ի ծրագրվածից ավելի բարձր աճի տեմպերով, այս դեպքում ևս հնարավոր չի եղել ապահովել ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերակցությունների տեսքով ծրագրային ցուցանիշի մակարդակը՝ 2004 թ. սոցիալական ծախսեր - ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 8.35 տոկոս՝ ծրագրված 9.3 տոկոսի փոխարեն: Այդուհանդերձ, կառավարությունը մտադիր չէ նվազման ուղղությամբ վերանայել «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով» ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերակցությունների տեսքով սահմանված սոցիալական ծախսերի գծով նպատակային ցուցանիշները և արդեն իսկ այդ բացը լրացնելու ուղղությամբ որոշակի քայլեր է նախատեսել ինչպես 2005 թ. տարեկան բյուջեում, այնպես էլ 2006-2008 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում:

232. **2005 թ. բյուջեով** հաստատված ընդհանուր եկամուտներն անվանական արտահայտությամբ շուրջ 53.4 մլրդ դրամով գերազանցում են ԱՅՈՒՄ բյուջետային շրջանակում ծրագրված համապատասխան ցուցանիշի մակարդակը: Ընդ որում, հարկային եկամուտները անվանական արտահայտությամբ գերազանցում են ԱՅՈՒՄ-ով սահմանված ցուցանիշը շուրջ 51 մլրդ դրամով, իսկ ոչ հարկային եկամուտները՝ 24.5 մլրդ դրամով, իսկ հաստատված դրամաշնորհների ընդհանուր ծավալը, ընդհակառակը, ԱՅՈՒՄ-ով սահմանված ցուցանիշից ցածր է շուրջ 20 մլրդ դրամով:

⁴⁵ Ձարգացումների նման սցենար ԱՅՈՒՄ ծրագրման վերջնական փուլերում արդեն իսկ ակնկալվում էր, որին ԱՅՈՒՄ փաստաթղթում կատարվել է համապատասխան անդրադարձ:

⁴⁶ Կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն և սոցիալական ապահովագրություն:

233. 2005 թ. բյուջեով հաստատված ընդհանուր ծախսերը անվանական արտահայտությամբ 65.5 մլրդ դրամով գերազանցում են ԱՅԻՆ բյուջետային շրջանակում ծրագրված համապատասխան ցուցանիշի մակարդակը: Այդ ընդլայնումը մոտ կիսով չափ (30 մլրդ դրամով) ապահովվել է ԱՅԻՆ գերակայություն համարվող սոցիալական ոլորտի ծախսերի հաշվին. այսպես՝ կրթության ոլորտի ծախսերը ԱՅԻՆ-ով սահմանված ցուցանիշը գերազանցում են շուրջ 11.6 մլրդ դրամով, առողջապահության ծախսերը՝ 1.4 մլրդ դրամով, իսկ սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության ծախսերը՝ 18.9 մլրդ դրամով:
234. Չնայած նրան, որ թե եկամուտների և թե ծախսերի գծով 2005 թ. հաստատված բյուջեի ցուցանիշները անվանական արտահայտությամբ զգալիորեն գերազանցում են ԱՅԻՆ բյուջետային շրջանակում ծրագրված համապատասխան ցուցանիշները, այնուամենայնիվ համախմբված բյուջեի եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին դեռևս շարունակում է ցածր մնալ ԱՅԻՆ ծրագրային ցուցանիշներից, թեև 2005 թ. սպասվում է, որ այդ խզվածությունը որոշակի չափով կնվազի: Եթե 2004 թ. այդ խզումը եկամուտների և ծախսերի մասով համապատասխանաբար կազմել է 2.1 և 3 տոկոսային կետ, ապա 2005 թ. հաստատված բյուջեով՝ 1.1 և 0.9 տոկոսային կետ:
235. Ելեկտրոլվ վերոնշյալից՝ ԱՅԻՆ առաջիկա վերանայման ժամանակ ՀՀ կառավարությունն առանձնակի ուշադրություն կդարձնի նշված խնդրին և համապատասխան միջոցառումներ կնախատեսի բյուջեի եկամտային և ծախսային հիմնական ցուցանիշները ծրագրավորված մակարդակներին հասցնելու ուղղությամբ՝ հատկապես հարկային եկամուտների մասով:

Աղքատության հաղթահարման ռազմավարությունը և պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման գործընթացը

236. Աղքատության հաղթահարման ռազմավարության հաջող իրականացման կարևոր նախապայմաններից են ծրագրով ամրագրված գերակայությունների արտացոլումը պետական ծախսերում և նախանշված քաղաքականության ու միջոցառումների ֆինանսական ապահովումը: Այս համատեքստում կառավարության կողմից որպես աղքատության հաղթահարման գործառնական առանցքային մեխանիզմ են դիտվում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերը (ՄԺԾ):
237. Հայաստանում պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման առաջին փորձը ձեռնարկվել է 2000 թ., երբ մշակվել է 2001-2003 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը: Աստիճանաբար ընդլայնվել են ինչպես ֆինանսների և էկոնոմիկայի, այնպես էլ ճյուղային նախարարություններում պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման կարողությունները⁴⁷: Դրան հատկապես նպաստել են

⁴⁷ Եթե 2003-2005 թթ. ՄԺԾ մշակմանը մասնակցել են չորս ճյուղային գերատեսչություններ (ՀՀ առողջապահության, կրթության, սոցիալական ապահովության նախարարությունները և ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեն), ապա 2004-2006 թթ. ՄԺԾ մշակմանը ներգրավված են եղել պետական կառավարման բոլոր մարմինները:

համապատասխան ինստիտուցիոնալ կառուցվածքի ստեղծման ուղղությամբ ձեռնարկած քայլերը: Մասնավորապես, կարևորելով պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման դերն ու նշանակությունը, 2002 թ. կառավարության որոշմամբ ամրագրվեց պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշտապես գործող խորհրդի և պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշակման աշխատանքները համակարգող մշտապես գործող խմբի ստեղծումը, իսկ օրենսդրորեն պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման գործընթացը կանոնակարգելու նպատակով 2003 թ. համապատասխան փոփոխություններ կատարվեցին «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքում: Ըստ այդ փոփոխությունների, պետական ծախսերի ծրագրման գործընթացն ամրագրվեց որպես ընդհանուր բյուջետային գործընթացի բաղկացուցիչ մաս: Այդ փոփոխությունների համաձայն, մասնավորապես սահմանվեց, որ մինչև տարեկան բյուջեի նախագծի ներկայացումը, կառավարությունը յուրաքանչյուր տարի ՀՀ Ազգային ժողով է ներկայացնում առաջիկա երեք տարիների պետական ծախսերի ռազմավարությունն ամփոփող փաստաթուղթ՝ դրանով իսկ էլ ավելի կարևորելով միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ որպես առանցքային քաղաքական փաստաթուղթ: Մյուս կողմից, կառավարությունը պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը դիտում է որպես այն հենքային փաստաթղթերից մեկը, որի շրջանակներում բանակցվելու են արտաքին օժանդակության ներգրավման խնդիրները:

**Աղյուսակ 17. Պետական բյուջեի շրջանակը 2005-2008 թթ.՝
ԱՅՈՒԹ և 2006-2008 թթ. ՄԺԾԾ կանխատեսումներ**

	2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
	ԱՅՈՒԹ				Բյուջե	2006 - 2008 ՄԺԾԾ		
	մլրդ դրամ							
1. Ընդամենը եկամուտներ և շնորհներ	318.6	350.8	389.9	427.9	345.4	373.2	415.3	455.2
Ընդամենը եկամուտներ	285.1	318.7	359.0	398.8	336.5	365.5	407.6	454.1
Հարկային եկամուտներ	277.4	310.8	347.5	388.4	310.5	358.4	400.7	448.2
Ոչ հարկային և կապիտալ եկամուտներ	7.8	7.9	11.6	10.5	26.0	7.1	6.9	5.9
Շնորհներ	33.4	32.2	30.8	29.0	8.9	7.7	7.7	1.1
Ընթացիկ	9.0	8.5	10.2	10.3	8.9	7.7	7.7	1.1
Կապտալ	24.4	23.7	20.6	18.8	0.0	0.0	0.0	0.0
2. Դեֆիցիտի ֆինանսավորում (զուտ)	39.2	38.6	41.3	45.4	49.3	66.7	72.9	79.5
Ներքին աղբյուրներ	3.6	4.3	1.2	5.0	14.6	31.2	32.6	34.6
Արտաքին աղբյուրներ	35.6	34.3	40.1	40.4	34.7	35.5	40.3	44.9
3. Ընդամենը տնօրինելի միջոցներ (1+2)	357.8	389.5	431.2	473.3	394.7	439.9	488.2	534.7
4. Ընդամենը ծախսեր և զուտ վարկավորում	357.8	389.5	431.2	473.3	394.7	439.9	488.2	534.7
Ընթացիկ ծախսեր	273.0	296.7	330.2	364.2	295.2	326.3	359.0	381.9
Կապիտալ ծախսեր	76.5	81.7	88.0	96.1	89.4	97.3	111.5	134.9
որից՝ կապիտալ շնորհների հաշվին	24.4	23.7	20.6	18.8	0.0	0.0	0.0	0.0
Զուտ վարկավորում	8.2	11.1	13.0	13.0	10.1	16.3	17.7	17.9
	տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ							
1. Ընդամենը եկամուտներ և շնորհներ	18.1	18.3	18.6	18.7	16.4	16.2	16.5	16.6
Ընդամենը եկամուտներ	16.2	16.6	17.1	17.4	16.0	15.9	16.2	16.5
Հարկային եկամուտներ	15.8	16.2	16.6	17.0	14.7	15.6	15.9	16.3
Ոչ հարկային և կապիտալ եկամուտներ	0.4	0.4	0.6	0.5	1.2	0.3	0.3	0.2

ԱՐՈԾ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԹԱՅԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

	2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
	ԱՐՈԾ				Բյուջե	2006 - 2008 ՄԺԾԾ		
Շնորհներ	1.9	1.7	1.5	1.3	0,4	0,3	0,3	0,0
Ընթացիկ	0.5	0.4	0.5	0.4	0,4	0,3	0,3	0,0
Կապտալ	1.4	1.2	1.0	0.8	0,0	0,0	0,0	0,0
2. Դեֆիցիտի ֆինանսավորում (զուտ)	2.2	2.0	2.0	2.0	2,3	2,9	2,9	2,9
Ներքին աղբյուրներ	0.2	0.2	0.1	1.8	0,7	1,4	1,3	1,3
Արտաքին աղբյուրներ	2.0	1.8	1.9	0.2	1,6	1,5	1,6	1,6
3. Ընդամենը տնօրինելի միջոցներ (1+2)	20.4	20.3	20.6	20.7	18,7	19,1	19,4	19,5
4. Ընդամենը ծախսեր և զուտ վարկավորում	20.4	20.3	20.6	20.7	18,7	19,1	19,4	19,5
Ընթացիկ ծախսեր	15.5	15.5	15.8	15.9	14,0	14,2	14,3	13,9
Կապիտալ ծախսեր	4.4	4.3	4.2	4.2	4,2	4,2	4,4	4,9
<i>որից՝ կապիտալ շնորհների հաշվին</i>	<i>1.4</i>	<i>1.2</i>	<i>1.0</i>	<i>0.8</i>	0,0	0,0	0,0	0,0
Զուտ վարկավորում	0.5	0.6	0.6	0.6	0,5	0,7	0,7	0,7

Աղբյուրը՝ ԱՐՈԾ և 2005 բյուջե

238. 2006-2008 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման հենքային և առաջնորդող փաստաթղթերից մեկը հանդիսացել է «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը»: Հիմնական փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել բյուջետային շրջանակի ռեսուրսային փաթեթում⁴⁸, հիմնականում պայմանավորված են եղել ԱՐՈԾ-ով ծրագրված մակրոտնտեսական սցենարի համեմատ ավելի բարենպաստ պայմաններով (մասնավորապես, 2003 և 2004թ. արձանագրված ՀՆԱ աճի ավելի բարձր տեմպը) և արտաքին օժանդակության (հատկապես, շնորհների) գծով ակնկալվելիք հատկացումների չափերի վերանայումներով): Առաջին գործոնի արդյունքում, մասնավորապես, աճման ուղղությամբ վերանայվել են հարկային եկամուտների (անվանական արտահայտությամբ) 2006-2008 թթ. կանխատեսումները, մինչդեռ կապիտալ շնորհների ստացման ոչ հստակության պայմաններում, դրանց գծով առաջիկա երեք տարիներին ռեսուրսային շրջանակում մուտքեր չեն ծրագրավորվել՝ նվազման ուղղությամբ համապատասխան ճշգրտումներ կատարելով նաև դրանց ամրագրված կապիտալ ծախսերի ծրագրերում: 2006-2008 թթ. ՄԺԾԾ շրջանակներում պետական ծախսերի ծրագրումը կատարվել է հիմք ընդունելով ԱՐՈԾ շրջանակներում սահմանված գերակայությունները, մասնավորապես, սոցիալական ուղրտ (առողջապահություն, կրթություն, սոցիալական ապահովություն և ապահովագրություն), ենթակառուցվածքներ և պետական կառավարման համակարգի արդիականացում: Թեև անվանական արտահայտությամբ 2006-2008 թթ. ՄԺԾԾ բյուջետային շրջանակի ցուցանիշները հիմնականում գերազանցում են ԱՐՈԾ-ով սահմանված նպատակադրումները, այդուհանդերձ, նկատելի են բացասական շեղումներ ՀՆԱ նկատմամբ արտահայտած համապատասխան ցուցանիշների միջև, ինչը հատկապես, վերաբերում է հարկային եկամուտներ ՀՆԱ հարաբերակցությանը:

⁴⁸ Թեև ԱՐՈԾ բյուջետային շրջանակը ամփոփում է համախմբված բյուջեի գործառնությունները, այդուհանդերձ, հաշվետվության այս հատվածում երկու փաստաթղթերի համապատասխան ցուցանիշների համեմատական վերլուծությունը հիմնականում կատարվելու է պետական բյուջեի մասով, քանի որ 2005-2007 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում պետական ֆինանսների զարգացումների ծրագրումը, հիմնականում, ընդգրկել է պետական բյուջեի շրջանակը:

239. Միևնույն ժամանակ, ելնելով ներկա պահանջներից և զարգացման հեռանկարներից, կառավարությունը մնում է այն համոզմանը, որ համախմբված պետական բյուջեի գործառնությունները առաջիկա տարիներին պետք է լինեն ՀՆԱ 24-25 տոկոսի շրջանակներում և քայլեր է ձեռնարկելու համապատասխան չափով միջոցների համալրման (մասնավորապես, հարկային եկամուտների գծով) ուղղությամբ: Մյուս կողմից, ռեսուրսների սահմանափակության պայմաններում, կառավարությունը կատարելու է պետական ծախսերի միջև միջոլորտային համապատասխան վերաբաշխումներ՝ ի օգուտ ԱՅՈՒԹ շրջանակներում գերակա համարվող ուղղությունների՝ դրանով իսկ ապահովելով համապատասխան ուղղություններով պետական ծախսեր - ՀՆԱ հարաբերակցությունների ԱՅՈՒԹ նպատակային ցուցանիշները: Մասնավորապես, 2006–2008 թթ. ՄԺԾ շրջանակներում նման մոտեցումն ակնառու է սոցիալական ծախսերի պարագայում:

240. Հաշվի առնելով **սոցիալական ծախսերի** (առողջապահություն, կրթություն, սոցիալական ապահովություն և ապահովագրություն) գերակայությունը և, միևնույն ժամանակ, նպատակ ունենալով ապահովել ԱՅՈՒԹ շրջանակներում այդ ծախսերի գծով նպատակային ցուցանիշները, պայմանավորված 2003 և 2004 թթ. փաստացի ՀՆԱ ավելի բարձր աճի տեսակերով, ԱՅՈՒԹ համեմատ 2006-2008 ՄԺԾ-ում ի օգուտ այդ ծախսերի կատարվել է բյուջետային ռեսուրսների զգալի վերաբաշխում: 2006-2008 թթ. ՄԺԾ շրջանակներում ծրագրվում է ընդհանուր բյուջետային ծախսերի համեմատ սոցիալական ծախսերի առաջանցիկ աճ, որի արդյունքում 2008 թ. պետական բյուջեի սոցիալական ծախսերի տեսակարար կշիռը 2005 թ. հաստատված բյուջեի 34.6 տոկոսի համեմատ աճելու է շուրջ 3.7 տոկոսային կետով՝ կազմելով 38.3 տոկոս (տե՛ս Աղյուսակ 18):

Աղյուսակ 18. Պետական բյուջեի սոցիալական ծախսերը՝ ԱՅՈՒԹ և 2006-2008 թթ. ՄԺԾ կանխատեսումներ

	2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
	ԱՅՈՒԹ				Բյուջե	2006 – 2008 թթ. ՄԺԾ		
	մլրդ դրամ							
Ընդամենը սոցիալական ծախսեր	120.0	137.9	155.0	177.6	136.5	156.9	180.5	205
Կրթություն	47.9	54.8	62.8	76.9	57,7	66	75,3	90,4
Առողջապահություն	30.8	35.5	40.9	46.9	32,2	37,3	48,4	56,4
Սոցիալական ապահովություն և սոցիալական ապահովագրություն	41.4	47.6	51.3	53.7	46,6	53,6	56,8	58,2
<i>որից՝ ընտանեկան նպաստներ</i>	<i>20.2</i>	<i>24.9</i>	<i>27.2</i>	<i>29.7</i>	20	24,7	26,6	27,2
	փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ՝ տոկոս							
Ընդամենը սոցիալական ծախսեր	19.6	14.9	12.3	14.6		14,9	15,0	13,6
Կրթություն	21.6	14.5	14.6	22.5		14,4	14,1	20,1
Առողջապահություն	23.5	15.4	15.1	14.7		15,8	29,8	16,5
Սոցիալական ապահովություն և սոցիալական ապահովագրություն	14.7	15.1	7.7	4.7		15,0	6,0	2,5
<i>որից՝ ընտանեկան նպաստներ</i>	<i>25.6</i>	<i>23.4</i>	<i>9.2</i>	<i>9.2</i>		23,5	7,7	2,3
	տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ							
Ընդամենը սոցիալական ծախսեր	6.8	7.2	7.4	7.8	6,5	6,8	7,2	7,5
Կրթություն	2.7	2.9	3.0	3.4	2,7	2,9	3,0	3,3
Առողջապահություն	1.8	1.9	2.0	2.1	1,5	1,6	1,9	2,1

	2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
	ԱՅՈՒՆ				Բյուջե	2006 – 2008 թթ. ՄԺԾԾ		
Սոցիալական ապահովություն և սոցիալական ապահովագրություն	2.4	2.5	2.4	2.3	2,2	2,3	2,3	2,1
<i>որից՝ ընտանեկան նպաստներ</i>	<i>1.2</i>	<i>1.3</i>	<i>1.3</i>	<i>1.3</i>	0,9	1,1	1,1	1,0
<i>տոկոս՝ պետական բյուջեի ծախսերի նկատմամբ</i>								
Ընդամենը սոցիալական ծախսեր	33.6	35.4	35.9	37.5	34,6	35,7	37,0	38,3
Կրթություն	13.4	14.1	14.6	16.3	14,6	15,0	15,4	16,9
Առողջապահություն	8.6	9.2	9.5	9.9	8,2	8,5	9,9	10,5
Սոցիալական ապահովություն և սոցիալական ապահովագրություն	11.6	12.2	11.9	11.3	11,8	12,2	11,6	10,9
<i>որից՝ ընտանեկան նպաստներ</i>	<i>5.6</i>	<i>6.4</i>	<i>6.3</i>	<i>6.3</i>	5,1	5,6	5,4	5,1

Աղբյուրը՝ ԱՅՈՒՆ և 2006-2008 թթ. ՄԺԾԾ կանխատեսումներ:

ԱՅՈՒՆ իրականացման գործընթացում մասնակցության ապահովման ուղղությամբ իրականացված քայլերը

241. 2003թ. օգոստոս ամսին ԱՅՈՒՆ ծրագրի ընդունումից հետո ՀՀ կառավարությունը ձեռնամուխ եղավ վերջինիս իրականացմանը, որի շրջանակներում ի թիվս այլ միջոցառումների աշխատանքներ են կատարվել նաև ԱՅՈՒՆ իրականացման գործընթացի համակարգման մեխանիզմների ներդրման ուղղությամբ:
242. Գիտակցելով, որ հանրության բոլոր կողմերի մասնակցությամբ ԱՅՈՒՆ իրականացման, նրա մոնիտորինգի և գնահատման համակարգերի կայացումը հանդիսանում է ԱՅՈՒՆ արդյունավետ իրականացման գործընթացի կարևորագույն նախապայմանը՝ ՀՀ կառավարությունն առաջարկեց հանրության բոլոր շահագրգիռ կողմերին դառնալ ԱՅՈՒՆ իրականացման և դրա արդյունքների մոնիտորինգի ու գնահատման աշխատանքներում գործընկեր, ինչը հնարավորություն կտա ԱՅՈՒՆ մշակման գործընթացում հասարակության լայն մասնակցության դրական փորձը պահպանել և զարգացնել նաև ծրագրի իրականացման փուլում: Վերջինում հանրության մասնակցության գործընթացը պետք է ունենար առավել կազմակերպված բնույթ և դրվեր ինստիտուցիոնալ հիմքերի վրա՝ նպաստելով Հայաստանում հասարակական գործընկերության ինստիտուտի կայացմանը:
243. Այս նպատակով 2004 թ. մարտի 31-ին կայացավ հանդիպում հասարակական կազմակերպությունների հետ, որի ժամանակ ներկայացվեցին ԱՅՈՒՆ իրականացման գործընթացում հանրության մասնակցությամբ որոշումների կայացման համակարգի կազմակերպման հիմնադրույթները: Իրականացված աշխատանքների արդյունքում 2004 թ. հուլիսի 30-ին բանակցային խմբում ընդգրկված կողմերի ներկայացուցիչների կողմից ստորագրվեց ԱՅՈՒՆ իրականացման գործընթացում գործընկերային բանակցություններ ծավալելու մասին հուշագիրը, որը հետագայում հիմք հանդիսացավ ԱՅՈՒՆ համակարգման մասնակցային մեխանիզմների ներդրման համար:
244. Հանրության բոլոր շահագրգիռ կողմերի հետ իրականացված բազմաթիվ քննարկումների արդյունքում 2004թ. հոկտեմբերի 30-ին հնարավոր եղավ կնքել ԱՅՈՒՆ

իրականացման գործընկերության համաձայնագիրը, որի կողմեր են հանդիսանում իշխանությունները, հասարակական միավորումները, գործարար շրջանակները, արհեստակցական միությունները և Հայ առաքելական եկեղեցին:

245. Համաձայնագրում ամրագրված սկզբունքների հիման վրա ձևավորվեց հանրության մասնակցությամբ ԱՅԹ իրականացման կառավարման համակարգը, որը բաղկացած է երկու մակարդակներից՝ ԱՅԹ իրականացման գործընթացը համակարգող մասնակցային խորհրդից, որը ձևավորվել է ՀՀ վարչապետի 2005 թ. հունվարի 25-ի թիվ 43-Ն որոշմամբ, և ԱՅԹ իրականացման ընթացիկ աշխատանքները համակարգող մասնակցային աշխատանքային խմբից, որոնց կազմերում ընդգրկվեցին գործընկերության համաձայնագրին միացած բոլոր կողմերը:
246. Համակարգող խորհրդի 2005 թ. փետրվարի 23-ին կայացած անդրանիկ նիստում հաստատվեցին մի շարք կարևոր փաստաթղթեր, որոնք հետագայում հիմք ծառայեցին ԱՅԹ իրականացման գործընթացի համակարգման համար: Մասնավորապես, Համակարգող խորհուրդը հաստատեց ԱՅԹ իրականացման աշխատանքների ընթացիկ համակարգման աշխատանքային խմբի կանոնակարգը և անհատական կազմը, 2005 թ. ընթացքում իրականացվելիք աշխատանքների ժամանակացույցը, ԱՅԹ կառավարման և իրականացման գործընթացի վերաբերյալ հանրային իրազեկման և հետադարձ կապի ապահովման նպատակով ձևավորեց ԱՅԹ Բաց ֆորում, հաստատելով վերջինիս 2005 թ. աշխատանքային ծրագիրը, ինչպես նաև նշանակեց ԱՅԹ Բաց ֆորումի պատասխանատուին:
247. Միաժամանակ պետական կառավարման մարմիններին ԱՅԹ տարեկան հաշվետվության նախապատրաստման և ԱՅԹ վերանայման աշխատանքներում աջակցելու նպատակով ձևավորվեց ԱՅԹ մոնիտորինգի և գնահատման փորձագիտական խումբ:
248. **Բաց ֆորումը**, որն իր գործունեությունն սկսել է 2005թ. փետրվարի 23-ին, արդեն իսկ իրականացրել է 11 միջոցառում: ԱՅԹ Բաց ֆորումի կողմից նախաձեռնված քննարկումներին մասնակցել են շահագրգիռ պետական ատյանների և հասարակական կառույցների ներկայացուցիչներ, ԱՅԹ փորձագետներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ոլորտում հետազոտություններ և աշխատանքներ իրականացրած կազմակերպությունների ներկայացուցիչներ: Արդյունքում, նման քննարկումներին մասնակցել է մոտ 200 հասարակական կազմակերպություն, ինչպես նաև առանձին անհատներ ՀՀ գյուղական համայնքներից և քաղաքներից: Հաշվետվողականության գործառույթը ապահովելու նպատակով, քննարկումների ընթացքում պետական մարմինների ներկայացուցիչները ներկայացրել են ներկա իրավիճակը տվյալ ոլորտում, որի հիման վրա քննարկումներ են ծավալվել բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:
249. 2005 թ. ապրիլի 14-ին Թեքեյան կենտրոնում տեղի է ունեցել Բաց ֆորումի առաջին քննարկումը, որի առարկան ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թ. մարտի 22-ի որոշմամբ խմելու ջրի սակագների բարձրացումն էր: Բաց ֆորումը նպատակ ուներ պարզելու, թե նոր սակագները որքանով են բխում ԱՅԹ քաղաքականություններից և ինչ սոցիալական հետևանքներ կարող են ունենալ մասնավորապես անապահով բնակչության վրա: Մասնակիցների

կողմից առաջարկվող լուծումները հիմնականում վերաբերում էին Հայաստանում ջրային կառավարման ոլորտի բարեփոխումներին և դրանց սոցիալական ազդեցություններին: Ներկայացվել էին աղքատ ընտանիքների պաշտպանության մեխանիզմները՝ ջրի սակագների բարձրացման պարագայում: Քննարկման արդյունքում հնչեցված առաջարկներն ամփոփվել են ԱՅԴՆ Բաց ֆորումի կողմից՝ ակնկալելով, որ վերջիններս կկիրառվեն խմելու ջրի նոր սակագնային քաղաքականության ձևավորման ընթացքում:

250. 2005 թ. մայիսի 13-ին, ԱՅԴՆ Բաց ֆորումի շրջանակներում կազմակերպվել է «ԱՍԱԳ (Աղքատության սոցիալական ազդեցության գնահատում) հետազոտությունների արդյունքների ներկայացում» խորագրով փորձագիտական քննարկում: Գերմանիայի Տեխնիկական համագործակցության ընկերության աջակցությամբ իրականացված այս հետազոտությունը վերաբերում էր Հայաստանյան ԱՅԴՆ-ի շրջանակներում իրականացվող սոցիալական ոլորտի բարեփոխումներին, մասնավորապես, զբաղվածության և աղքատության նպաստների համակարգին: Հայաստանում իրականացվող սոցիալական ոլորտի բարեփոխումների գործընթացում ԱՍԱԳ-ը նպատակաուղղված է աջակցելու հիմնավորված որոշումների կայացմանը՝ ընտրված ոլորտներում քաղաքականությունների տարբերակների արդյունավետության քննարկման, համապատասխան ցուցանիշների և չափորոշիչների ընտրության և հետևանքների վերլուծության միջոցով: Միաժամանակ, ԱՍԱԳ-ը հնարավորություն է տալիս հետազոտությունների և վերլուծությունների արդյունքում բացահայտել ոլորտների հիմնախնդիրները, որոնք դեռևս լուծված չեն և լուրջ քննարկումների կարիք ունեն:
251. 2005 թ. մայիսի 31-ին, ԱՅԴՆ Բաց ֆորումի շրջանակներում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտաժողովների կլոր դահլիճում կայացել է սեմինար-խորհրդակցություն, որի ընթացքում ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի Հայաստանյան գրասենյակը ներկայացրել էր «Մարդկային աղքատությունն ու աղքատամետ քաղաքականությունը Հայաստանում» վերնագրով զեկույցը: Սեմինար-խորհրդակցության ակնկալվող արդյունքներն էին՝ աշխատանքային խմբերում ձևակերպել առաջարկություններ ու դիտողություններ՝ ուղղված զեկույցի բարելավմանն ու մասնագիտական ու հանրային կարծիքի ընդգրկմանը: Սեմինարի արդյունքներն ու առաջարկություններն ամփոփվել են և տեղ գտել զեկույցի վերջնական տարբերակում:
252. 2005թ. հուլիսի 1-ին, Արմավիրի մարզում ԱՅԴՆ Բաց ֆորումի նախաձեռնությամբ կազմակերպվել է քննարկում հողերի խոշորացման վերաբերյալ: Քննարկումը հիմնականում վերաբերում էր Արմավիրի մարզում, ինչպես նաև ողջ Արարատյան դաշտում տեղի ունեցող հողերի խոշորացման գործընթացին: Հանդիպման ընթացքում արձանագրվել է, որ հողերի խոշորացման գործընթացն ունի մոնիտորինգի լուրջ կարիք և պետական քաղաքականության արդյունավետության բարձրացում:
253. 2005 թ. օգոստոսի 24-ին, Վանաձոր քաղաքում Բաց ֆորումի շրջանակներում կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում «Հանրակրթության որակի և մատչելիության բարձրացման հիմնախնդիրները Լոռու մարզում» թեմայով: Քննարկումները

հիմնականում ծավալվել են երկու խնդիրների շուրջ՝ հանրակրթության որակի և մատչելիության, սակայն չէին շրջանցել նաև նախակրթական և բուհական հաստատությունների խնդիրները: Հանրակրթության ոլորտում առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվեց կատարել օրենսդրական և համակարգային փոփոխություններ կրթության քաղաքականության և ռազմավարության մեջ, ինչպես նաև դիտարկել ընդհանուր, միասնական կրթություն՝ սկսած նախակրթական հաստատություններից մինչև բուհ: Կրթության կայուն երաշխիքներ ստանալու նպատակով՝ մշակել և իրականացնել դպրոցի ֆինանսական լրացուցիչ աղբյուրներ ստանալու ծրագրեր: Կարևորվեց տեղի կադրերի պատրաստման ծրագրի իրականացումը, ինչպես նաև հասարակության վերաբերմունքը կրթության նկատմամբ փոխելու անհրաժեշտությունը:

254. 2005 թ. օգոստոսի 29-ին, Բաց ֆորումի նախաձեռնությամբ հանրային հեռուստատեսության «Հինգերորդ անիվ» հաղորդաշարի շրջանակներում կազմակերպվել է բաց քննարկում, որտեղ լուսաբանվել է հանրային մասնակցությունն ԱՅՌԾ իրականացման գործընթացում: Հաղորդման ընթացքում շեշտվել էր հանրության առանձին խմբերի և լայն հասարակայնության մասնակցության կարևորությունն ԱՅՌԾ իրականացմանը և պետական ծրագրերին ընդհանրապես:
255. 2005 թ. սեպտեմբերի 30-ին, ՄԱԶԾ նախաձեռնությամբ ԱՅՌԾ Բաց ֆորումի շրջանակներում տեղի է ունեցել հանդիպում Գյումրի քաղաքի հատուկ կարիքներով զբաղվող ՀԿ-ների ներկայացուցիչների հետ: Հանդիպման նպատակն էր քննարկել հատուկ կարիքներով բնակչության խմբերի հարցերով զբաղվող ՀԿ-ների կարողությունների զարգացման հիմնախնդիրները, պետության և ՀԿ-ների միջև համագործակցության մեխանիզմները, ինչպես նաև պետության որոշ գործառույթների ՀԿ-ներին փոխանցման արդյունավետությունը: Քննարկման արդյունքում առաջարկվել էր խոցելի խմբերի աղքատության նվազեցման առումով պետական գործառույթների մի մասը որոշակի ֆինանսական հիմունքներով փոխանցել մասնագիտացված ՀԿ-ներին, որոնք կբավարարեն տվյալ ծառայությունների մատուցման արդյունավետությունը:
256. 2005 թ. հոկտեմբերի 12-ին, Արտաշատ քաղաքում Բաց ֆորումի շրջանակներում կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում՝ «Հայ գյուղական համայնք. որո՞նք են բարգավաճման ուղիները (Վերին Արտաշատ և Տափերական համայնքների իրավիճակների համեմատական վերլուծություն)» թեմայով: Քննարկումը նպատակ ուներ ներկայացնելու Վերին Արտաշատ և Տափերական համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակները, կատարել համայնքների կենսապահովման պայմանների համեմատական վերլուծություն, ինչպես նաև համայնքների զարգացման միտումների վերլուծություն, զնահատել առկա միտումները և առաջադրել հնարավոր լուծումներ:
257. 2005 թ. հոկտեմբերի 26-ին, Հրազդան քաղաքում Ֆորումի շրջանակներում կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում՝ «Աղքատության հաղթահարման հիմնախնդիրները միջին քաղաքում» թեմայով: Քննարկման ընթացքում ներկայացվել է Հրազդան և Չարենցավան քաղաքների սոցիալ-տնտեսական իրավիճակը: Քննարկումը նպատակ ուներ վերլուծելու կենսապահովման պայմանները, զարգացման միտումներ:

ները, բացահայտել արդիական հիմնախնդիրները, ինչպես նաև գնահատել առկա միտումները և առաջադրել լուծումներ:

258. 2005 թ. դեկտեմբերի 14-15-ին Ծաղկաձորի Գրողների ստեղծագործական տանը ԱՅԻՆ Բաց ֆորումի կողմից կազմակերպվեց սեմինար-քննարկում՝ 2004 թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված ԱՅԻՆ իրականացման գործընկերության համաձայնագրով ընտրված երեք միջնաժամկետ (2005-2007 թթ.) գերակա ուղղությունների վերաբերյալ: Քննարկումը նպատակ ուներ ներկայացնել և ամփոփել 2005 թ. ընթացքում ԱՅԻՆ գերակայությունների իրականացման արդյունքները՝ դիտարկելով դրանք գործընկերության կայացման համատեքստում: Հանդիպմանը մասնակցում էին համաձայնագիրը ստորագրած գործընկերներ, ԱՅԻՆ փորձագետներ, ճյուղային նախարարությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլ շահագրգիռ կողմեր: Քննարկվեցին ԱՅԻՆ իրականացման գործընկերային համաձայնագրով ամրագրված մասնավորապես ԱՅԻՆ համակարգող խորհրդի, աշխատանքային խմբի և Բաց ֆորումի 2005 թ. ընթացքում գործընկերության արդյունքները: Նախապես Բաց ֆորումի նախաձեռնությամբ իրականացված հետազոտության արդյունքում, քննարկման մասնակիցներին ներկայացվեցին նաև ԱՅԻՆ գործընկերային համաձայնագրի կողմերի հետ խորքային հարցազրույցների արդյունքները, ինչպես նաև ԱՅԻՆ աշխատանքային խմբի և համակարգող խորհրդի նիստերի արձանագրությունների վերլուծությունները:
259. Քննարկումներից հետո գործընկերները ներկայացրեցին մի շարք առաջարկություններ և ձևակերպումներ: Գործընկերության արդյունավետության բարձրացման և մեխանիզմների կատարելագործման առումով կարևորվեցին իրազեկվածության բարձրացման և կողմերի միջև կապերի ամրապնդման խնդիրները: Առաջարկվեց ԱՅԻՆ ոլորտային նախարարությունների միջոցառումների պլանը համապատասխանեցնել մարզային, համայնքային կարիքների գնահատման պահանջարկին: Մեխանիզմների կատարելագործման առումով առաջարկվեց նաև մշակել և ընդունել սոցիալական գործընկերության մասին օրենք և հստակեցնել միջհամայնքային, ներհամայնքային և եկեղեցու միջև գործընկերության ուղիները: Իրազեկվածության տեսանկյունից առաջարկվեց ուսուցման ապահովում սեմինարների անցկացման և խորհրդատվության միջոցով, ինչպես նաև կարևորվեց վերլուծական և տեղեկատվական կենտրոնների ստեղծման անհրաժեշտությունը: Կապերի ամրապնդման վերաբերյալ նշվեց ԱՅԻՆ կառավարման համակարգում ընդգրկված կողմերի իրավունքների և պարտականությունների հստակեցման և հետադարձ կապի ապահովման խնդիրը:
260. Գործընկեր կողմերի իրավունքների և պատասխանատվությունների տեսանկյունից առաջ եկան հետևյալ նկատառումները: Միջոցառումների իրականացման պատասխանատվությունը դրված է միայն կառավարական հատվածի վրա, իսկ վերահսկողությունը որևէ հատվածի կողմից չի իրականացվել: Առաջարկվեց վերանայել համաձայնագիրը և հստակ ներառել կողմերի պատասխանատվությունները: Նշվեց նաև, որ ԱՅԻՆ-ն հստակեցված չէ ըստ տարածքների և թիրախների, որի պատճառով էլ անհնար է դարձել գործառույթների բաժանումն ըստ համաձայնագրի կողմերի: Ուստի և կառավարման արդյունավետության բարձրացման նպատա-

- կով առաջարկվեց ստեղծել ԱՅԻՆ ծրագրերի իրականացման գրասենյակ (ԾԻԳ):
261. Գործընկեր կողմերի մասնագիտական կարողությունների և հմտությունների, ինչպես նաև ԱՅԻՆ գործընթացի թափանցիկության բարձրացման նպատակով առաջարկվեց ստեղծել մոնիտորինգի իրականացման միասնական համակարգ, իրականացնել մոնիտորինգի և վերահսկողության հմտությունների ուսուցում, մասնավորապես, ապահովել մարզային լրատվամիջոցների ակտիվ մասնակցությունը:
262. Միաժամանակ, Բաց ֆորումի կողմից կազմակերպված քննարկումներին զուգահեռ 2005 թ. հուլիս-օգոստոս ամիսներին ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունում հասարակական քննարկումներ են կազմակերպվել նվիրված ԱՅԻՆ 2004 թ. իրականացված աշխատանքների առանձին ոլորտային հաշվետվություններին (կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն, գյուղատնտեսություն, բնապահպանություն, գործարար միջավայր և ՓՄՁ զարգացում):

ԱՅԻՆ և երկրին դոնորների օժանդակության ծրագրերի համաձայնեցումը

263. Դոնոր հանրության ներկայացուցիչները իրենց ակտիվ մասնակցությունն են ցուցաբերել ԱՅԻՆ փաստաթղթի քննարկումների ժամանակ՝ ներկայացնելով իրենց մոտեցումները հիմնախնդիրների լուծման ուղղությամբ: Դա լրացուցիչ հիմքեր է ստեղծել ԱՅԻՆ իրականացման գործընթացում ՀՀ կառավարություն-դոնոր համայնք համագործակցության ակտիվացման ուղղությամբ: Կառավարությունը վստահություն է ձեռք բերել, որ դոնոր համայնքը, մասնակցելով ծրագրի մշակման քննարկումներին, իր ակտիվ մասնակցությունը կցուցաբերի նաև դրա իրականացմանը, իսկ դոնոր համայնքը ԱՅԻՆ-ով հստակ ուղերձ է ստացել Հայաստանի հանրության կողմից երկրի առաջիկա տարիների զարգացման գերակայությունների վերաբերյալ:
264. Որպես ԱՅԻՆ իրականացման գործընթացում համագործակցության խորացման առաջին քայլ կարելի է համարել այն փաստը, որ երկրում գործող հիմնական դոնորների կողմից երկրին օժանդակության միջնաժամկետ ծրագրերի ուղղությունները սահմանելուց հաշվի են առնվել ԱՅԻՆ գերակայությունները: Դրանց շարքում են Համաշխարհային բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը, Միացյալ Թագավորության միջազգային զարգացման նախարարությունը և Եվրոպական Միությունը:
265. ԱՅԻՆ հիման վրա **Արժույթի միջազգային հիմնադրամի** կողմից համապատասխան ճշգրտումներ են կատարվել «Աղքատության կրճատում և տնտեսական աճ» (PRGF) ծրագրի նպատակադրումներում և գերակայություններում:
266. **Համաշխարհային բանկի** կողմից «Երկրին օժանդակության ռազմավարությունը» հաստատվել է 2004 թ. հունիսին, որի շրջանակներում ԱՅԻՆ-ով առաջարկվող միջոցառումների լայն շարքից հիմնականում կարևորվում է երեք ուղղություն, այդ թվում՝ մասնավոր հատվածի առաջատար դերակատարությամբ տնտեսական աճի ապահովում, դեպի աղքատները տնտեսական աճի ուղղորդում, ոչ եկամտային

աղքատության կրճատում, որոնք լավագույնս համապատասխանում են Համաշխարհային բանկի համեմատական առավելություններին և փոխլրացնում են մյուս դոնորների կողմից իրականացվող նախաձեռնությունները: Այս ոլորտներից յուրաքանչյուրի գծով, «Երկրին օժանդակության ռազմավարությամբ» որպես ելակետ վերցվում են երկրի զարգացման երկարաժամկետ նպատակներ, որոնց հիման վրա սահմանվում են այն առանձին արդյունքները, որոնք պետք է հասանելի դառնան «Երկրին օժանդակության ռազմավարությամբ» ծրագրի քառամյա ժամանակահատվածում:

267. ԱՅՈՒՆ իրականացման գործընթացին և Հազարամյակի նպատակներին հասնելու ճանապարհին Հայաստանին օժանդակելու նպատակով **Միավորված ազգերի կազմակերպության** կողմից մշակվել է 2005-2009 թթ. երկրին աջակցության ռազմավարություն (UNDAF), որը նախապատրաստվել է ԱՅՈՒՆ նպատակներին և գերակայություններին համապատասխան: Ըստ մշակված ռազմավարության, ՄԱԿ-ը ԱՅՈՒՆ գերակայությունների շարքից կկենտրոնանա՝ աղքատության կրճատման և անհավասարության մեղմման, հիմնական սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության բարձրացման, կառավարության մարմինների հաշվետվողականության և թափանցիկության բարձրացման, բնական ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման և բնապահպանական նորմերին բավարարող տեխնոլոգիաների խրախուսման ուղղություններում:
268. **Եվրոպական Միության Տասիս** ծրագրի շրջանակներում ընդունված 2004-2005 թթ. Հայաստանի միջոցառումների ծրագրի հիմնական խնդիրներն են՝ աջակցել Հայաստանի Հանրապետությանը ինստիտուցիոնալ, իրավական և վարչական բարեփոխումների իրականացման և անցումային փուլի սոցիալական հետևանքների հաղթահարման գործում: Վերջիններս, նույնպես, որպես գերակայություն, արտացոլված են ԱՅՈՒՆ-ում:
269. ԱՅՈՒՆ հաստատումից հետո, **Միացյալ Թագավորության միջազգային զարգացման նախարարության** (ՄԹ ՄՁՆ) կողմից իրականացվող երկկողմանի ծրագրերը համապատասխանեցվել են ԱՅՈՒՆ քաղաքականություններին և գերակայություններին: Դրա վկայությունն է ՄԹ ՄՁՆ 2004-2007 թթ. Կենտրոնական Ասիայի, Հարավային Կովկասի և Մոլդովայի տարածքային աջակցության ծրագիրը, որի մշակման գործընթացում ԱՅՈՒՆ-ն Հայաստանի ծրագրերի համար համարվել է ուղեցույց փաստաթուղթ:
270. 2004-2008 թթ. **ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության** Հայաստանին օժանդակության ռազմավարությունը ձևավորվել է 2003 թ., որի մշակման աշխատանքները իրականացվել են ՀՀ կառավարության հետ սերտ համագործակցության արդյունքում: Ռազմավարությունում սահմանվել են հինգ ռազմավարական նշանակետեր՝ մրցունակ մասնավոր հատվածում զբաղվածության մասշտաբների ընդլայնումը, էներգետիկ և ջրային պաշարների ապահով և կայուն մատչելիության ապահովումը, բարելավված ժողովրդավարական կառավարումը, բարձրակարգ, կայուն առաջնային բուժօգնության ծառայությունների առավել մատչելիության ապահովումը և սոցիալական ապահովության բարելավում: Վերջիններս լիովին համապատասխանում են ԱՅՈՒՆ-ի շրջանակներում առաջնային համարվող ուղղություններին:

271. **Հազարամյակի մարտահրավերների հիմնադրամի** տնօրենների խորհրդի կողմից Հայաստանի ընտրությունը՝ որպես Հազարամյակի մարտահրավերների հիմնադրամին օժանդակություն ստանալու համար դիմելու իրավունք ստացած երկիր, նույնպես կարելի է համարել ԱՅԴՈՒ իրականացման գործընթացում համագործակցության լրացուցիչ հնարավորություն:
272. ՀՀ կառավարության կողմից ներկայացված Հազարամյակի մարտահրավերների հիմնադրամի շրջանակներում օժանդակության տրամադրման հայտը նախատեսում է միջոցներ նպատակաուղղել ոռոգման և համայնքային ճանապարհների ոլորտներում ռազմավարական ներդրումների կատարմանը, որոնց նպատակն է երկրի աղքատ գյուղական շրջաններում ընդլայնել գյուղատնտեսական արտադրանքի ծավալները:
273. Գյուղական շրջաններում հանրային ենթակառուցվածքների ձևաչափում աղքատության հաղթահարման յուրօրինակ ուղղվածությունը համահունչ է 2003 թ.-ի օգոստոս ամսին ընդունված կառավարության Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի հետ և անմիջական անդրադարձ է կատարում գյուղական աղքատության կրճատման խոչընդոտներին, որոնք ներկայացվում են 2004 թ.-ի սեպտեմբեր ամսին կազմված ԱՅԴՈՒ զարգացումների առաջին զեկույցի շրջանակներում:

ԱՅԴՈՒ մոնիտորինգի և գնահատման համակարգի մշակման և ներդրման ընթացքը

274. ԱՅԴՈՒ աշխատանքային խմբի կողմից Ծրագրի ընդունումից անմիջապես հետո, դեռևս 2003 թ. օգոստոսին, նախաձեռնվել էին ԱՅԴՈՒ իրականացման մոնիտորինգի և գնահատման համակարգի ձևավորման աշխատանքները: Այդ գործընթացում իրենց մշտական աջակցություն են ցուցաբերել Համաշխարհային բանկը, Գերմանիայի տեխնիկական համագործակցությունը և ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը: ԱՅԴՈՒ մոնիտորինգի և գնահատման համակարգի ռազմավարության մշակման նպատակով, 2003 թ. նոյեմբերին ԱՅԴՈՒ աշխատանքային խմբի կողմից ստեղծվել էր ԱՅԴՈՒ աշխատանքային խմբի մոնիտորինգի ռազմավարության մշակման ենթախումբ, իսկ ցուցանիշների համակարգի մշակման համար ներգրավվել էին ավելի քան 15 անկախ փորձագետներ և խորհրդատվական ընկերություն (վերջիններիս աշխատանքներին աջակցում էր ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը):
275. Նշված աշխատանքները հնարավոր եղավ ամփոփել 2004 թ. նոյեմբերին, երբ ՀՀ կառավարության թիվ 1780-Ա որոշմամբ հավանություն տրվեց ԱՅԴՈՒ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի հայեցակարգին, որով անհրաժեշտ նախադրյալներ ստեղծվեցին ծրագրի մոնիտորինգի համակարգի ներդրման համար: Հայեցակարգը հնարավորություն է ընձեռում ԱՅԴՈՒ իրականացման ընթացքում իրական գնահատականներ տալ գործընթացին ու արդյունքում անհրաժեշտ ճշգրտումներ և փոփոխություններ կատարել ԱՅԴՈՒ գերակա քաղաքականությունների ու միջոցառումների ծրագրի մեջ:

276. ԱՅՈՒՄ մոնիտորինգի ցուցանիշների համակարգը ներառում է 177 ցուցանիշ, որից 36-ը նպատակային են, իսկ 141-ը՝ գործոնային, որոնք համախմբված են հետևյալ 6 առանձին խմբերում՝ (i) աղքատության կրճատում և բարեկեցության աճ, (ii) կրթություն, (iii) առողջապահություն, (iv) հիմնական հանրային ծառայություններ և բնակարանային պայմաններ, (v) քաղաքացիական մեկուսացվածություն և անհավասարություն, և (vi) բնապահպանական կայուն զարգացում:
277. Մոնիտորինգի ցուցանիշների համակարգը հնարավորինս ներդաշնակված է Հազարամյակի զարգացման ցուցանիշների շրջանակի հետ:

Աղյուսակ 19. ԱՅՈՒՄ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի ամփոփ վիճակագրություն

		Նպատակային	Գործոնային	Ընդամենը
	Ընդամենը	36	141	177
A	Աղքատություն կրճատում և բարեկեցության աճ	3	41	44
B	Կրթություն	6	23	29
C	Առողջապահություն	9	32	41
D	Հիմնական հանրային ծառայություններ և բնակարանային պայմաններ	10	12	22
E	Քաղաքացիական մեկուսացվածություն և անհավասարություն	5	27	32
F	Բնապահպանական կայուն զարգացում	3	6	9

278. ԱՅՈՒՄ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի հայեցակարգը հաստատելու մասին որոշմամբ ամրագրվել է նաև ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանն իրենց իրավասությանը վերաբերող ցուցանիշների փաստացի (այդ թվում 2001-2003 թթ. պատմական շարքի) և նպատակադրվող արժեքների ներկայացման անհրաժեշտությունը:
279. ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված 2001-2004 թթ. ցուցանիշների ամփոփման ընթացքում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը արդեն իսկ հանդիպել է որոշակի դժվարությունների, ինչը հնարավորություն չի տվել ամբողջությամբ հավաքագրել ԱՅՈՒՄ մոնիտորինգի ցուցանիշների 2001-2004 թթ. վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև բոլոր ցուցանիշների գծով սահմանել առաջիկա տարիների համար նպատակային արժեքները: Այսպես, ԱՅՈՒՄ մոնիտորինգի ցուցանիշների համակարգով նախատեսված 177 ցուցանիշներից մոտ 40 ցուցանիշների գծով տեղեկատվությունը 2001-2004 թթ. կտրվածքով ամբողջությամբ բացակայել է, իսկ 30-ից ավելի ցուցանիշների գծով տեղեկատվությունը մասամբ է առկա եղել:
280. Ինչ վերաբերվում է առաջիկա տարիների համար մոնիտորինգի ցուցանիշների նպատակային արժեքների սահմանմանը, ապա Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով սահմանված են եղել 24 ցուցանիշների գծով նպատակադրումները իսկ համապատասխան պետական կառավարման մարմինները նպատակադրումներ են սահմանել ևս 28 ցուցանիշների համար:
281. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով նպատակադրումներ

են սահմանված ցուցանիշների կտրվածքով ԱՅՈՒՄ իրականացման 2004 թ. առաջընթացի գնահատումը ըստ ԱՅՈՒՄ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի հայեցակարգով նախատեսված մեթոդաբանության (ներկայացված է Աղյուսակ 20-ում):

**Աղյուսակ 20. ԱՅՈՒՄ իրականացման 2004 թ. առաջընթացի գնահատականը⁴⁹
 ըստ ԱՅՈՒՄ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի հայեցակարգով
 նախատեսված մեթոդաբանության**

N	Ցուցանիշի անվանումը	2001	2004		Առաջընթացի գնահատականը
		Բազային տարի	Ծրագիր	Փաստացի	
A1	Աղբատների թվաքանակ, տոկոս՝ առկա բնկաչության թվաքանակի նկատմամբ	50.9	43.7	39.0	5 (Կատարված)
A2	Ծայրահեղ աղբատների թվաքանակ, տոկոս՝ առկա բնկաչության նկատմամբ	16.0	14.7	7.2	5 (Կատարված)
A3	ՀՆԱ՝ 1 շնչի հաշվով, հազ. դրամ՝ 2001 թ. հաստատուն գներով	365.8	470.5	520.0	5 (Կատարված)
a1.5	Ավելացված արժեքը գյուղատնտեսությունում, փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ՝ տոկոս	11.7	2.8	14.5	5 (Կատարված)
a1.6	Գյուղատնտեսական արտադրության ապրանքայնությունը, տոկոս	49.9	46.5	55.7	5 (Կատարված)
a1.7	Գյուղատնտեսության վարկավորումը, տոկոս՝ գյուղատնտեսության ավելացված արժեքի նկատմամբ	9398.0	3.4	2.0	2 (Թերի)
a1.8	Համախմբված բյուջեի ծախսերը գյուղատնտեսության բնագավառում, մլն դրամ	17019.3	17000.0	16473.8	4 (Լավ)
a1.9	Պետական կապիտալ ծախսերը ոռոգման համակարգում, մլն դրամ	6162.7	17200.0	4348.3	1 (Վատ)
a1.10	Համախմբված բյուջեի ծախսերը ճանապարհային տնտեսության բնագավառում, մլն դրամ / կմ	0.5	1.7	1.7	5 (Կատարված)
a1.13(ii)	Կրթության և առողջապահության ոլորտներում պետական ծախսեր, համախմբված բյուջեի ընդհանուր ոչ տոկոսային ծախսերի նկատմամբ՝ տոկոս	16.3	18.0	18.8	5 (Կատարված)
a2.1	Եկամուտների համակենտրոնացման Ջինիի գործակից	0.528	0.498	0.387	5 (Կատարված)
a2.3	Ամենահարուստ (20 տոկոս) բնակչության եկամուտներ, ամենաաղքատ (20 տոկոս) բնակչության եկամուտների նկատմամբ՝ անցած	-	13.5	10.6	5 (Կատարված)
a2.4	Միջին ամսական կենսաթոշակը աղքատության ընդհանուր զծի նկատմամբ, տոկոս	38.1	58.0	59.4	5 (Կատարված)
a2.5	Միջին ամսական սոցիալական կենսաթոշակը աղքատության պարենային զծի նկատմամբ, տոկոս	45.9	61.3	39.7	2 (Թերի)
a2.7	Կենսաթոշակների վճարման զծով համախմբված բյուջեի ծախսեր, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ	2.8	2.9	2.8	4 (Լավ)
a2.8	Ընտանեկան նպաստի զծով պետական բյուջեի ծախսեր, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ	1.4	1.0	0.9	4 (Լավ)
b1.1(ii)	Համախմբված բյուջեի ծախսերը հանրակրթությունում, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ	1.7	1.9	1.8	4 (Լավ)
c1.1(ii)	Համախմբված բյուջեի ծախսերը առողջապահության ոլորտում, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ	1.3	1.5	1.3	3 (Բավարար)
e2.1	Պետական բյուջեի հարկային եկամուտներ, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ	14.4	15.3	14.1	4 (Լավ)
e2.4	Միջին աշխատավարձի աճ (եկամտահարկի բազա), տոկոս՝ նախորդ տարվա նկատմամբ	10.6	8.9	15.9	5 (Կատարված)
	ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԸՆԴՀԱՆՐԱՎԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ				4.23 (Լավ)

282. Թեև աղյուսակում բերված գնահատականը սահմանափակ թվով ցուցանիշների ընդհանրացում է, այնուամենայնիվ այն որոշակի ընդհանրական պատկերացում տալիս է ԱՅՈՒՄ իրականացման ուղղությամբ 2004 թ.-ին արձանագրված առաջընթացի վերաբերյալ:

⁴⁹ Գնահատումը իրականացվել է միայն այն ցուցանիշների կտրվածքով, որոնց համար ԱՅՈՒՄ-ով սահմանված են եղել 2004 թ. նպատակադրումները

283. ԱՅՈՒՄ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի հայեցակարգը հաստատելու մասին որոշմամբ ամրագրվել է նաև ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանն իրենց իրավասությանը վերաբերող ցուցանիշների փաստացի և նպատակադրվող արժեքների ներկայացման, ինչպես նաև ԱՅՈՒՄ իրականացման վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների ձևի և հաշվետվություններին ներկայացվող պահանջների սահմանման անհրաժեշտությունը:
284. ԱՅՈՒՄ իրականացման վերաբերյալ պետական կառավարման մարմինների կողմից 2004 թ. ներկայացված առաջին հաշվետվությունների ամփոփման գործընթացը ցույց տվեց, որ հաշվետվություններն իրենց ձևաչափով բավականին տարբերվում էին միմյանցից, ինչը էականորեն բարդացնում էր դրանց ամփոփման աշխատանքները: Հենց նշված հանգամանքով էր պայմանավորված հաշվետվությունների միասնական ձևաչափի սահմանման անհրաժեշտությունը, որի պահանջը և ամրագրվեց ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշման մեջ:
285. Այդ նպատակով, ՀՀ կառավարության 2005 թ. հուլիսի 14-ի թիվ 1002-Ն որոշմամբ հաստատվեց ԱՅՈՒՄ իրականացման վերաբերյալ ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևը և հաշվետվություններին ներկայացվող պահանջները:

Աղյուսակ 21. ԱՅՈՒՄ միջոցառումների իրականացման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևաչափ

Գերակարգություն	Քաղաքականության ուղղություն	Միջոցառում	Հաշվետու տարվա արդյունք	Հաշվետու տարվա արդյունքի մոնիտորինգի գործունային ցուցանիշ	Իրականացումներ	Միջոցառման ֆինանսական կոժեքը	Ֆինանսավորումը (ըստ ֆինանսավորող կառույցների)	Ակնկալվող արդյունքի մոնիտորինգի ցուցանիշ			Միջոցառման արդյունավետության գնահատականը ըստ ներքին(համայնի) և նպատակային ատդիտի
								2004թ	2005թ	2006թ	

286. Կառավարությունն ԱՅՈՒՄ մոնիտորինգի բազմաչափ համակարգի արդյունավետ գործունությունը կարևորում է ոչ միայն դրված նպատակների ապահովման առաջընթացի գնահատման, այլ նաև ԱՅՈՒՄ վերանայումներն առավել արդյունավետ և նպատակային դարձնելու տեսանկյունից: Առաջին հերթին, դա ենթադրում է որակյալ տեղեկատվական հոսքերի կայունության և մատչելիության ապահովում:
287. ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված 2001-2004 թթ. ցուցանիշների ամփոփման ընթացքում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից արդեն իսկ արձանագրվել են որոշակի խնդիրներ, որոնք կապված

են ինչպես որոշ ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանության ոչ հստակ լինելու հանգամանքով, այնպես էլ մի շարք ցուցանիշների հաշվարկման փորձառության պակասի հետ: Այդ նպատակով ԱՅՈՒՄ առաջիկա վերանայումից հետո կառավարությունը ճշգրտումներ կկատարի ԱՅՈՒՄ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի հայեցակարգում, որոնք կբխեն ԱՅՈՒՄ վերանայման արդյունքում առաջ եկած մոր պահանջներից, ինչպես նաև ցուցանիշների ամփոփման ընթացքում ծագած խնդիրներից:

ԱՅՈՒՄ ցուցանիշների հնարավոր փոփոխություններ և ճշգրտումներ

288. Կարելի է փաստել, որ 2003-2004 թթ. զարգացումների արդյունքում ձևավորված տնտեսական իրավիճակն ավելի բարենպաստ է եղել, քան ակնկալվում էր ԱՅՈՒՄ կանխատեսած սցենարով: 2005 թ. առաջին կիսամյակում ևս տնտեսությունը զարգացել է ավելի արագ տեմպերով և, ամենայն հավանականությամբ, 2005 թ. ևս կեզրափակվի ավելի բարձր տնտեսական աճով, քան ի սկզբանե կանխատեսվում էր:
289. Ջարգացումների նման ընթացքն առաջ է բերում ԱՅՈՒՄ ծրագրային հիմնական ցուցանիշների կանխատեսումների վերանայման անհրաժեշտություն: Հիմնական ցուցանիշներից մեկը, որի կանխատեսումները պետք է վերանայվեն՝ **համախառն ներքին արդյունքն** է: Վերջին երկու տարիներին ՀՆԱ-ի աճը կազմել է տարեկան շուրջ 12 տոկոս: Ջարգացման ներկայիս միտումների և դրանք պայմանավորող գործոնների վերլուծությունը վկայում է, որ միջնաժամկետ հատվածի (2005-2008 թթ.) ԱՅՈՒՄ կանխատեսումները պետք է վերանայվեն՝ պայմանավորված ինչպես բազային տարվա (2003 թ.) ցուցանիշի փոփոխությամբ, այնպես էլ միջնաժամկետ հատվածում ԱՅՈՒՄ սցենարի հիմքում դրված ենթադրություններից ակնկալվելիք տարբերություններով: Ըստ կանխատեսումների, տնտեսական աճի տեմպը այդ ժամանակահատվածում 1-2 տոկոսային կետով ավելի բարձր կլինի, քան նախատեսված էր ԱՅՈՒՄ մակրոտնտեսական շրջանակով: Ընդ որում, այդ հավելաճն ապահովվելու է հիմնականում արդյունաբերության, շինարարության և ծառայությունների ոլորտների հաշվին:
290. Տնտեսական զարգացման ավելի արագ տեմպերը անդրադառնալու են նաև **բնակչության եկամուտների** վարքագծի վրա: 2004 թ. ընթացքում եկամուտներն աճել են բավականին արագ տեմպերով, և ԱՅՈՒՄ սցենարի համեմատ որոշակի արագացում ակնկալվում է նաև միջնաժամկետ հատվածում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է զբաղվածությունից եկամուտների վարքագծին, մինչդեռ գյուղատնտեսական մթերքների վաճառքից եկամուտների պարագայում կանխատեսվում է, որ դրանց վարքագիծը, առնվազն, շատ չի տարբերվի ԱՅՈՒՄ շրջանակներում կանխատեսվածից: Այդուհանդերձ, եկամուտների ցուցանիշների կանխատեսումները պահանջում են լրացուցիչ հետազոտություններ:
291. Ցուցանիշների հաջորդ խումբը, որին անդրադարձ է կատարվում այս համատեքստում, դա բյուջեի եկամուտներն ու ծախսերն են: ՀՆԱ ավելի արագ աճը հան-

գեցրել է նաև հարկման բազայի ընդլայնմանը, որի արդյունքում առաջացել է **հարկային եկամուտների** անվանական արտահայտությամբ ավելացման ուղղությամբ վերանայման անհարժեշտություն: Ինչ վերաբերում է հարկային եկամուտներ – ՀՆԱ հարաբերակցության կանխատեսումներին, ապա ակնկալվում է, որ, ամենայն հավանականությամբ, դրանք առաջիկա 2-3 տարիներին որոշ չափով ցածր կլինեն ԱՅՈՒՄ սցենարով նախատեսվածից՝ մեծամասամբ պայմանավորված այն հանգամանքով, որ հավելյալ տնտեսական աճն այդ տարիներին ապահովվելու հարկումից ազատված ոլորտներում: Այդուհանդերձ, հարկային եկամուտներ – ՀՆԱ հարաբերակցության փոփոխության միտումները մնալու են նույնը՝ տարեկան ավելանալով 0.3-0.4 տոկոսային կետով:


292. Անվանական արտահայտությամբ բյուջեի ռեսուրսային փաթեթի ընդլայնումը բերելու է **ծախսային ծրագրերի** համապատասխան ճշգրտումների: Կառավարությունն այդ ճշգրտումները կատարելու է՝ առաջնորդվելով ԱՅՈՒՄ գերկայություններով: Հավելյալ ռեսուրսների հիմնական բաժինը կլանելու են **սոցիալական ոլորտները** (առողջապահություն, կրթություն, սոցիալական պաշտպանություն) և **ենթակառուցվածքները**: Կառավարությունը ոլորտների միջև համապատասխան վերաբաշխումները կատարելու է՝ հնարավորինս ապահովելու գերակա ուղղություններով ծախսերի՝ ՀՆԱ նկատմամբ հարաբերակցության տեսքով ԱՅՈՒՄ ծրագրային ցուցանիշները: Մասնավորապես, առաջին հերթին դա վերաբերում է սոցիալական ծախսերին, և համապատասխան մոտեցումն արդեն կիրառվել է 2006-2008 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրում:
293. Պետական ծախսերի ծրագրերի վերանայմանը կարող են հանգեցնել նաև **արտաքին օժանդակության** տեսքով մուտքերի՝ ծրագրվածի համեմատ հնարավոր փոփոխությունները: Մասնավորապես, վերանայման անհարժեշտություն կառաջանա ԱՄՆ կառավարության «Հազարամյակի մարտահրավերներ» նախաձեռնության շրջանակներում ակնկալվելիք լրացուցիչ միջոցների ներհոսքով, ինչպես նաև պայմանավորված Լինսի հիմնադրամի նոր ծրագրի իրականացմամբ: Այս պարագայում ևս կառավարությունը պետական ծախսերի ծրագրերի միջև միջոլորտային և ներօլորտային համապատասխան վերաբաշխումները կատարելու է՝ հիմք ընդունելով ԱՅՈՒՄ գերկայություններն ու նպատակները:
294. Հաշվի առնելով վերջին երկու տարիների բնական աճի դրական միտումները՝ բնակչության թվաքանակի կանխատեսումները նույնպես վերանայման կարիք ունեն: Բացի այդ, կանխատեսվելու է **մշտական բնակչության թվաքանակը** և առկա բնակչության հիմքի վրա հաշվարկված ԱՅՈՒՄ համապատասխան ցուցանիշները վերահաշվարկվելու են՝ հիմք ընդունելով մշտական բնակչության թվաքանակը⁵⁰:
295. Անդրադառնալով **անհավասարությունը** բնութագրող ցուցանիշների հնարավոր վերանայումներին անհարժեշտ է փաստել, որ, ըստ 2003 և 2004 թթ. տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների, արձանագրվել է անհավասարության աննախադեպ կրճատում: Դա, բնականաբար, պահանջում է ինչպես ծախսերի, այնպես էլ եկամուտների Ջինիի գործակիցների ծրագրային ցուցանիշների վերանա-

⁵⁰ ԱՅՈՒՄ շրջանակներում օգտագործվել է առկա բնակչության թվաքանակի ցուցանիշը, որի գծով փաստացի տեղեկատվությունը մատչելի է միայն մարդահամարի տարիներին:

յում՝ պայմանավորված 2004 թ. փաստացի և ծրագրային ցուցանիշների միջև տարբերություններով: Այդուհանդերձ, այս ցուցանիշների վերանայման պարագայում կառավարությունը դերսևորելու է զգուշություն՝ հատկապես, երբ դիտարկվում են անհավասարության կրճատման միջնաժամկետ հատվածի միտումները:

296. Մակրոտնտեսական և բյուջետային շրջանակների հիմնական ցուցանիշների վերանայումը որոշակի տեղաշարժերի է հանգեցնելու նաև **աղքատության** մակարդակը բնութագրող ցուցանիշների վարքագծում՝ հատկապես, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ 2003 և 2004 թթ., ըստ նախնական գնահատականների, աղքատությունը կրճատվել է ավելի արագ, քան ծրագրվել էր ԱՅԴԻ-ում: Ընդ որում, աղքատության կրճատման հիմնական գործոններ են հանդիսացել տնտեսական աճով պայմանավորված աղքատ բնակչության եկամուտների առաջանցիկ աճն ու սոցիալական տրանսֆերտների ավելացումը: Այսինքն, հիմնական ազդեցությունն ապահովվել է ԱՅԴԻ-ում առանձնացված գործոնների հաշվին: Սույն հաշվետվության շրջանակներում աղքատության մակարդակի վերանայումը կատարվել է 2004 թ. փաստացի ցուցանիշի նկատմամբ համապատասխան ճշգրտումներ կատարելով՝ ենթադրելով աղքատության կրճատման միտումների ԱՅԴԻ սցենարի անփոփոխություն (տե՛ս Գծանկար 3): Թեև այս փուլում կարելի է ակնկալել աղքատության մակարդակի կրճատման որոշակի արագացում՝ առնվազն միջին ժամկետ հեռանկարում, այդուհանդերձ, աղքատության կրճատման միտումների ճշգրտմանը կառավարությունը կանդրադառնա ԱՅԴԻ առաջին վերանայման ընթացքում:

Գծանկար 3. Աղքատության մակարդակի վերանայված կանխատեսում 2004-2015 թթ.



297. Նպատակային այլ ցուցանիշների վերանայմանը կառավարությունը անդրադառնալու է ԱՅԴԻ առաջիկա վերանայման ընթացքում: Այդ ժամանակ անհրաժեշտության դեպքում կվերանայվեն այն ցուցանիշները, որոնց գծով ԱՅԴԻ-ում կա

քանակական նպատակադրում: Բացի այդ, կառավարությունը քանակական թիրախներ կսահմանի նաև ԱՅՈՒՆ մոնիտորինգի ցուցանիշների համակարգում ընդգրկված նպատակային և հիմնական գործոնային ցուցանիշների համար, որոնց գծով ԱՅՈՒՆ-ում դրանք բացակայում են: Կախված նրանից, թե ինչքանով են ցուցանիշները զգայուն ժամանակի մեջ՝ նպատակադրումները կատարվելու են հետևյալ եղանակներից մեկով՝ (i) թիրախները սահմանվելու են յուրաքանչյուր տարվա կամ (ii) ժամանակային որոշակի հորիզոնի⁵¹ (առաջիկա 3 կամ 5 տարիների) համար: Ընդ որում, որոշ ցուցանիշների գծով թիրախների սահմանումը կարող է կատարվել կամ միջակայքի, կամ վերին (ներքին) սահմանի տեսքով:

⁵¹ Օրինակ՝ t (բազային) տարվա նկատմամբ $(t+5)$ տարում U ցուցանիշի գծով x տոկոս աճի ապահովում:

ԶԱՎԵԼՎԱԾ 1. Աղքատության հաղթահարման առաջընթացը. ամփոփ ցուցանիշներ

	2002	2003	2004	
	Փաստացի		ԱՀՌԾ	Փաստ.
(i) ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ				
Աղքատների թվաքանակը, տոկոս՝ բնակչության թվաքանակի նկատմամբ	49.7	42.9	43.7	39.0
<i>այդ թվում՝ շատ աղքատներ, տոկոս՝ բնակչության թվաքանակի նկատմամբ</i>	<i>13.1</i>	<i>7.4</i>	<i>14.7</i>	<i>7.2</i>
Եկամտունների համակենտրոնացման Ֆինիի գործակիցը	0.451	0.438	0.498	0.413
Ամենաաղքատ բնակչության եկամուտները, տոկոս՝ ամենահարուստների եկամուտների նկատմամբ	6.8	7.5	7.4	9.4
(ii) ՄԱՐԿԱՑԻՆ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ				
Միջնակարգ (ընդհանուր) դպրոցն ավարտողների թիվը, տոկոս՝ թղթակցող տարում առաջին դասարան ընդունվածների նկատմամբ	66.5	67.9
Մանկական մահացության մակարդակը 1 000 կենդանածինների հաշվով ²	16.7	13.6	...	13.0
Մայրական մահացության մակարդակը 100 000 կենդանածինների հաշվով ^{2,3}	33.5	22.0
Ջրամատակարարման հասանելիության մակարդակը, տոկոս ⁴	89.1	91.0	...	91.5
քաղաքային բնակչության համար	97.0	97.8	...	96.7
գյուղական բնակչության համար	77.0	80.6	...	81.2
(iii) ԿՆՆՄԱՍԱԿԱՐԿԱՅ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՆՄԵՐ				
ՀՆԱ՝ 1 շնչի հաշվով, հազար դրամ	424.2	505.9	533	590.1
ՀՆԱ՝ 1 շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	623.0	874.0	904	1106.0
Միջին ամսական աշխատավարձ, դրամ	26,444	33,871	32,078	42,008
Նվազագույն աշխատավարձ, դրամ	5,000	5,000	12,767	13,000
Աղքատության պարենային գիծը՝ 1 շնչի հաշվով, դրամ	7,516	7,742	7,827	8,954
Աղքատության ընդհանուր գիծը՝ 1 շնչի հաշվով, դրամ	12,261	12,629	12,767	14,595
Սոցիալական ծախսեր, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ	7.8	7.9	9.3	8.4
<i>այդ թվում՝ կրթություն, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ</i>	<i>2.2</i>	<i>2.2</i>	<i>2.7</i>	<i>2.5</i>
<i>առողջապահություն, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ</i>	<i>1.2</i>	<i>1.2</i>	<i>1.5</i>	<i>1.3</i>
<i>սոցիալական պաշտպանություն, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ</i>	<i>4.5</i>	<i>4.5</i>	<i>5.1</i>	<i>4.5</i>
(iv) ՄԱԿՐՈՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ				
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	1,362	1,625	1,609	1,896
Իրական ՀՆԱ, փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ՝ տոկոս	13.2	14.0	6.0	10.1
Ներդրումներ, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ	21.7	24.3	20.6	24.0
ՍԳԻ (միջին), փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ՝ տոկոս	1.1	4.7	3.0	7.0
Փոխարժեք (միջին), դրամ/ԱՄՆ դոլար	573.4	578.8	589.3	533.5
Ապրանքների և ծառայությունների արտահանում, մլն ԱՄՆ դոլար	698	903	840	985
Ապրանքների և ծառայությունների ներմուծում, մլն ԱՄՆ դոլար	-1,107	-1406	-1,256	-1514
Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ	-6.2	-6.7	-5.8	-4.5
(v) ՀԱՐԿԱԲԱՑՈՒԹՅԱՑԻՆ ՀԱՏՎԱԾ ⁵				
Ընդամենը եկամուտներ և շնորհներ, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ	22.4	21.5	21.5	19.4
<i>այդ թվում՝ հարկային եկամուտներ, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ</i>	<i>17.8</i>	<i>17.2</i>	<i>18.8</i>	<i>17.2</i>
Ընդամենը ծախսեր և գուտ վարկավորում, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ	23.3	22.4	24.1	21.1
<i>այդ թվում՝ կապիտալ ծախսեր, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ</i>	<i>4.7</i>	<i>5.2</i>	<i>5.4</i>	<i>3.4</i>
Ընդամենը հաշվեկշիռ, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ	-0.9	-0.9	-2.6	-1.6

¹ 2000 թ. ցուցանիշ: ² Կանխատեսումների հիմքում դրված է 77 ԱԿԾ պաշտոնական տեղեկատվությունը: ³ Եռամյա միջին: ⁴ ԱՅՌԾ կանխատեսումները հիմնված են բնակելի միավորում կենտրոնացված ջրամատակարարման առկայության ցուցանիշների վրա և ԱՅՌԾ առաջիկա վերանայման ընթացքում այդ ցուցանիշների կանխատեսումը համապատասխանաբար կձեռնարկվի: ⁵ Զամախմբված բյուջեի ցուցանիշներ: Աղբյուրը՝ 77 ԱԿԾ, 77 ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, 77 ԿԲ և ԱՅՌԾ կանխատեսումներ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Համախառն ներքին արդյունքն՝ ըստ հիմնական ճյուղերի

	2002	2003	2004	
	Փաստացի		ԱՀՈՇ	Փաստ.
մյուս դրամ՝ ընթացիկ գներով				
Համախառն ներքին արդյունք	1,362.5	1624.6	1 609.4	1 896.4
Արդյունաբերություն	256.9	313.2	337.9	361.3
Գյուղատնտեսություն	318.8	349.2	348.9	429.4
Շինարարություն	172.2	255.4	237.9	293.7
Տրանսպորտ և կապ	83.6	95.7	103.8	112.9
Առևտուր	144.1	177.7	148.3	212.4
Այլ ճյուղեր	255.0	285.8	270.2	327.0
Ջուտ անուղղակի հարկեր	131.9	147.7	162.4	159.8
տոկոսային փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ				
Համախառն ներքին արդյունք	13.2	14.0	6.0	10.1
Արդյունաբերություն	13.9	15.6	8.0	2.1
Գյուղատնտեսություն	3.8	4.2	2.8	14.5
Շինարարություն	41.5	45.5	-0.4	13.4
Տրանսպորտ և կապ	-1.7	8.3	6.0	16.9
Առևտուր	19.7	14.1	11.4	10.5
Այլ ճյուղեր	12.0	8.6	6.8	12.2
Ջուտ անուղղակի հարկեր	14.3	7.9	12.6	2.4
տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ				
Համախառն ներքին արդյունք	100.0	100.0	100.0	100.0
Արդյունաբերություն	18.8	19.3	21.0	19.1
Գյուղատնտեսություն	23.4	21.5	21.7	22.6
Շինարարություն	12.6	15.7	14.8	15.5
Տրանսպորտ և կապ	6.1	5.9	6.4	6.0
Առևտուր	10.6	10.9	9.2	11.2
Այլ ճյուղեր	18.7	17.6	16.8	17.2
Ջուտ անուղղակի հարկեր	9.7	9.1	10.1	8.4
մասնակցությունը ՀՆԱ աճին, տոկոսային կետ				
Համախառն ներքին արդյունք	13.2	14.0	6.0	10.1
Արդյունաբերություն	2.8	2.9	1.7	0.4
Գյուղատնտեսություն	1.0	1.0	0.6	3.1
Շինարարություն	4.0	5.7	-0.1	2.1
Տրանսպորտ և կապ	-0.1	0.5	0.4	1.0
Առևտուր	2.0	1.5	1.1	1.1
Այլ ճյուղեր	2.1	1.6	1.1	2.2
Ջուտ անուղղակի հարկեր	1.4	0.8	1.2	0.2

Աղբյուրը՝ ԳՀ Ազգային վիճակագրական ծառայություն և ԱՅՈՇ կանխատեսումներ:

ՀԱՎԵԼՎԱԾ 3. Համախառն ներքին արդյունքի օգտագործումը

	2002	2003	2004	
			Փաստացի	ԱՀՌԾ Փաստ.
	<i>մյուր դրամ՝ ընթացիկ գներով</i>			
Համախառն ներքին արդյունք	1,362.5	1624.6	1 609.4	1896.4
Վերջնական սպառում	1,349.8	1518.9	1 522.8	1796.5
Մասնավոր	1,213.8	1353.1	1 334.9	1593.1
Պետական	136.1	165.8	187.9	203.4
Կապիտալի համախառն կուտակում	295.2	394.1	331.9	453.9
Ապրանքների և ծառայությունների գուտ արտահանում	-234.8	-290.5	-245.3	-286.4
Վիճակագրական շեղում	-47.8	2.2	86.9	-67.5
	<i>տոկոսային փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ</i>			
Համախառն ներքին արդյունք	13.2	14.0	6.0	10.1
Վերջնական սպառում	8.2	7.6	7.9	10.9
Մասնավոր	8.9	7.2	8.6	10.2
Պետական	2.2	14.1	3.2	16.2
Կապիտալի համախառն կուտակում	22.5	30.7	-3.4	12.3
Ապրանքների և ծառայությունների գուտ արտահանում	-1.8	22.2	-4.2	-5.6
	<i>տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ</i>			
Համախառն ներքին արդյունք	100.0	100.0	100.0	100.0
Վերջնական սպառում	99.1	93.5	94.6	94.7
Մասնավոր	89.1	83.3	82.9	84.0
Պետական	10.0	10.2	11.7	10.7
Կապիտալի համախառն կուտակում	21.7	24.3	20.6	24.0
Ապրանքների և ծառայությունների գուտ արտահանում	-17.3	-17.9	-15.2	-15.1
Վիճակագրական շեղում	-3.5	0.1	5.4	-3.6

Աղբյուրը՝ ԳՂ Ազգային վիճակագրական ծառայություն և ԱՅՌԾ կանխատեսումներ:

**ՀԱՎԵԼՎԱԾ 4. Համախմբված բյուջեի գործառնությունները
(հաշվեգրման սկզբունքով)**

	2002	2003	2004	
	Փաստացի		ԱՀՌԾ	Փաստ.
<i>մյրդ դրամ</i>				
Ընդամենը եկամուտներ և շնորհներ	305.6	348.9	346.2	368.6
Ընդամենը եկամուտներ	258.1	297.4	312.9	354.8
Հարկային եկամուտներ	242.3	279.3	302.2	326.1
Ոչ հարկային և կապիտալ եկամուտներ	15.7	18	10.7	28.7
Շնորհներ	47.5	51.5	33.3	13.7
Ընթացիկ	17.1	11.6	9.7	13.7
Կապիտալ	30.5	39.9	23.7	0.0
Ընդամենը ծախսեր և գուտ վարկավորում	317.7	363.3	388.1	399.8
Ընթացիկ ծախսեր	243.5	271.5	294.0	323.9
<i>որից՝ տոկոսավճարներ</i>	<i>15.7</i>	<i>11.4</i>	<i>12.6</i>	<i>9.8</i>
Կապիտալ ծախսեր	63.8	85.2	86.9	65.4
<i>որից՝ կապիտալ շնորհների հաշվին</i>	<i>30.5</i>	<i>39.9</i>	<i>23.7</i>	<i>-</i>
Չուտ վարկավորում	10.4	6.6	7.2	10.5
Ընդհանուր հաշվեկշիռ	-12.1	-14.4	-41.9	-31.2
Ֆինանսավորում	12.1	14.4	41.9	31.2
Ներքին աղբյուրներ	-24.7	-24.4	2.7	-3.1
Արտաքին աղբյուրներ	36.7	38.8	39.2	34.3
<i>տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ</i>				
Ընդամենը եկամուտներ և շնորհներ	22.4	21.5	21.5	19.4
Ընդամենը եկամուտներ	18.9	18.3	19.4	18.7
Հարկային եկամուտներ	17.8	17.2	18.8	17.2
Ոչ հարկային և կապիտալ եկամուտներ	22.4	21.5	21.5	19.4
Շնորհներ	3.5	3.2	2.1	0.7
Ընթացիկ	1.3	0.7	0.6	0.7
Կապիտալ	2.2	2.5	1.5	0.0
Ընդամենը ծախսեր և գուտ վարկավորում	23.3	22.4	24.1	21.1
Ընթացիկ ծախսեր	17.9	16.7	18.3	17.1
<i>որից՝ տոկոսավճարներ</i>	<i>1.2</i>	<i>0.7</i>	<i>0.8</i>	<i>0.5</i>
Կապիտալ ծախսեր	4.7	5.2	5.4	3.4
<i>որից՝ կապիտալ շնորհների հաշվին</i>	<i>2.2</i>	<i>2.5</i>	<i>1.5</i>	<i>-</i>
Չուտ վարկավորում	0.8	0.4	0.4	0.6
Ընդհանուր հաշվեկշիռ	-0.9	-0.9	-2.6	-1.6
Ֆինանսավորում	0.9	0.9	2.6	1.6
Ներքին աղբյուրներ	-1.8	-1.5	0.2	-0.2
Արտաքին աղբյուրներ	2.7	2.4	2.4	1.8
Հուշագրային հոդվածներ				
<i>Սոցիալական ծախսեր¹, %՝ ՀՆԱ նկատմամբ</i>	<i>7.8</i>	<i>7.9</i>	<i>9.3</i>	<i>8.4</i>
<i>Առաջնային հաշվեկշիռ², %՝ ՀՆԱ նկատմամբ</i>	<i>0.3</i>	<i>-0.2</i>	<i>-1.8</i>	<i>-1.1</i>

¹Ներառված են կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության գծով ծախսերը:
²Սահմանվում է որպես ընդհանուր հաշվեկշիռ՝ առանց տոկոսավճարների:
 Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ՍԱԴՀ և ԱՀՌԾ կանխատեսումներ:

**ՀԱՎԵԼՎԱԾ 5. Համախմբված բյուջեի գործառնություններ.
արտաքին ֆինանսավորման պահանջը**

	2002	2003	2004	
	Փաստացի		ԱՀՈԾ	Փաստ.
	<i>մլրդ դրամ</i>			
1. Ընդամենը ներքին եկամուտներ	258.1	297.4	312.9	354.8
Հարկային եկամուտներ	242.3	279.3	302.2	326.1
Ոչ հարկային և կապիտալ եկամուտներ	15.7	18.0	10.7	28.7
2. Ներքին ֆինանսավորում	-24.7	-24.4	2.7	-3.1
3. Ընդամենը հասանելի ներքին ռեսուրսներ (1+2)	233.4	273.0	315.6	351.7
4. Ընդամենը ծախսեր և գուտ վարկավորում	317.7	363.3	388.1	399.8
Ընթացիկ ծախսեր	243.5	271.5	294.0	323.9
<i>որից՝ տոկոսավճարներ</i>	<i>15.7</i>	<i>11.4</i>	<i>12.6</i>	<i>9.8</i>
Կապիտալ ծախսեր	63.8	85.2	86.9	65.4
Չուտ վարկավորում	30.5	6.6	7.2	10.5
5. Արտաքին ֆինանսավորման պահանջը (4-3)	84.3	90.3	72.5	48.1
Շնորհներ	47.5	51.5	33.3	13.7
Ընթացիկ	17.1	11.6	9.7	13.7
Կապիտալ	30.5	39.9	23.7	0.0
Վարկեր/Փոխառություններ	36.7	38.4	39.2	34.9
	<i>մլն ԱՄՆ դոլար</i>			
1. Ընդամենը ներքին եկամուտներ	450,1	513,8	531,0	665,0
Հարկային եկամուտներ	422,6	482,6	512,8	611,2
Ոչ հարկային և կապիտալ եկամուտներ	27,4	31,1	18,2	53,8
2. Ներքին ֆինանսավորում	-43,1	-42,2	4,6	-5,8
3. Ընդամենը հասանելի ներքին ռեսուրսներ (1+2)	407,0	471,7	535,6	659,2
4. Ընդամենը ծախսեր և գուտ վարկավորում	554,1	627,7	658,6	749,4
Ընթացիկ ծախսեր	424,7	469,1	499,0	607,1
<i>որից՝ տոկոսավճարներ</i>	<i>27,4</i>	<i>19,7</i>	<i>21,4</i>	<i>18,4</i>
Կապիտալ ծախսեր	111,3	147,2	147,4	122,6
Չուտ վարկավորում	53,2	11,4	12,2	19,7
5. Արտաքին ֆինանսավորման պահանջը (4-3)	147,0	156,0	123,1	90,2
Շնորհներ	82,8	89,0	56,5	25,7
Ընթացիկ	29,8	20,0	16,4	25,7
Կապիտալ	53,2	68,9	40,2	0,0
Վարկեր/Փոխառություններ	64,0	66,3	66,5	65,4
	<i>տոկոս ՀՆԱ մկատմամբ</i>			
1. Ընդամենը ներքին եկամուտներ	18,9	18,3	19,4	18,7
Հարկային եկամուտներ	17,8	17,2	18,8	17,2
Ոչ հարկային և կապիտալ եկամուտներ	1,0	1,1	0,7	1,5
2. Ներքին ֆինանսավորում	-1,8	-1,5	0,2	-0,2
3. Ընդամենը հասանելի ներքին ռեսուրսներ (1+2)	17,1	16,8	19,6	18,5
4. Ընդամենը ծախսեր և գուտ վարկավորում	23,3	22,4	24,1	21,1
Ընթացիկ ծախսեր	17,9	16,7	18,3	17,1
<i>որից՝ տոկոսավճարներ</i>	<i>1,2</i>	<i>0,7</i>	<i>0,8</i>	<i>0,5</i>
Կապիտալ ծախսեր	4,7	5,2	5,4	3,4
Չուտ վարկավորում	0,8	0,4	0,4	0,6
5. Արտաքին ֆինանսավորման պահանջը (4-3)	6,2	5,6	4,5	2,5
Շնորհներ	3,5	3,2	2,1	0,7
Ընթացիկ	1,3	0,7	0,6	0,7
Կապիտալ	2,2	2,5	1,5	0,0
Վարկեր/Փոխառություններ	2,7	2,4	2,4	1,8

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ՍԱԴՀ և ԱՅՈԾ կանխատեսումներ:

ՀԱՎԵԼՎԱԾ 6. Համախմբված բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման հիմնական խմբերի (հաշվեգրման սկզբունքով)

	2002	2003	2004	
	Փաստացի		ԱՀՈՇ	Փաստացի
	<i>մյր զրամ</i>			
Ընդամենը ծախսեր	317.7	363.3	388.1	399.8
Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ	28.7	36.2	35.5	45.0
Պաշտպանություն, հասարակական կարգի պահպանություն և ազգային անվտանգություն	54.0	65.1	66.8	76.8
Կրթություն և գիտություն	32.4	38.3	46.1	51.7
Առողջապահություն	16.0	19.6	24.9	24.6
Սոցիալական ապահովություն և սոց. ապահովագրություն	61.8	74.1	84.4	86.6
Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն	11.1	15.8	9.4	10.4
Բնակարանային-կոմունալ տնտեսություն	22.7	41.7	24.0	17.4
Վառելիքային և էներգետիկ համակարգ	8.4	7.0	13.5	9.6
Գյուղատնտեսություն, անտառային և ջրային տնտեսություն, ձկնաբուծություն	15.3	19.9	17.0	16.5
Արդյունաբերություն, հանքային հանածոներ, շինարարություն և բնապահպանություն	0.7	-6.3	6.5	3.2
Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ	24.2	30.6	25.3	19.1
Այլ ծախսեր	42.3	21.3	34.8	38.9
<i>որից՝ պետական պարտքային գործառնություններ</i>	<i>15.7</i>	<i>11.4</i>	<i>12.6</i>	<i>9.8</i>
	<i>տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ</i>			
Ընդամենը ծախսեր	23.3	22.4	24.1	21.1
Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ	2.1	2.2	2.2	2.4
Պաշտպանություն, հասարակական կարգի պահպանություն և ազգային անվտանգություն	4.0	4.0	4.1	4.0
Կրթություն և գիտություն	2.4	2.4	2.9	2.7
Առողջապահություն	1.2	1.2	1.5	1.3
Սոցիալական ապահովություն և սոց. ապահովագրություն	4.5	4.6	5.2	4.6
Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն	0.8	1.0	0.6	0.5
Բնակարանային-կոմունալ տնտեսություն	1.7	2.6	1.5	0.9
Վառելիքային և էներգետիկ համակարգ	0.6	0.4	0.8	0.5
Գյուղատնտեսություն, անտառային և ջրային տնտեսություն, ձկնաբուծություն	1.1	1.2	1.1	0.9
Արդյունաբերություն, հանքային հանածոներ, շինարարություն և բնապահպանություն	0.1	-0.4	0.4	0.2
Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ	1.8	1.9	1.6	1.0
Այլ ծախսեր	3.1	1.3	2.2	2.1
<i>որից՝ պետական պարտքային գործառնություններ</i>	<i>1.2</i>	<i>0.7</i>	<i>0.8</i>	<i>0.5</i>
	<i>տոկոս՝ ընդամենը ծախսերի նկատմամբ</i>			
Ընդամենը ծախսեր	100.0	100.0	100.0	100.0
Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ	9.0	10.0	9.1	11.3
Պաշտպանություն, հասարակական կարգի պահպանություն և ազգային անվտանգություն	17.0	17.9	17.2	19.2
